

ՆԱՏԱՃԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳՐՈՂՆ ՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՔԸ...

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵԶ ԵՎ ԱՆԴԻՆ

«Դիզակ պլյուս» իրատարակչություն
Ստեփանակերտ-2017

ՀՏԴ 821.19.0

ԳԱՐ 83.3(5Հ)

Պ 797

Գիրքը հրապարակվում է ՀՀՀ ԿԳՄ նախարարության երաշխավորությամբ և բանասպեհծուի Նելլի Ավակովա Գրիգորյանի ֆինանսական օժանդակությամբ:

**Նվիրում է Լևոն Աղյանի զավակների՝
Մհերի և Զորայրի հիշապակին**

Պողոսյան Նատաշա

Պ 797 Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին/

Ն. Պողոսյան.- Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ.,
2017.- 144 էջ:

«Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին» գրքի հեղինակ Նատաշա Պողոսյանը համապարփակ քննության է առել անվանի գրող Լևոն Աղյանի գեղարվեստական արձակը: Ուսուցչուին այդ վերլուծություններն ու քննությունները կատարել է աշակերտների մասնակցությամբ: Գրողի ստեղծած իրականությունը, նարդկային զգացումներն ու իդեալները նորովի են համադրվում ուսուցչուին գեղարվեստական խոսքում ու համոզնուներում: Նա կարողացել է ներկայացնել գրողի ասելիքի ճշմարտությունը, հայրենիքը սիրելու, ճշմարիտ ապրումն ու խոհին հարազատ լինելու մրումը, ինչը՝ որպես արժեք, փոխանցել է աշակերտներին, իսկ հիմա նաև՝ ընթերցողների լայն շրջանակներին:

ՀՏԴ 821.19.0

ԳԱՐ 83.3(5Հ)

ISBN 978-9939-1-0602-1

© Նատաշա Պողոսյան, 2017

**ՈՒՍՈՒՑԻՉՆ ՈՒ ԳՐՈՂԸ՝
ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԶՐՈՒՅԱԿԻՑՆԵՐ**

Անվանի գրող Լևոն Աղյանի գեղարվեստական արձակը տարութեան տեղին ունի արդի հայ գրականության մեջ: Անցյալ դարի 60-ականներին գրականություն մտած արցախածին գրողի գրական միջավայրը հիմնականում Արցախն է, իսկ գրական կերպարների նախատիպերը՝ արցախցու տեսակը խտացնող նարդիկ: Շուրջ 60-ամյա գրական գործունեության ընթացքում (որի մեծ մասն անցել է Բաքու քաղաքում) գրողը մի քանի տասնյակ ժողովածուներ է հանձնել ընթերցողի դաստին: Գրողի ստեղծագործական ճակատագիրը, սակայն, բեկվել է՝ կապված 20-րդ դարի վերջին Աղրբեջանի հայարնակ վայրերում սկիզբ առած հայկական ջարդերի և կազմակերպված տեղահանությունների հետ: Որպես իր ժողովրդի անբաժանելի մասնիկ՝ Լևոն Աղյանն իր վրա կրել է այդ դաժան ժամանակների բոլոր անդրադարձումները՝ լինելով բնավեր ու տարագիր, կորցնելով ձեռագիր տասնյակ ստեղծագործություններ, իր վրա առնելով ճակատագրի ամենադաշտան հարվածները: Արձակագրի մեջ, սակայն, չի լրել գրելու աստվածատուր ջիղը: Անմարդկային փորձությունների միջով անցած գրողը տարագրության մեջ շարունակել է գրականացնել աղրբեջանահայության ջարդուփշուր արված հավատը, արյունոտված երազանքների փշուանքները, ընդհանրության մեջ՝ այն գեհենը, որի մեջ հայտնվել են այդ երկիրն իրենց հայրենիքը համարած և իրենցով շենացրած մարդիկ: Որպես ականատես գրող՝ Լ. Աղյանը ստեղծել է «Հեռացող եզերք» (1990) վեպը, որն այդ ժամանակներում ապրած մարդու կյանքի գիրքն է: Վեպն ուշացումով է հասել ընթերցողին: Շուրջ քանինազ տարի անց միայն տպագրվեց և ունեցավ լուրջ արձագանքներ ու արժևորումներ: «Խսկական իմաստով, - գրում է ակադեմիկոս Ս. Սարինյանը, - «Հեռացող եզերքը» ժամանակակից վեպ է՝ սինկրետիկ կառուցվածքով, ուր պատումի էպիկական ձևույթը համատեղվում է քնարական և իմաստափրական ստորոգումներով» («Գրական թերթ», 2017թ., ապրիլ, թիվ 12):

Լ.Ա. վաստակավոր մանկավարժ Նատաշա Պողոսյանի գիրքը «Հեռացող եզերքի» բազմաթիվ արձագանքներից մեկն է՝ իր խտության ու ինքնատիպության մեջ խրախուսելի: Մեր ժամանակներում ստեղծվող արժեքավոր շատ գրական գործեր դուրս են մնում գրականության դպրոցական ծրագրերից: Այս գիրքը գալիս է հուշելու, նաև սովորեցնելու,

Նախաշա Պողոսյան

թե ինչպես ծրագրից դուրս գրողներին դարձնել աշակերտության սեփականությունը: Ծիշտ հասկանալով գեղարվեստական գրականության գործառույթները՝ գրականության վաստակաշատ ուսուցչուին տարրեր եղանակներ ու մեթոդներ է հուշում գրողի գրական ժառանգությունն աճող սերնդին ծիշտ մատուցելու համար: Գրքում տեղ գտած բազմարիվ աշակերտների գրավոր արձագանքներն ուսուցչուին հաջողությունների վկայություններն են:

Ուշագրավ են նաև «Իրիկնային աղջամուղ» և «Անձրևից հետո» ժողովածուներում ընդգրկված մի շարք ստեղծագործությունների վերլուծությունները, որոնցում գրողի ստեղծած իրականությունը, մարդկային զգացումներն ու իդեալները նորովի են սինթեզվում ուսուցչուին գեղարվեստական խոսքում ու համոզմունքներում: Պատկերավորման արտահայտչական միջոցներով, բառապաշտի շերտավորման նույրը զգացողությամբ նա կարողացել է հմտորեն ներկայացնել Լևոն Աղյանի աշխարհընկալումն ու կենսազգացողությունը, գրողի ասելիքի արժեքայնության նշանողը և դա մանկավարժի բարձր վարպետությամբ փոխանցել աշակերտներին: Մանկավարժի իր վերլուծություններում ուսուցչուին կարողացել է հավոր պատշաճի ներկայացնել Աղյանի ստեղծագործությունների բեմատիկայի արժանիքները՝ բնությունից մինչև մարդկային կերպարներ, զգացմունքներ ու ապրումներ: Ուսուցիչն ու գրողը դառնում են անտեսանելի գրուցակիցներ՝ իրական ու անդին, և այդ շիրականացված գրույցը օրգանապես կապվում է տեքստին ու ենթատեքստին՝ այն դարձնելով նպատակային, դիպոլի և ներզործուն: Գրողի տառապանքը դառնում է ուսուցչուի տառապանքը, հեռացող եզերքում ապրող մարդկանց հոգոր՝ նրա հոգոր: Լևոն Աղյանի ստեղծագործությունները դարձնելով լայն քննարկման նյութ՝ Նատաշա Պողոսյանը կարողացել է ներկայացնել գրողի ասելիքի ծշմարտությունը, հայրենիքը սիրելու, ծշմարիտ ապրումն ու խոհին հարազատ լինելու մղումը: Ծշմարտացիություն ու թափանցիկություն, գերծ սենտիմենտալ ու մակերեսային դիտարկումներից. այսպիսին է ուսուցչուի ասելիքը, ինչը՝ որպես արժեք, փոխանցել է աշակերտներին: Նման մեթոդական ձեռնարկները ցպահանջ են մեր դպրոցներում՝ գրականության դասերի արդիականությունը ապահովելու համար:

Ժաննա ԲԵԳԼԱՐՅԱՆ
Բանասիրական գիրությունների թեկնածու, դոցենտ

**ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՒՐ՝
ՀԵՌԱՎՈՐ ԵԶԵՐՔԻՑ**

Արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս Լևոն Ռոկանի Աղյանը ծնվել է Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: Ավարտել է հարևան Առաջաձոր գյուղի միջնակարգ դպրոցը, հետագայում ուսումը շարունակել Աղբքեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական և Երևանի պետհամալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետներում: Քսանինգտարի աշխատել է Աղբքեջանի գրողների միությունում՝ որպես «Գրական Աղբքեջան» հանդեսի արձակի քածնի վարիչ, այ-

նուինեան՝ բաժինների վարիչ, գլխավոր խմբագրի պաշտոնակատար: Եղել է այդ հանդեսի խմբագրական կողեզրի անփոփոխ անդամը, Աղբքեջանի գրողների միության հայկական բաժանմունքի փոխնախագահ, Աղբքեջանական ՍՍՀ մամուլի պետական կոմիտեի խմբագրական խորհրդի անդամ, «Արմյանսկի վեստնիկ» ռեգիստրացիայի գլխավոր խմբագիր, Պյատիգորսկ քաղաքի հայկական համայնքի ղեկավարի տեղակալ:

Նա հեղինակ է իմքնուրույն ու թարգմանական ավելի քան երեսուն արձակ գրքերի՝ «Կյանքի ճանապարհին», «Հեռու լեռներում», «Իմ երկրի մարդիկ», «Կորսաված բարդիներ», «Այն հեռավոր ամռանը», «Տունը գյուղի ծայրին», «Զորում աղմկում է գետը», «Աշնանային ցրտեր», «Մոռացված երգ», «Դարձ ի շրջանս յուր», «Հեռացող եզերը», «Իրիկնային աղջամուղ», «Անձրևից հետո» և այլն: Գրքերը լույս են տեսել նաև այլ լեզուներով:

Բարվի հայտնի դեպքերից հետո տարագրվել է Ռուսաստան, ապրել Լենինգրադում, Պյատիգորսկում, Սոչիում: Վերջին տարիներս բնակվում է Սանկտ-Պետերբուրգում: ԽՍՀՄ, Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի և ԼՂՀ գրողների միությունների անդամ է:



Նախաշահ Պողոսյան



իրավուս, իրազման մը գլամուրյան, պլազման մի զույգի: Այնտեղ ընդհատված երազանքներ կան, սովորաբար պահանջվութեան հումքար-փետրվար կա այնտեղ, իրական մի տիտուր պատմություն... Եվ ահա կամաց, շատ կամաց էջերն եմ թերթում այդ գործի: Հեռավոր եզրքից հանկարծ ճիշդ են հասնում մեզ՝ ահավոր մղավաճար, մի նոր սարսափ ահարկու...»

Ու նորից ցավատանց նայում եմ նկարներին... Եվ հանկարծ մեկի ձայնն եմ լսում.
 «Պետք չէ...», որ կարծես սաստում է ինձ, բայց նորից շարունակում եմ պատմել, և ահա նորից մի քանի ձայներ.
 «Պետք չէ, պետք չէ, տիկին Պողոսյան...»:

Ես լրում եմ մի պահ, իմ դիմաց նստած աղջիկներն են խոլ հառաչում, արցունքներն են սրբում աշքերից, տղաները գլուխները զած, թվում է՝ շունչ չկա կորիրի:

Այս անգամ փակում եմ զիրքը, որտեղ տառապանք կա մեծ, կորոված մի գեղեցիկ սեր, անհոյս երազներ, հեռացող մի տխոր եզերը: Նորից եմ նայում տառապած սրտի գեղատեսքը որդիների լուսե նկարներին...Հոգիս ճշում է ցավից, ավերված սիրո տուս կա այնտեղ, հոգու կոկիծ կա ցավոտ, արզութափ հիշողություն, որ հուշարձան են դարձել...

Հայկական լրագրական՝ Հոս Անջելեսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-02-22
«Ջրաբերդ», թիվ 04, 16-29 փետրվար, 2016 թ.



ՀԱՅ ՏԱՐԱՎԻՐ ԼԵՎՈՆ ԱԳՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՉԱՆ ԴԱՐՁԱԾ «ՀԵՌԱՑՈՂ ԵԶԵՐՔԸ»

Իմ մանկավարժական գործունեության լճաբացքում դեռ որևէ զգի նկատմամբ այսքան հետաքրքրություն չէի նկատել, որ քան աշակերտների և ուսուցիչների մոտ եմ նկատում: Այս օրերին այն անցնում է ձեռքից ձեռք, միայն թե ընթերցեն: Օրեր առաջ իմ ձեռքի միակ գիրքը շրջում էր դասարանից դասարան, պարզվեց՝ շրջկենտրոնի գրադարանում եղած երկու գիրքն էլ հապշտապ վերցրել են մեր աշակերտները:

Փորձեցի օտար ափերում ապրող գրողի հետ կապ հաստատելով՝ մի քանի գիրք հայրայթել ընթերցասերների համար: Մի՞թե սա ուրախալի փաստ չէ, որ «Հեռացող եզերքը»՝ իր սույն տպաքանակով, այսքան շատ ընթերցողներ ունի, բայց դրա կողքին դեղնած, փոշոտված բազմաթիվ գրեթեր կան, գուցե նաև մի քանի անգամ վերահրատարակված, որ երբեւ ընթերցող չեն ունեցել: Որպես դպրոցի ուսուցչուի՝ փորձում եմ իմ կարծիքն արտահայտել, որ ցանկալի եմ համարում օժանդակեն արձակագիր Լևոն Աղյանի «Հեռացող եզերք» վեպի վերահրատարակմանը:

Լևոն Աղյան արձակագիր գրողին դեռ գիտեի դպրոցական տարիներից, բայց այս փետրվարյան օրերին իմ դասարաններում դասաժամերս սկսվեցին ու վերջացան նրա «Հեռացող եզերքով», իսկ դրա կողքին նա մեզ հետ էր որպես երկու որդիներ կորցրած հայր, որ իր տառապանքով իմաստնություն էր հաղորդում, կոփում մեր հոգին ու միտքը:

Ես այս օրերին ցավագին ճիշեր լսեցի, արցունքուտ աչքեր տեսա դպրոցականների, ցավից կծկված սրտեր, հառաչանքներ, որ իմն էին նաև:

Տարիներ առաջվա մեր հարևան երկրի եղերական ոճրագործությունը հայերի նկատմամբ՝ սիրո գեղեցիկ ողբերգական պատմությամբ, մեզ կապել էր իրական կյանքի մի նոր ողբերգության հետ, այստեղ հերոսներ կային իրական, որ եղել են, բայց իհմա չկան, ու այդ կերպարների մեջ իրենց լուսե հայացքներով մեր հիշողություններում հավերժ կմնան հուշարձան դարձած ՄՀԵԹ և ԶՈՐԱՅՐ ԱԳՅԱՆՆԵՐԸ՝ մի հիասքանչ «Հեռացող եզերքով», որ այս օրերին դարձավ մերը արցախցի՝ մեզ հայրենակից արձակագիր Լևոն Աղյան ԳՐՈՂԻ ու հրաշալի ՄԱՐԴՈՒ կերպարով:

«Լուսարար», թիվ 4-5, 2016 թ.

Իմ փոքրիկ գրադարանում «Հեռացող եզերքն» իր արժանվույն տեղն ունի, բայց փետրվարյան այս օրերին, երբ մոտենում է մեկ այլ եղեռնի հիշատակի օր, այն դառնում է իմ ձեռքի գիրքը: Դա իրական մի պատմություն է, սիրավեա մի գույգի, որ պատահաքար հանդիպել են իրար այս մեծ աշխարհի հարյուրավոր ճանապարհների խաչմերուկներից մեկում, առանց իմանալու, թե ինչ է սպասվում իրենց այդ պատահական հանդիպումից հետո:

11-րդ դասարանում եմ, դաս պատմելու համար ձեռք բարձրացրած աշակերտին հասկացնում եմ, որ ասելիք ունեմ, և կամաց, շատ հանգստ իմ պայուսակից հանում եմ մի գիրք՝ շրե կազմով, սիրահար գույգի լուսանկարով...Սի ամբողջ քաղաք կա այնտեղ փոփած, մի ամբողջ կապուտաչ ծով կա լորա կողդին, և վերևից երևացող երկնքի լազուրում մի անուն՝ ԼԵՎՈՆ ԱԴՅԱՆ, ու բարձրահարկ շենքերի գիսավերնում թառած մի տիխուր «Հեռացող եզերք»: Գրողի անունը ծանոթ էր շատերին, և ահա աշակերտուիհներից մեկը հապատությամբ բարձրաձայնում է՝ նա մեր գյուղից է, մյուսները զարմացած նայում են նրան, ու ես բացում եմ էջը, որ կարդամ մի փոքրիկ պատմություն իրական, մի կյանք գրողի մասին, որ ծնվել է մեզանից ոչ հեռու մի հրաշալի գյուղում, ստվորել է նա մեկ այլ հարևան գյուղի դպրոցում, ուղիղ քառորդ դար ապրել է այժմ մեզ թշնամի երկրում, բայց երբ այնտեղ հայերի մի նոր եղեռն է եղել, մի կերպ փրկվել է այդ գեհենից ու հիմա ապրում է մեկ ուրիշ հեռավոր եզերքում:

Իմ դասը տարբերվեց այդ օրը: Գիտեի, որ փետրվարյան սպանդի մասին նրանց ստեղծագործական մտքերում նոր ծնված անհանգիստ ապրումներ կլինեն, ցավից հառաջող ձայներ..., ու ես փակեցի գիրքը, այն նորից բացելո՞ւ իմ աշակերտներին տված խոստումով: Եվ հաջորդ օրն այն նորից բացվեց՝ գրողին ուղղված ցավալի տողերով. «Հարգելի՛ Լևոն Աղյան, համոզված եմ, որ տագնապած և հուզախոռվ հոգով եք գրել այս վեպը, բայց ես էլ քարացած ու խոռվահոյց հոգով եմ ընթերցում, մարմինս դողում է սարսափից, երբ լսում եմ զրիերի աղերսող ձայնը: Իմ կարծիքով, այս գիրքը պետք է տարածվի ամենուր, որպեսզի բոլորն իմանան, թե ինչպես մի գայլի ոհմակ դաժանաքար հոշոտեց մի ամբողջ գառան հոտ արյունոտ թաքվում և Սումգայիթում»/Գասպար-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

յան Էդիտա/ «Մարդկության դեմ իրականացված ոճրագործությունները չեն արժանանում անաշառ գնահատականի, այսպիսի համարձակ գործները միայն կարող են օգնել՝ թղթին հանձնած իրական պատմությամբ, որ հետագայում նման ոճրագործությունների կրկնություն չինի» /Բաղրյան Իննա/ «Ես շատ հավանեցի «Հեռացող եզերքը», այնքան ճշգրիտ ու շոյող քնքշանքով է նկարագրվում ամեն ինչ, որ դրսում թափվող ձյան սառը փաթիլներից ցրտաշունչ դարձած մթնոլորտը չի ազդում ներքնաշխարհին տաքության վրա: Նոր եմ սկսել ընթերցել վեպը, բայց հոգոս հարազատ է թվում, մեծ է ձգողական ուժը և ուզում եմ հենց այսօր մինչև վերջ կարդալ այս գիրքը»/Անդրյան Անգելինա/ «Գիրքը կարդացի սրտի անհանգիստ տրոփյունով, մեկընդեմ արցունքներս երկշուր դրում էին թարթիչներիս վրա... Ինչքա՞ն նախանձելի ու գեղեցիկ սիրո պատմություն է, կներեն, սիրտ իմ, չեմ ուզում քեզ նեղացնել, չեմ մտածում, որ այդքան ուժզին ու խորը կարձագանքես Լեռնի և Ունայի սիրո ողբերգությանը: Այս պահից մտորում եմ՝ երանի թե դառնայի հայտնի դերասանութիւն, ֆիլմ նկարահանվեր, Ունայի դերում լինեի, ու այն տարածվեր աշխարհեաշխարհ»/Հովսեփյան Լիլիթ/:

12-րդ դասարանում եմ: Զեռիս նորից «Հեռացող եզերքն» է, ու կամաց-կամաց էջերն եմ թերթում այդ գրքի: Անցած դարավերջի մի սոսկալի իրադարձություն, որ եղավ արյունոտ մի երկրում, այնտեղ, ուր հայեր են ապրել մաքուր ու ազնիվ տքնանքով: Այո՛, մի նոր եղեռն է եղել հայերի, իր էջերում այդ մասին է պատմում այս գիրքը, այնտեղ ընդհատված երազանքներ կան, սոսկալի տառապանք կա հայերի, արյունոտ հունվար-փետրվար կա այնտեղ, իրական մի տիսուր պատմություն:

Դասի թեմային համահունչ չէ իմ խոսքը, ու դասարանի լրությունը ճեղքում է իմ ծայնը, որ վարանոտ էր ու շատ ցավալի: Սի պահ չեմ շնչում կարծես, ուզում եմ լսելի դառնա անհանգիստ տրոփյունը սրտիս: Ես պատմությունն էի պատմում այն հեռավոր եզերքի, որ դարձել էր «որպես իհմն ու սգերգ» մեկ ուրիշ իրական պատմության: Ես լրում եմ մի պահ, իմ դիմաց նստած աղջիկներն են խոլ հառաչում, և հանկարծ նրանցից մեկը խոսում է կարծես ինքն իր հետ «Այս անգամ ուրիշ կլինի իմ զգացածը, երբ մոտենամ զոհերի հուշարձանին, այս անգամ իմ ապրումներն ուրիշ կլինեն, երբ ծաղիկներ դնեմ այդ քարե հուշակորողին»/Ստեփանյան Իննեսա/: Ապա մեկ ուրիշն է խոսում. Տիկի՞ն Պողոս-

Նապաշա Պողոսյան

յան, մեր հայրենակից Լևոն Աղյանին փոխանցեք, որ ես սիրում եմ նրա գրած ամեն մի ստեղծագործությունը և կարդացել եմ արդեն նրա «Այն հեռավոր ամռանը»» /Հարությունյան Շուշան/:

Փակում եմ գիրքն այդ տխուր, բայց ինձ ուղղված հարցումներ կան դեռ. «Այդ գիրքն ուզում ենք ունենալ, ինչպես կարող ենք գտնել այն»:

Ես հոգված դրւու եկա դասարանից, որ մտնեմ մեկ որիշ դասարան... Ու նորից թերթում եմ այդ գիրքը, այնտեղ պատմություն կա տխուր, մի անցած հեռավոր տառապանք, այնտեղ կորսված սեր կա գեղեցիկ ու հեռացած մի տխուր եղեք:

Հաջորդ ժամին 7-րդ դասարանում եմ: Ամեն ինչ չէ, որ կարող եմ այստեղ ասել արյունոտ ոճիրից, բայց զարմացած հայացքներ կան ինձ ուղղված, և ահա լսում եմ նրանց. «Իմ կարծիքով, գրողը մեծ հայրենասեր է: Յանկալի է, որ այս գիրքը ամենուր տարածվի, որ բոլորը տեղեկանան, թե ինչ է եղել այդ արյունոտ օրերին»/Պետրոսյան Կարին/:

«Իմ ուսուցչուն միջոցով նա դարձավ իմ համար մի նոր ուսուցիչ, ես ուզում եմ ասել նրան. «Հարգելի՛ Լևոն Աղյան, Դուք այդ վեպով շատ բան ստվորեցրիք ինձ»»/Հարությունյան Հարություն/: «Հոգուս հարազատ դարձավ այն, ամբողջ հայությունը պետք է ընթերցի այդ տխուր գիրքը»/Այվազյան Դարիկո/: «Ես ուրախ եմ, որ իմ մայրիկն էլ ստվորել է այն նոյն դպրոցում, որի տաղանդավոր սաներից մեկն է եղել Լևոն Աղյանը: Ես վաղուց քաջածանոք եմ նրա անվանը, խոստանում եմ ընթերցել նրա բոլոր ստեղծագործությունները, նաև շնորհակալ եմ իմ հայրենակցին, որ այս գրքով ես հասկացա, թե ինչ է Սումգայիթը»/Հակոբջանյան Սերի/:

10-րդ դասարանի՝ իմ հաջորդ դասաժամերին աշակերտների խոսքերում անկեղծ խոստովանություն կար. «Այդ դասաժամը տարբերվեց մյուսներից: Ուսուցչուն մեզ համար ընթերցեց մի քանի հատվածներ այդ գրքից, մենք ապշած լսում էինք... Ակսեցի մտածել՝ երևի անշափ մեծ հայրենասիրությունն է ստիշել գրողին, որ նա գրի այդ գիրքը: Անհամբեր սպասում եմ, թե երբ ձեռք կբերեմ այն»/Դավթյան Տաթևիկ/:

«Առաջին հերթին այդ գրքի կազմի հրաշագեղ նկարն ինձ հետաքրքրեց, իսկ երբ ուսուցչուն խոսեց այդ գրքի մասին, դասերից հետո, երբ զնացի տուն, առաջին գործն եղավ բացել հանակարգիչը, գտնել այն ու կարդալ: Շատ ազգասեր, բարեհոգի մարդ պիտի լինի գրողը, որ ստեղծի այդախսի գիրք» /Խորայելյան Լիանա/: «Մեր դասարանում այդ դա-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

սաժամին անսովոր լսություն էր, հոգիս խռովված էր, հազիվ էի զսպում արցունքներս, այնտեղ իրականություն կար և մեծ ողբերգություն, այնտեղ շարիրին հակադրված էր մի գեղեցիկ սիրո պատմություն: Ես ուզում եմ դիմել Լևոն Աղյան գրողին: «Դուք մի հրաշալի գործ եք ստեղծել, մի տխուր հուշարձան, որ ոչ մի ահարեկչի ձեռք չի հասնի նրան»»/Գրիգորյան Սեղա/:

Ու նորից փակում եմ այդ գիրքը, որտեղ տառապանք կա մեծ, կորսված մի գեղեցիկ սեր, անհոյս երազներ, հեռացող մի տխուր եզերք: Նորից եմ նայում գրքին, որտեղ մի գեղեցիկ զույգ կա, ավերկած սիրո մի տուն, արցունքոտ մի հիշողություն, որ հուշարձան է դարձել:

«Լուսարար», թիվ 4-5, 2016 թ.

«Ազար Արցախ», 3 մարտի 2016 թ.

«Զրարերդ» թիվ 04, 16-29 լինորվար, 2016 թ.

Նալբաշա Պողոսյան

ԴԱՐԱՎԵՐՁԻ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԱՏՎԱՐՏՈՒՄ «ՀԵՌԱՑՈՂ ԵԶԵՐՔ» ԳՐՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



2016թ. փետրվարի 27-ին մասնակցեցի Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարանում կազմակերպված միջոցառմանը: Դարավերջի սումգայիթյան ոճրագործությունը դատապարտվեց Լևոն Աղյանի «Հեռացող եզերք» գրքի վերլուծության շրջանակներում՝ տարբեր ելույթ ունեցողների կողմից:

Միջոցառումը շատ հետաքրքիր էր, նպատակային, այն կազմակերպվել էր գրադարանի տնօրենն Սարգիս Սարգսյանի և գրքի խմբագիր Միքայել Հաջյանի նախաձեռնությամբ, որտեղ տեսակապով գրքի քննարկմանը մասնակցեց նաև գրողը: Ինձ էլ բախտ վիճակվեց մի քանի խոսք փոխանակել հեղինակի հետ, որ սահմանամերժ քննակավայրի դպրոցի ուսուցչուհիս սրտի անհանգիստ տրոփյունով առաջին անգամ մասնակցում է այսպիսի հանդիպման և ջերմ ողջույններ է բերել դպրոցի մանկավարժական և աշակերտական կողեկտիվների կողմից:

Շնորհակալական զգացումով դպրոցի ուսուցչուհիս հեղինակի գրքերից ստացա Ս. Հաջյանից: Օրվա գեղեցիկ տպագորությանն ավելացավ մի նոր անակնկալ, երբ դպրոց մուտք գործած գրքի մասին, իմ ելույթին ի պատասխան, միջոցառման մասնակից Զարինե Սառաջյանն ինձ հղեց այս տողերը.
«Ճատ լավն էր Զերելույթը, սրտի թրիոռով



Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

Էի լսում Զեր աշակերտների անկեղծ խոստովանությունները: Կարծես նոր սերունդը սիրո խոստովանություն էր անում հայ գրքին՝ Լևոն Ադյանի «Հեռացող եզերը»-ով....Դուք Զեր մանկավարժական գործունեությամբ հերքում եք այն կարծրատիպը, որ այսօր ընթերցողը հեռացել է գրքից...Դուք աշակերտներին մոտեցնում եք գրքին, արթնացնում նրանց մեջ սեր և հետաքրքրություն գրքի հանդեպ, որն արժանի է գովեստի»:

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ, ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՁԵԶ



Օրեր առաջ էր: Աշակերտների հետ վերջին օրերի միջոցառումներից էինք խոսում, նորից նրանց ուշադրությունը սևեռվեց մեր համերկրացի արձակագիր Լևոն Աղյանի «Հեռացող եգերք» գրքի բնարկմանը: Մի տեսակ լարված և շատ ուշադիր լսում էին:

Իմ գրույցից հետո անխոս հայացքներ եմ նկատում, կարծես ուզում են նորից լսել: Լուրյունը խախտում եմ ես. «Ինչ եք զգում այս պահին»: Անհասկանալի շարժ նկատվեց դասարանում, յուրաքանչյուրը յուրովի մտքերի մեջ ընկավ, բայց ուշադրությանս արժանացավ այս մեկը, որ ասված էր հոգով, սրտի անկեղծ թելադրանքով. «**Ճենրիհակալ եմ Ձեզ, տիկին Պողոսյան**, որ այս օրերին պատմեցիք մեզ մի մարդու մասին, ում նկատմամբ կյանքը դաժան է եղել և իր ստեղծագործություններով սիրված է բոլորի կողմից: **Ես չեմ տեսել գրողին, բայց ընդունում եմ նրան իմ պապիկի պես»:**

Ընդհատում եմ ընթերցումս, ուշադիր նայում աշակերտիս, հոգիս թերկրանքով է լցվում, բայց նաև անհանգիստ մտորում եմ, իսկ գուցե նա կյանքից նոր հեռացած իր պապիկին է կարոտում: Այդ պահին աշակերտների այս ու այն կողմից լսվող ձայներն եմ լսում...Իմ սաստող հայացքը նրանց լրեցնում է, բայց բոլով առաջ ուզում եմ կարդալ մյուս տողերը. «**Ես ինձ հանգիստ եմ զգում Ձեր դասերին, զգում եմ հոգու հանգստություն, անսահման պարզություն եմ տեսնում: Անշահ ուսուցչուիկ, Ձեր նման երկուար կան իմ կյանքում՝ Աստծված և մայրս: Ես սիրում եմ Ձեզ, տիկին Պողոսյան»:**

Անսահման սիրով նայում եմ նրան, ուզում եմ ինչ-որ խոսքեր մրմնացալ, կարծես չի ստացվում, բայց լրության մեջ գրկում եմ նրան անխոս, անշշուկ...

Հաջորդ օրը 7-րդ դասարանում հայացքս ուղղում եմ դեպի իմ աշակերտ Արեգ Ստեփանյանը, ուշադիր նայում է ինձ, իսկ ես, գուցե և զարմանալի դասարանի մյուս աշակերտների համար, նրան շնորհակալություն եմ հայտնում: Բոլորն ուշադիր նայում են մեզ, իսկ նա՝ ձեռքերը

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

դրած նստարանին, ուղիղ կեցվածքով նստած, հանկարծ բարձրաձայնում է. «Ես երեկ ճիշտ եմ ասել, տիկի՞ն Պողոսյան, շատ անկեղծ, իրոք, սիրում եմ Ձեզ...»:

«Ինչքա՞ն լավ է, որ ես ուսուցուի եմ, և նա սիրում է ինձ», - ներքուստ մտորում եմ... Նույնիքան լավ է, որ ես 5-րդ դասարանում արտասվել եմ, երբ «Գիքոր» եմ ընթերցել: Այո՛, շատ լավ է, որ այդ օրվանից ել որոշել եմ ուսուցուի դառնալ, և ինչքան շատ բաներ կան, որ ինձ ուսուցուի են դարձրել ու շարունակում են ուսուցուի պահել...

*Հայկական լրակրական Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն» 2016-03-09
<http://usarmenianews.com/am-n-1905.html>*

**ԱՅԴ ՕՐԵՐԻ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ
ԱՅԴ ԳԻՐՔՆ ԷՐ**

Մամի փոքրիկ հայրենիք է, առանց նրան չենք կարող ապրել: Մարտակերտում եմ, և իմ տան պատերի ներսում վայելում եմ մի անսովոր հանգատություն, որ մինչ այդ երբեւ չի զգացել: Քաղաքին հանդարտությունն եմ վայելում՝ խուսափելով նայել այն ավերածություններին, որ ապրիլյան պատերազմական օրերին ենթարկվել եր մեր սահմանամերձ բնակավայրը: Առավտոյան պատուհանիս տակ ծվլացող բռչունների ճռվողունից արթնացա, մի պահ ինձ թվաց՝ ոչինչ էլ չի եղել...Ժամեր տևող հանդարտությունը մի անորոշ անհանգիստ վիճակ ստեղծեց հոգումս, երբ դուրս եկա բակ ու այդտեղ էլ զգացի մեր շենքի հարակից մյուս տների խաղաղ անդրբը:

Կարուտում եմ մարդկանց ձայներին, բակում խաղացող երեխաների աղմուկ-աղաղակին ու այդ կարոտով փարզում եմ իմ անցյալ օրերին ու նորից հիշում ապրիլի 2-ը, երբ հեռախոսազանցից հնչող ձայնը մեզ համոզում էր, որ բոլոր կանայք ու երեխաները պետք է տարհանվեն:

Ռոպեներ հետո բակում կանգնած մեքենայի փարորդը շտապեցնում է մեզ: Տառապանքի դրոշնը դեմքիս, հոգիս ալեկոծված՝ փակեցի բնակարանիս դուռը, բայց նորից այն բացեցի ու մտա տուն:

Հարափոփոխ մտքերի մեջ, թե ինչ կարող եմ ինձ հետ վերցնել, հայացք գամվեց սեղանին դրված գրքերին: Լսում եմ դրսից եկող ձայները, որ շտապեցնում էին ինձ, նույնիսկ այդ պահին հրետակոծությունից կարող եր մեքենան օդ բարձրանար, բայց ես ինձ հետ վերցրի մեր հայրենակից գրող, արձակագիր Լևոն Արյանի՝ այս վերջին ամիսների իմ ձեռքի գրքերը:

Ինչո՞ւ վերցրի դրանք, գուցե այնտեղ տառապանք կար ու սարսափներ տեսած մարդու կերպա՞ր, որ իր մարդասիրությունն էր հակադրել աղքեցանական ոճրագործությանը, որ կատարվեց անցած դարավերջին Բաքվում և Սումգայիթում/«Հեռացող եզերք»/: Կամ գուցե այնտեղ հայրենի լեռների, հովիտների, ծառ ու ծաղկի հարազատ ու մտերին գոյշնե՞րը կային, որոնց մասին օրեր առաջ գրել էի իմ վերլուծությամբ ու գնահատանքի խոսքերով... /«Իրիկնային աղջամուղ»/:

Սիշտ էլ մեր սերունդները խնամել, բաքցրել ու պահել են զիրքը, ավանդել հաջորդ սերունդներին, գուցե այդ պահին այլպիսի զգացողությո՞ւն էր արթնացել ինձ մոտ, կամ գուցե մեր օրերում շատ գրքեր կան, որ զրադարակներում շարված, լրված են այդպես էլ, իսկ այս գր-

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

քերը վերջին ամիսներին ամենաշատ լնրեցողնե՞րն էին ունեցել մեր աշակերտների և ուսուցիչների շրջապատում:

Մի բան պարզ էր, որ հայ ժողովուրդն իր կենսափրությունը պահպանել է ոչ միայն հերոսամարտերով ու ռազմական մաքառումներով, այլ կյանքի սիրով, աշխատանքի ու գեղեցիկ արվեստների պաշտամունքով, հոգեկան ազատության ծարավով: Բոլորս էլ գիտենք, որ զիրքը միշտ էլ լի է եղել լույսով ու իմաստությամբ, միշտ էլ մեր ժողովուրդը աներևակայելի զնողությունների գնով փրկել է զիրքը: Ան դարերի խորքից այն մեզ է հասել՝ խավարի միջից քափառող լույսի նման դողողողալով, վտանգների ենթարկվելով: Ո՞վ գիտի, իրա՞շքն է պահում նրան, թե՞ ինչ-որ պատահականություն, քայլ սերունդները խնամում են նրան, որ այն ճառագի ամենուր, ինչպես մեր տառապալից օրերին: Եվ մենք նորից ու նորից հավատացինք մեր ապրելու ու հարատևելու անհողողդ կամքին ու հաստատակամությանը՝ համոզված, որ սա մի փոքրիկ հայրենիք է, այն մեզ ամուր թելերով կապում է այս հող ու ջրին, առանց որի չենք կարող ապրել:


ՀԳ. Այդ տառապալից օրերին, երբ բնակավայրս արկակոծվում էր, ապաստան էինք գտել մեզանից ոչ հեռու մի գյուղում: Այնտեղ այդ գրքերն ինձ չափազանց օգնեցին... Անհասկանակ մի լոություն էր ինձ պատել, միայն հեռախոսազնությունը... Չգիտեի անելիքս և ահա վերցնում, նորից կարդում եմ անցած դարավերջի՝ հայերի նկատմամբ Քաքվում և Սումգայիթում ազերիների իրականացրած դաժան ոճազործության մասին, ապա սկսում եմ գրել ականատես գրող Լևոն Ալյանի «Հեռացող եզերը» վեպի գեղարվեստական վելուծությունը... Գրիչս չէր լոում այդ օրերին, կարծես դրանով վրեժ էր լուծում սահմանը հատած թշնամուց: Այդ օրերի միակ փրկությունս գիրքն էր, բուլղը ու գրիչը, դրանք օգնեցին ինձ, ես ճգնաժամից դուրս եկա ժամանակին ու սկսեցի ապրել՝ գիտակցելով, որ շուտով նոր արշալույսներ կբացվեն մեզ համար:

Հայկական լրադրական՝ Լու Ալիջեկսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-04-10

<http://www.usarmenianews.com/am-n-2719.html>

«ՀԵՌԱՑՈՂ ԵԶԵՐՔԻ»

ՀԵՇԱՅԻՆ Ե ՏԵՐՔԸ իրական պատմություն սրբական մի զայք, որ պատմանը հանդիպել է և մեծ աշխարհի եկամուտը վար ձևապահի յախառապետություն մեջում առաջ հանդիպել, իրենց ամբողջ կարու եղի է այդ հանդիպել սրբականությունը, և այնու առաջ գիտեած անք, թե ինչ է պատմու իրենց համար պահ ձևապահին յախառապետություն մեջում առաջ մեջցած ու պատմանը հանդիպել ինձնում.



մական իրադարձության ականատես: Իր որովայ վերաբերմունքով Աղյան գրողը կանգնում է մարդասիրության իր բարձրակետին՝ չնոռանալով, որ այդ երկրութ նա ունեցել է փայլուն միջավայր, եղել են հիանալի մարդիկ, ովքեր նոյնապես այդ ազգության են պատկանել: Իր պատումով երևան է հանվում մի կենսագրություն, որ խմբագրական աշխատանքի մեջ է ընդգրկված, այդտեղ կա մի անաղարտ սեր բժկական ինստիտուտի ուսանողութի Ռենայի հանդեպ, որով նորից ու նորից հումանիստ գրողը հաստատում է, որ սերը տարիք, ազգություն և կրոն չի ճանապահ:

Այլտեղ փշրպում է մի գեղեցիկ իրական հեքիաթ, կործանվում է մի գեղեցիկ սիրո երազների իրական ամրոց, դեպքերի ալիքը հերոսներին նետում է տարրեր ավելի: Գեհենի զոհ դարձած Ռենան այդ նոյն գեհենից մի կերպ փրկված Լեռի համար դառնում է մի տխոր վերհուշ, ով իր սիրո հոգեցունց պատմությամբ հայտնվում է նոր ուղիների որոնման, նոր եղերների փնտրությունների մեջ:

Որպես բնաբան՝ Համաստեղի խոսքերը մի նոր քախիծով են պատում ընթերցողի հոգին. «Օ՛հ, ինչքան տխուր է տեսնել աչքերը կոտրված թևերով բռչունին, որ այլևս կգուր իր արյունած թևերը քարերուն կրզարնե նորեն բարձրանալու կապույտին ու արևին»:

Վերիուային պատումը չիրականացած, կյանքի դաժան հաճախանաբներում ավերված սիրո մասին է, որը հուզական խոր լիցք է հաղորդում ընթերցողին: Ներկայի տիսուր երանգները վեպում դառնում են գործուն, լուսավոր, ժպտագոր, երբ գրողը նկարագրում է ընական հա-

Լ ևն Աղյանի «Հե-
ռացող եզեր»

ქელი ჩრალან պათმო-
რების ტ, ირახელ ნა იჯ ქხ
აუათმოს ტ ჩნგ-ირ ხერ-
უს მასწან, მხელის ნრა
ასევე დანაუაყარებ, აյլ
ჩნგ ჩრალარაბორების ნე-
რებ აოანგერის ტ, ხენგ
ჩნგ ტ ჩრალარა პიროს
ხერის იერ ირახელ პათ-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

բարերությունների մեջ հյուաված սերը.

«Ես հայացքս չեմ կտրում նրանից: Ունան երբեմն ամորթիած ժպ-տում էր՝ փախցնելով աշքերը, ես աջող գրկել էի նրա բարակ մեջքը, զգում էի նրա փխրուն մարմնի տաք հպումը, փարթամ մազերը քսվում էին դեմքիս, և նրանց մոտիկ բուրմունքից ու «Քիմայի» զմայիչ հոտից սիրտս անհանգիստ տրոփում էր: Անուշաբույր էր և սպիտակ մաշկը, ես դա նույնպես գգում էի, նրա մի ձեռքն իմ ուսին էր, իսկ մյուս ձեռքը՝ նուրբ մատներով, վարանու շարժվում էր ափիս մեջ՝ պատեպատ խի-վող երկոտ թշնակի երկուղածությամբ»:

Չնարական ջերմությամբ և խանդաղատաճրով է նկարագրում գրո-դը բնավորության վեհությունը, որը նկատվում է բարոյական մաքրու-թյուն ունեցող Ունայի գեղեցիկ կերպարում: Նա մարդկայնության բարձր ու անթերի որակ ունի իր մեջ, անչափելի է նրա հոգեկան աշ-խարհի հարստությունը: Առավելապես մեծ համակրանք է ծնվում յու-րահատուկ խառնվածքով աղբթեջանուհու հանդեպ, երբ նա հայ գրա-կանություն է ուսումնասիրում և կենսասիրության ու մեծ կամքի կողքին իմանում ենք, որ նա ընթերցում է նույնիսկ «Մուսա լեռան քառասուն օրը»՝ հայ ժողովրդի կրած ողբերգության այդ պատմությունը:

Գրողը հմտությամբ է արձակում օգտագործում բանաստեղծական ոիքը ու հնչերանգ, մարդկային փոխհարերություններ ու ապրումներ ցուցադրելիս նույնիսկ երկխոսության դեպքում, որը գալիս է լրացնելու երկու սիրող սրտերի գեղեցիկ ապրումների հրաշալի աշխարհը:

«-Ունա՛,- սրտի նվազումով ու հուզահամակ շշնջացի ես,- ես ուզում եմ հավատաս, որ այսօր ամենալավ, ամենագեղեցիկ, ամենասքանչելի, ամենաերջանիկ օրն է իմ կյանքում: Ասա՛, դու հավատո՞մ ես, որ դա այդպես է:

Հավատում եմ,- ասաց նա, և նրա շուրբերը հրաբորը էին, ինչպես երբեք: - Ես ուզում եմ,-շարունակեց Ունան, նրա ձայնը դողաց,- ուզում եմ, որ դա լինի առաջին օրը և որ այդպիսին լինի նաև հաջորդ օրը և մնացած բոլոր օրերը»:

Երևոյթների մատուցման բնարական եղանակը առանձին ուժով երևում է գրողի պատկերած բնության և նրա ծոցում ապրող մարդկանց նկարագրություններում, շատ հատվածներ կարծես ունեն երգի կառուց-վածք ու հնչերանգ: Այդպես է Էսմիրայի՝ Ունայի քրոջ կերպարի ձևափորման ուղին, որտեղ բնությունն է միահյուսվում մի նոր կենսասեր աղջնակի կերպարին: «Էսմիրան կանգ առավ, ցնծուն բերկրանքով շունչը պահած, լայն բացած աշքերով նայեց արահետի վրա թեքված լո-

Նալուշա Պողոսյան

թենու ճյուղերին, որոնց վրա խաղաղով վազվառմ էր դարչնադեհնավուն մի սկյուռ: Ճյուղի ճյուղ թռչելով սկյուռը պացավ ծառն ի վեր, լորենու ամենաբարձր կատարին, երկնքին քաղող ճյուղերի վրա մի պահ երևաց նրա հրաշեկ պոչը, դողդողաց ու անհետացավ սաղարթների մեջ»:

Կենսաթրթիու, բնական արվեստի ոգով է շնչում Աղյանի վեպը: Բնությունից, թվում է, ձևավորվում է մի նոր ձիթը ու գեղարվեստական ճաշակ, շնչավորվում է մի ողջ բնություն ու կենդանական աշխարհ: Կարծես այս հերոսուիին ծնրադրում է բնության առջև, իր էությամբ ձուլվում բնության ձևերի մեջ, թվում է՝ նա այդ աշխարհից է քաղում իր բնավորության լավագույն որակները, որոնք միաձուլվում և դառնում են կարու ու երազանք, բարություն ու մադամիրություն:

«Ես նայեցի Էսմիրային. ոգեղեն կենաւրախությամբ, լուսավորված ոչ այն է երկնահաս ծառերի սաղարթների արանքից թափանցող շողշողուն արևով, ոչ այն է՝ ուղղակի ներսից եկող ինչ-որ արտակարգ լույսով, ձայնի մեղմանուշ երանգով, ալ կարմիր վառվուն անպիղծ շուրթիկներով, անկյունավոր աշերի այրիչ հրով ու մի տեսակ էկզոտիկ իր գեղեցկությամբ, նա, իրոք, ամենին չէր զիշում սևաչյա մանեկենուիի Մոնիկա Բելլուչիին, և, կարծես, այս, ինչ-որ նմանություն կար նրանց միջև...»:

Գրողը վերիշելով իր սիրո բռնկման հրաշալի հերիաքը՝ հուշը վերաբարում է բնության շրեղ արդուգարդի մեջ, հարազատ միշավայրում: Աղյանական գեղանկարչությունը յուրօրինակ է բնության իմքնատիպ գծերը վերաբարությունը, որ առողջ ու անուղղ է լրացնելու մի նոր հրաշագործ գեղեցկության կերպար:

«Եվ ինձ դարձյալ հուզում էր այս ամենը՝ Ռենայի քնած տեսքը՝ քնի մեջ ժամանակույն կոկոնած շուրբերով, հանդարտված, հազիվ նկատելի շնչառությունը, ծղրիդների երգը՝ պատուհանի տակ, ծովի հեռացող ու մոտեցող անդադրում շառաչը՝ տան ետևում՝ ցանկապատից այն կողմ, ընկուզենու տերևների շարժուն շրջյունն ու խշողը՝ թերթ քամուց, զիշերային մշակի՝ այդ անտեսանելի զիշերահավքի ձայնը՝ անտառի հեռու խորքում, արադաղի՝ լուսայգն ավետող բնարարախ կանչը՝ գյուղի ծայրին, և նրա բրբումնային բեկրեկուն զիլ արձագանքն այստեղից»:

Այդպես է գրողի արվեստը՝ բարությամբ համակված դեպի բնությունն ու այնտեղ ապրող բոլոր արարածները: Բարձր երկնքով կրունկների երամի բախսախառն կանչերին միանում են Լեոյի համար անս-

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

պատելի՝ Ունայի շուրբերից հնչող տերյանական տողերը.

Չի հասկանա ձեր հոգին և՛ ծոյլ, և՛ օտար,

Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար...

Զարմանքին ու հիացմունքին ավելանում է մի նոր քննչանք ու երախտագիտություն սիրած աղջկա հանդեպ, բայց նաև հպարտության զգացողություն մի ժողովոյի նկատմամբ, ով առաջին քաղաքակիրք ազգն էր, որ ընդունեց քրիստոնեական հավատը՝ դրանով իսկ երևի սկիզբ դնելով իր բոլոր դժբախտություններին:

Լեռն Աղյանը վիպական իրականությունը ներկայացնում է որպես հերոսի նախատիպ՝ իրեն տեսնելով իրադարձությունների առանցքում՝ իր աշխատանքային գործունեությամբ, ընկերական միջավայրում, անձնական սիրով և հեռացող եզերքում հայերի դեմ նախապատրաստվող մի նոր ոճագործությամբ, որ պիտի դառնար մի դժոնի ինքնակենսագրություն։ Այս միջավայրում ձևավորվում է Լեռնի Հուրունց գրողի կերպարը, որի խոսքերով արդիականացվում է դարերից եկող դարաբանա անլուծելի հարցը. «Երբեմն տեսե՞լ եք անտառից անշատ, մենավոր ծառ, որը լավ եղանակին լինի, թե վատ, անվերջ գալարվում է՝ ասես ճյուղերով շուրջն ինչ-որ քան փնտրելով։ Ինձ միշտ այնպես է թվացեմ, թե ծառը փնտրում, փնտրում է մեկի հուսալի ձեռքը, մեկի աջակցությունը ու չի գտնում։ Անցնում են տարիները, տասնամյակները հաջորդում են իրար ու ծառը կա՝ հողմերից ծեծված, շարունակում է գալարվել ու փնտրել, փնտրել ու գալարվել։

Ղարաբաղն է դա, որ ահա երեք հարյուր տարի ի վեր պատվիրակ-ներ է ուղարկում այս ու այն կողմ՝ Խարայել Օրուց մինչ այսօր, խնդրում, բողոքում ու տառապելով սպասում է օգնության, բայց քար լուրջան ու խոր անտարբերության մեջ կանգնած՝ մենավոր այն ծառի պես չի գտնում աջակից ու հուսալի մի ձեռք ու գալարվում, տնիքում է անամոք ցավից՝ չհասկանալով, որ օվկիանոսներն են որոշում իր բախ-տը»։

Գիրքը կամաց-կամաց հարստանում է գլխավոր հերոսի ապրած ժամանակաշրջանի եական փաստերով, ժողովրդի մի փոքր հատվածի անցած ու ներկա ողբերգական դրվագներով, այն ուշագրավ է դառնում պատմողից հեղինակ դարձած գրողի մտածումներով, նրա տխուր և ուրախ ապրումներով, հերոսի կյանքը շղթայվում է ժամանակի երևություններին, որով էլ գիրքը ձեռք է բերում տարեգրության գծեր։ Ու պիտի բարձրանար հարցը. «Ո՞վ քան թվականին ավերեց, հողին հավասարեցրեց Ղարաբաղի հիսունինը շեն գյուղերն ու ոչնչացրեց նրա քան-

Նալուշա Պողոսյան

հինգ հազար հայ բնակչությանը...»:

Բարձրակոչ հարցերը պետք է հաջորդեին ու արձագանք տային՝ ի տես բոլորի. «Ու՞ր են հայկական մշակութային կյանքի առաջատար ջոկատներից մեկի՝ Շուշի քաղաքի հինգ տպարանները, որտեղ 1828 թվականից հայերեն գրքեր ու պարբերականներ էին հրատարակվում, ո՞ւր մնաց թեմական դպրոցը, 170 տարի առաջ կառուցված կուսանոց վաճքը..., գործող վեց եկեղեցիները, հազարի հասնող արհեստանոցները...Ու՞ր մնացին Բարձի մի քանի տասնյակ հայկական դպրոցները, մշակույթի տները, գրադարանները, տպարանները, ինստիտուտն ու թատրոննը, որ անխափան գործում էր հազար ութ հարյուր յոթանասուն թվականից ի վեր»:

Անմարդկային վերաբերմունքում հույսը խարուսիկ է, այն դառնում է ողբերգություն ճշմարտությունն ու արդարությունը ուժնահարված մարդկայնության բոլոր առաքինություններից գործի միջավայրում:

Այստեղ բարու և չարի հակադրությունը տանում է մարդկայինի ու անմարդկայինի, երազի ու իրականության բախմանը: Անեզր տիսրություն կա այստեղ, հոգեբանական ծանր կարված: Եվ այդ ճանապարհին «Հեռացող եղերը» գեղարվեստական գիրքը դառնում է վավերագրություն, անցած դարավերջի մի նոր ոճրագործության վավերագրություն, և ասես Հուրունց գրողի պատգամով Աղյանը պիտի արձագանքեր Ղարաբաղում ապրողների ուժնահարված իրավունքների մասին. «Ղարաբաղի հայերը հարյուրամյակներով թթի այգիներ են տնկել: Թթից չամիչ են չորացնում, դոշաք են եփում՝ երկուսն էլ բուժական մեծ հատկություններով օժտված, ողի են քաշում: ...Աղրբեջանի կոմկուսի կենտկոմը կարգադրել է Լեռնային Ղարաբաղում կտրատել թթի բոլոր ծառերը...Նպատակը հեռահար ու որոշակի՝ հայ զյուղացուն գրկել ապրելու միջոցներից, որ բողնի հեռանա օջախը, հողը լրի...Սա ցեղասպանություն չի՝, որ Աղրբեջանի կառավարությունը որոշեց վերացնել մարգում եղած չիչին արյունաբերությունը...

Ստացվում է, որ Ղարաբաղի հայերի վիճակը շահի Պարսկաստանում անհամեմատ լավ էր, քան սովետա-ալիևյան Աղրբեջանում՝ երկու դար անց»:

Վեպում Աղյանը բացահայտում է դարաբաղյան խմորումները, որոնք յոթանասուն տարի շարունակ ազգային հալածանքների են՝ թարկված մարզի աշխատավորության բոլորի արտահայտություն են:

Գրողը շատ ցայտուն է նկարագրում այդ լեռնաշխարհում ապրած իր պապերի ներաշխարհն ու հոգեկերտվածքը. «Փտած տերևների,

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

խոնավ հողի ծանոթ սուր հոտք, տերևների տակ բարնված առվակի մեղմ խոխոչյունը, կեռնեխի անդադրում երգն ու կկվի տրտում կանչը, իրոք, ակամա ինձ հեռավոր ու հերիաքներով լի ուրիշ աշխարհ են տանում: Այդ հեռավոր աշխարհում էր ապրում Հայրիկը:

Բարձրահասակ, շեկ ու նիհարավուն, սրբապատկերի պես անմեղ ու բարի դեմքով, երեսի սպիտակ, փափուկ մազը եկած իմ հոր հայրը, որին թոռները Հայրիկ էին կոչում: Կար և իմ Մաշո Մեծ մաման՝ հեզ ու խոնարհ, խեղճ ու կրակ մի կին, հորս մայրը...»:

Մարդկայնության մի անհանգիստ, կրոստ ու վեհանձն հոգի կա Աղյան գրողի կերպարում, որ անվերջ պատգամում է անխախտ պահել հոգու մաքրությունն ու ազնվությունը: Այս սկզբունքները գրողի և մարդու բարոյական էության տարեքբն են: Բայց այստեղ գլխավոր հերոսները որքան էլ մաքուր ու անաղարտ են իրենց բարոյական լավագույն նկարագրով, այնքան իրենց կյանքի ուղին ստիպված են անցնել որբերգական ցնցումների մեջ: Մահվան արհավիրը մտնում է հավատով ապրող մարդկանց խաղաղ բնակարանները, և սկսվում են դաժան ավերածությունները մարդկային հոգին կորցրած ոճրագործների կողմից: Այն դադար չուներ, այդ դաժան օրերին պետք է խելք անմեղ նորանոր կյանքեր: Ու նորից ընթերցողին է հառնվում անցած դարասկզբի գաղթի ոլորվող ճանապարհը, մարդկային մի անձայրածիր քարավան՝ սովահար ճանապարհներով, անքուն ու հոգնած, անօթևան ու քաղցած, խուճապով ու անդադար մերկ ու բոկոտն, ուրով ու սայլակներով, թախիծով ու մոլեզին, որ ուղևորվում էր դեպի փրկության եզերք: Բայց այս անգամ հեռավոր եզերքից փրկության հույսով, աղեկտուր ծայներով ոճրագործների ձեռքն ընկած մի արդար ժողովուրդ փրկություն էր աղաղակոմ, բայց փրկություն չկար:

Ականատեսի աշքերով Լեոյի կերպարում աղճատվում է իրականության մասին իր պատկերացումը, մի՞թե Խաղաղության փողոցում հնարավոր էր տեսնել նման ոճրագործության հետքեր. «Փողոցում վառված կահույքի մնացորդներ կային թափված, հեռուստացույցներ, այրված ներքնակներ, որոնք նույնապես մխում էին, մանկական իրեր կային ընկած ու նաև սառնարաններ, որ վերևի հարկերից էին երևի ցած զցել»: Սիա բարբարոսության ականատես գրողը վավերացնում է մի նոր սարսուն տեսարան. «Թեքվելով աջ, անցանք կենտրոնական փոստի մոտով, հատելով տրամվայի գծերը, մտանք քաղկոմի հրապարակը՝ շրջապատված հարյուրավոր զինվորներով ու տասնյակ զրահամերենաներով: Օդը չէր հերիքում: Ես մտա ներս ու մնացի դոների մոտ

Նալուշա Պողոսյան

կանգնած՝ ամենուր աղմուկ-աղաղակ, գետնին, քարե սանդուղքներին ու լուսամուտագոգերին մարդիկ էին տեղավորված՝ ծեծված, վիրավոր, նստած, կիսաթեք պառկած՝ կիսամերկ, շատերը հողաբախերով, շատերը ոստարորիկ, խալաքով ու գիշերանցով, արյունած, ուռած դեմքերով։ Ես երկար մնացի կանգնած՝ այդ դժոխքի դեմ հանդիման...»։

Մայրական ցավի միջից լսվում է դատապարտող հնչերանզը նարոր նկատմամբ, և այդ մարդ կոչվածը պատմոթյան մեջ որակվում է որպես դաժան ոճրագործ։ Մայրը մղկտացող սրտով պիտի պատմեր մի զարհուրելի պատմոթյուն, որ կարծես իրական չէր, դա գեղարվեստական ֆիլմ էր, որ ընդամենը նկարահանվել էր ոչ իրական մի այլ մոլորակում։

«Առաջին հարկում տեսա մորս՝ խեղճ, միանգամից պառաված, մակերը լրիվ սպիտակ։ Նա տանջահար, մտախոհ տեսք ուներ, աչքերը՝ կարմրած։ Բերանն չորացավ, ծնկներս ասես թուլացան ու չհասկացա ինչպես հասա մորս, գրկեցի նրան։ Մայրս թպտում էր ձեռքերին մեջ, դեմքը կրծքիս սեղմած լալիս էր՝ չկարողանալով մի խոսք անգամ արտասանել։ Ես ուզում էի հարցնել հորս մասին՝ որտե՞ղ է նա։

«Պապան չկա, Լեռ՝, պապան չկա, -լացից աղավաղված դեմքով հանկարծ ասաց նա,- մերենայի հետ միասին վառեցին, այրեցին պապայիդ, պապան չկա... Վյդաես երկար մնացինք կանգնած՝ մայր ու որդի իրար գրկած։ Հետո Սիավուշը մտավ թես, ցածրածայն ասաց. «Լեռ, տղամարդ կաց, դու պետք է սիրտ տաս մորդ»։

Մարդկային ողբերգության կողքին մահվան հուսահատ ջղաձգումների մեջ Սիավուշի և նրա նման շատ-շատերի կերպարներով հաղորում է մարդասիրությունը, երբ կյանքի սարսափների մեջ մարդկային խիդճն ու սիրտը ավելի զորավոր են գտնվում։ Ականատես մայրը չի լուսմ, նա պատմում է մի դաժան իրականություն, որտեղ կապույտ երազները կարմիրով են ներկվել, անհոգ օրերի ծիծաղին փոխարինել է ողբերգական աղիողորդ լացը, դեպքերի ալեպսույտ հորդանքում երևում են մարդիկ՝ խոշտանգված ու բռնաբարված։ Հիշողությունների հստակ ու մաքուր ջրերում երևում են նոր դաշնություններ, դրանց կողքին նաև մարդասիրություն, որ հատուկ էր նաև այդ ազգին. «Մայրս շունչ քաշեց։ Սիավուշը սիգարետը սիգարետից վառելով լուս լսում էր՝ սիգարետի ծուխը պատուհանի ապակու վրայից դուրս փչելով։ Ես մտքով հորս հետ էի, փակ աչքերով տեսնում էի նրան՝ դյուրահավատ, անմեղ ժպիտով, և սիրտս մղկտում էր նրա կարոտից ու իմ անզորությունից»։

Մոր պատմածը ոճրագործների վայրագությունների մասին պիտի դառնար մի տխուր պատմություն, որտեղ իրար են հակադրվում այդ

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

նույն ազգության երկու հակադիր քւեռները. «Մայրս լոեց: Սիավուշը ետ շրջվեց, բռնեց ձեռքս, այսինքն՝ արիացիր: Ես նրա աչքերում արցունք տեսա»:

Մարդասեր գրողը դաժան խոշտանգումների ու բռնարարությունների կողքին պետք է գտներ նոր մարդասերների, ովքեր փրկել են հայերին այդ բարբարոսներից: «-Ոչինչ մի՛ պատմիր, մա՛մ, մի՛ պատմիր, խնդրեցի ես: Քայց նա չմենց ինձ, շարունակեց. - Աստված պահի Խանումկային: Խանում Խմախլովնա: Հարևանները՝ հաղթանակ տղամարդիկ, օգնության չեկան, չօգնեցին: Իսկ երեսունինգամյա էդ միայնակ կինը պատրաստ էր զոհաբերելու իրեն և մեզ փրկելու: Նրանից էլ ոսկին հանեցին՝ հարսանեկան մատանին: Մի քանի անգամ խփեցին: Նույնիսկ դանակով սպառնացին: Մենք դա լսում էինք: Ավանեսյանների ու Գրիգորյանների ընտանիքները նա քացցրեց երկրորդ հարկի քառասունմեկերորդ բնակարանում: Ավետա Մամեդովայի բնակարանում: Ավետան այդ օրը տանը չեր... Խանումը շատերին այդ տանը քացցրեց: Կյանքը վտանգելով՝ նա տներից ու բակից հավաքում էր ծեծված հայերին, տեղավորում իր տանը: Քանի անգամ եկան բանդիտները, նրանցից մեկը խփեց Խանումկայի դեմքին, քայց Խանումկան չվախեցավ. կտրեց երակը, ասաց. «Արյու՞ն եք ուզում, ահա իմ արյունը...»»:

Գրողի գրիչը կսկսացող ցավով արդարության ու կարեկցանքի ծարավ մի բուռ ժողովրդի հուսահատության վերջին սահմանագծում փրկություն էր աղերսում: Գալարվում է մի դանիթեական խուճապ, որտեղ բռնարարվում են կանայք, խոշտանգվում տղամարդիկ: Արդարության ճայնը հնչում է նաև նույն ազգության Այդինի խոսքերում. «Քաններորդ դարի վերջում նախնադարյան այդպիսի բարբարոսության, անհնարին է հավատալ», որը հոտային բնագդ է հիշեցնում:

Գրողը նկարագրում է մարդկային ճակատագրեր, դրա հետ նաև փիլիսոփայորեն իմաստագործում նրանց կյանքը, նկարագրում նաև քաղաքականությունից հազար տարով հետ մնացած մի վայրենություն: Իսկ դրանց կողքին կա մի սիրո պատմություն, իրական մի սեր, որ պիտի կուլ գնար այդ ոճրագործությանը: «Հնար լիներ՝ մի ուրիշ մոլորակ գնայինք, ուրիշ մոլորակում ապրեինք,- ասաց Ունան՝ միաժամանակ ժպտալով ու արտավելով: ...Կառ ժամանակ, բոլոր մարդիկ եղայր կլինեն...Լեզուն, դավանանքը, մաշկի գույնը՝ դարերով մարդկանց կաշկանդած բոլոր այս նախապաշարումները կվերանան...Քայց ե՞րբ, ե՞րբ կլինի, ե՞րբ կգա այդ ոսկեդարը, Լեռ, երբ մենք չե՞նք լինի...»:

Այն, ինչ չկարողացավ ասել Ունան, Լեռյին պիտի ասեր բույրը՝ Էս-

Նալուշա Պողոսյան

միրան. «Եղբայրս կարող է սպանել նրան, հասկանո՞ւ՞մ եք... Դուք չգիտեք, թե ինչ է կատարվում մեր տանը, ես Զեզ ամեն ինչ ասել չեմ կարող...Նրա ամեն մի քայլափոխը հսկողության տակ կլինի այսուհետև...Մի՛ զանգեք նրան, Զեր զանգը մահ է նրա համար, խնդրում, աղաչում եմ, երդվեք, որ չեք զանգի»:

Բայց ո՞վ էր մեղավորը, որ պիտի կործանվեր մի անքիծ սեր, ո՞վ էր մեղավորը, երբ ոճիրը գործված էր, թափվում էր արյուն՝ նախօրոր պատրաստված երկարաձողերով, այնտեղ բռնաբարված հայուիհներ կային, մանուկների աղեկտուր ճիշեր, մայերի սրտակեղեք հառաշանքներ, խոշտանգված մարմիններ, ոճրագործների հոհոց: Ովքե՞ր էին մեղավորները, որոնք չփնտրվեցին, եթե փնտրվեցին, չգտան ասես, ու այդպես ել այդ ոճիրը մնաց սերունդների դատաստանին, որտեղ կային նաև գրքի գլխավոր հերոսներին բաժին հասած այդ վայրագործյան դաժան հետքերը: «Առաջին հարվածը զլիսիս իջավ: Ես իմ դեմքին զգացի արյան տարությունը: Իրաք հրմշտելով նրանցից յուրաքանչյուրն ինքն էր ուզում ինձ խիել: Նորից հարվածեցին, այս անզամ դեմքիս, և զարմանալի էր, իմ միտքը գործում էր պարզ, հստակ. «Սպանում են,- մտածեցի ես,- հիմա կսպանեն...»: Վախի, սարսափի ոչ մի զգացում: Եվ զարմանալի էր նաև, որ ցավ չէ զգում բոլորովին: ...Ինչ-որ կարծր բանով խիեցին ձախ աչքիս, թվաց՝ աչք պայթեց, ես ջանք էի գործադրում բացել աչքս, բայց չէր հաջողվում: Նրանք միաժամանակ գոռզում, հայինում էին, բայց ես ոչինչ չէի հասկանում նրանց ասածներից»:

Այդ գեհենի սարսափներն իր վրա կրող ականատես գրողը տեսավ մարդկային տառապանքի անհուն ծովը, մահվան ու կյանքի զուգահեռ-ներում անցավ իրական ու շոշափելի մահերի, զինջ առավոտների տեսիլների միջով, զգաց հոգեկան կոկիծ ու հոգու բերկրանք, կյանքի անմեկների հարցերին անդրադարձավ իր հարցադրումներով, աշխարհի հանդեպ իր լավատեսական հայացքներով ատեղծեց մի գեղեցիկ գեղարվեստական ստեղծագործություն, որտեղ սահմաններ չճանաչող իր բնության պաշտամունքի մաքրամաքուր նկարագրությունների կողքին ստեղծեց մի գեղեցիկ անաղարտ սեր, որ պիտի դառնար մի տխուր հիշողություն, որն ընթերցողին էլ իր հետ տաներ դժոխքի ճանապարհով, ու այդ ճանապարհին նա իմանար Ունայի նահատակության տառապալից լուրը. «Քանդիտներից մեկը, երևի նրանց զլիսավորը, ձեռքը համեկարծ զցել, պոկել էր Ունայի պարանոցի շղբայիկն ու կուղոնը, Ունան չէր հաստատել, որ հայուի չէ, «ինչ-որ մեկը նույնիսկ հարցրել է

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

նրան. «աղքատականութի՞ւն» ես», և նա, արյան մեջ կորած, կատաղած ասել է. «ոռ՝ չ», Սահիան տեսել էր, թե ինչպես էին նրան պատեպատ խփելով, գողողական դեպի առաջին հարկ՝ այրելու...»:

Մարդկությունը կհավատա՞ անհավատալի բվացող իրողությանը, որ կատարվեց մի նոր դժոխքում քաղաքակիրք աշխարհի առջև: Այդ նույն մարդկությունը հավատա՞ անցած դարավազքի ոճրագործությանը, եթե մինչ այդ ոճիրի գործ դառնալը Սիամանքոյի գրիշն էր դեռ ահազանգում: «Թող մարդերը հասկնան մարդուն ոճիրը մարդուն դեմ», իսկ այսօր՝ մեր օրերում, աշխարհը հավատո՞ մ է, որ այդ նույն եղեննագործների արյան ծարավ սերունդները Արցախի սահմանների մոտ են սահմուկեցուցիչ ու ահավոր նոր ոճիրներ գործում:

Գրող-հուշագիրը շատ կորուտներ ունեցավ իր անցած ճանապարհին, բայց կարողացավ անսասան պահել իր սերն ու հավատը մարդու հանդեպ: Այդ սերն ու հավատը գրողի դեմքից ետ է վանում տառապանքի քողը և ընթերցողի վրա գամում իր աշքերից ճառագող բարի ու անշար մարդու ուրախ ժախտը:

Հայ արձակի պատմության մեջ «Հեռացող եզերքը» գեղարվեստական հուշարձան է՝ կառուցվածքային անկախ նկարագրով, ոճային բազմատեսակ գոյյների շաղախով, կենդանի իրական կերպարներով, հուզականությամբ հագեցած, անցած դարավերջի հայերի նկատմամբ ցուցաբերած դաժան ոճրագործության մասին ականատեսի իրական փաստագրությամբ: Այյան գրողի մարդասիրությունը լցված է կյանքի ու մարդու սիրով, տիսրության մեջ անգամ նա ցանկանում է հաստատել աշխարհի հավերժության ու մեծության միտքը: Իր հուշագրության մեջ գրողը մնում է հավատ ներշնչող մարդկային լավագույն խառնվածքն իր մեջ կրող մարդու նկարագրով: Նրա վեապը արվեստի դասական խորության գաղտնիքներն ունի իր մեջ, հենց դրանով է բացատրվում նրա ստեղծագործությունների լայն մասսայականությունը տարբեր տարիքի ընթերցողների շրջանում: Գիրքը վիպական և քնարական նախադրյալների միասնություն է, որի մեջ տեղ ունեն և՛ զգացմոնքային բռնկումները, և՛ պատճական դեպերի, և՛ կենսագրական փաստերի շղթայական հանգույցները: Նույնիսկ փաստական ու բվագրական տվյալներն այնքան առատ են գրքում, որ հաստատակամ կարող են ասել՝ այս գիրքը բազմակողմանի ուսումնասիրության և գնահատանքի է արժանի:

**Հայկական լրաբարձրական՝ Լու Անջելիսից,
«Սանկավարժի անկյուն», 2016-04-12
<http://www.usarmenianews.com/am-n-2773.html>**

**ՏԱՐՍՎԻՐ ՀԱՅՈՒՀՈՒ ՏԱՐԵԴԱՐՁ, ՈՐ
ԻՄԱՍՏԱՎՈՐՎԵԼ, ԴԱՐՁԵԼ ԷՐ ՀԱՅՐԵՆԻՔ**



Հայունը համախմբվել էր մի գաղափարի շուրջ: Այստեղ հայրենի եզերքի կարոտող ապրող բանաստեղծութունը ոռուախոս գրիչն է թևածում, մի մարդասեր անձնավորություն, ում խոսքում հարազատ հայրենի հնչողությունն է:

Բանաստեղծութունի Նելլի Ավակովա Գրիգորյան, Լևոն Աղյանի ստեղծագործությունների ոռուերեն բարզմանչութի, տարագիր հայուիի, ով փրկվել էր Բարձի ոճրագործությունից ու տարիներ առաջ բնակություն հաստատել հեռավոր Լոս Անջելեսում, ում ծննդյան տարելարձն էր այդ օրը՝ բոլորիս շնորհավորական բազմաթիվ բարեմաղթանքներով... Անհատականություն, ով այդ հիշարժան օրն այս հաղորդաշարում իր շուրջը համախմբեց հրաշալի մարդկանց՝ իրենց խոսքով, արտահայտած կարծիքներով, բազում մտահոգություններով... Եվ այդ ամենի անունը Արցախ էր, հայրենի եզերք, որ կարոտ կար, սեր ու անանցանելի սպիացած ու նորացված վերքեր:

Այստեղ ոռուագիր բանաստեղծութուն մտորումներին գուգահեռվում է հայրենիքին զինվորագրված Ազգային հերոս նվիրյալի խոսքը... Բոլորին կողմից ճանաչված, անցած դարավերջի գեհենից փրկված արձակագիր գրողի խոսքում «Հեռացող եզերքին» գուգահեռված դիվանագիտական ասելիքի խորություն կա, առաջնազծում գոհված կամավորական առաջամարտիկի որդեկորույս հոր կոկիծ ու հայրտություն, լրագրության մեջ իր ծշմարտացի ասելիքով, նկարահանումներով հայտնի անհատականություն, հոգեբանի ու քաղաքագետի արտահայտած մտ-

Հ աղորդաշար,
որն Արցախի պատերազմական օրերի վերքերի լուսաբանումն է, որ ուղիղ եթերով հեռարձակվել է Լոս Անջելեսից: Հոգիդ փառավորվում է, եթք մեր փոքրիկ լեռնաշխարհի սարսափելի օրերին հայությունը համախմբվել էր մի գաղափարի շուրջ: Այստեղ հայրենի եզերքի կարոտող ապրող բանաստեղծութունը ոռուախոս գրիչն է թևածում, մի մարդասեր անձնավորություն, ում խոսքում հարազատ հայրենի հնչողությունն է:

Բանաստեղծութունի Նելլի Ավակովա Գրիգորյան, Լևոն Աղյանի ստեղծագործությունների ոռուերեն բարզմանչութի, տարագիր հայուիի, ով փրկվել էր Բարձի ոճրագործությունից ու տարիներ առաջ բնակություն հաստատել հեռավոր Լոս Անջելեսում, ում ծննդյան տարելարձն էր այդ օրը՝ բոլորիս շնորհավորական բազմաթիվ բարեմաղթանքներով... Անհատականություն, ով այդ հիշարժան օրն այս հաղորդաշարում իր շուրջը համախմբեց հրաշալի մարդկանց՝ իրենց խոսքով, արտահայտած կարծիքներով, բազում մտահոգություններով... Եվ այդ ամենի անունը Արցախ էր, հայրենի եզերք, որ կարոտ կար, սեր ու անանցանելի սպիացած ու նորացված վերքեր:

Այստեղ ոռուագիր բանաստեղծութուն մտորումներին գուգահեռվում է հայրենիքին զինվորագրված Ազգային հերոս նվիրյալի խոսքը... Բոլորին կողմից ճանաչված, անցած դարավերջի գեհենից փրկված արձակագիր գրողի խոսքում «Հեռացող եզերքին» գուգահեռված դիվանագիտական ասելիքի խորություն կա, առաջնազծում գոհված կամավորական առաջամարտիկի որդեկորույս հոր կոկիծ ու հայրտություն, լրագրության մեջ իր ծշմարտացի ասելիքով, նկարահանումներով հայտնի անհատականություն, հոգեբանի ու քաղաքագետի արտահայտած մտ-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

քեր, դրանց զուգահեռվում է Արցախում ապրող քաղաքագետի իմաստալից վերլուծականը, երևում է օտար ավերում ապրող հայկական համայնքի և հայրենիքի հոգսերով մտահոգ մարդը...

Այստեղ մարդասեր բանաստեղծութուն իր ծննդյան օրը ուղիղ եթերով շրջապատել էին տարբեր եզերքներում ապրող մարդիկ, ովքեր մտահոգված էին Արցախի մի բուռ ժողովրդի ճակատագրով: Սա անսվոր տարեդարձ է, որտեղ մի ամբողջ աստղաբույլ աշխարհին ի ցույց է դրել հայի մարդասիրությունն ու հավերժական ոգին՝ ի հակադրություն աղբեջանական կեղծ ու ստահող գաղափարախոսությանը:

Անվերջ կարելի է բվարկել արցախյան մեր սարավելի օրերի արձագանքն արտահայտող այս հաղորդաշարի մասին, որի առանցքում սահմանային առաջնագծում հերոսացած նորօրյա հայ զինվորն է՝ իր անմահ սխրանքներով: Այն պետք է ամբողջանար հաղորդավարուհի Մարիկա Ավետիսյանի անկաշկանդ խոսքով, որի կողքին իր բարեգործությամբ պետք է վեհանար անհատականություն, ում շնորհիվ հեռարձակվել էր այս հաղորդումը:

Անսահման կարոտ կա այստեղ, որ տարագիր հայութու տարեդարձն իմաստավորվել ու դարձել էր հայրենիք:

Հայկական լրագրական՝ Լու Անջելիսից, 2016- 05-20

<http://usarmenianews.com/am-n-3625.html>

Հաղորդաշար՝ <https://www.youtube.com/watch?v=PSVaYqMXs9g>

ԾՆԴՅԱՆ ՕՐՎԱ ԱՆՎԿՆԿԱԼ



ցախ աշխարհի ու նրա մարդկանց առօրյան:

Ես առերես նրան չեմ ճանաչում, բայց նա իմ դպրոցական տարիների ճանաչված գրողներից է՝ ծնված Արցախի Մարտակերտի շրջանի Չլրան գյուղում 1940 թ-ի օգոստոսի 3-ին: Հայացքս սահում է նրա գրական գործունեության անցած ճանապարհին: 1970թ-ից ԽՍՀՄ գրողների միության անդամ է, ներկայումս՝ Ռուսաստանի, Հայաստանի և Արցախի գրողների միությունների անդամ: Նա հեղինակ է ինքնուրույն ու բարգմանական ավելի քան երեսուն արձակ գրքերի՝ «Կյանքի ճանապարհին», «Հեռու լեռներում», «Իմ երկրի մարդիկ», «Կորպած բարդիներ», «Այն հեռավոր ամռանը», «Տունը գյուղի ծայրին», «Զորում աղմկում է զետը», «Աշնանային ցրտեր», «Սունը գյուղի ծայրին», «Դարձ ի շրջանս յուր», «Հեռացող եղերք» և այլն: Սի շարք գրքեր լույս են տեսել նաև այլ լեզուներով:

Ինացա, որ այս օրերին արձակագիր Լևոն Արյանը գալիս է Արցախ: Մտածում էի՝ տեսնես կայքի ընկերների՝, թե՞ մանկավարժի ու գրողի հանդիպում կլինի: Եվ իմ մտորումների մեջ նախապատվությունը տվեցի երկրորդին, բայց հեռավոր ափերում ապրող իմ լավ բարեկամուիիներից մեկը խորհուրդ տվեց ինձ՝ այդ հանդիպման ժամանակ դու աշակերտուիի կլինես, Աղյան գրողը՝ ուսուցիչ... Երևակայությամբ ես այդ անակնկալ հանդիպմանն էի նախապատրաստվում, մերք աշակերտուի էի, մերք՝ ուսուցուիի... Երբեմն խախտում էի կարգը և դառնում կայքի ընկերուիի, բայց նորից հավաքում էի ինձ, որ ես ուսուցուիի եմ, իսկ

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

նա իմ դպրոցական տարիների գրողն է, ում ծանոթ էի վաղ հասակից:

Հետադարձ հայացը ձգեցի անցած օրերիս...Գրողի «Հեռացող եզերը» վեպը ձեռքիս մտա դասարանից դասարան...Այն իրական պատմություն է, որը Լևոն Աղյան արձակագրի գրչի ու դիտողականության շնորհիվ՝ ականատեսի հայացքով անցած դարավերջի՝ հայերի նկատմամբ Բարձի և Սումգայիթի ոճրագործությունը գրականության մեջ մտցվեց որպես իրականության գեղարվեստական վերաբարդություն։ Գրողը նկարագրում է մարդկային ճակատագործը, դրա հետ նաև փիլիսփայորեն իմաստագործ նրանց կյանքը, նկարագրում նաև քաղաքակրթությունից հազար տարով հետ մնացած մի վայրենություն։

Այդ ոճրագործությունը մի այլ դեմք ստացավ իմ աշակերտների հայացքներում՝ գեհենի վկա գրողի անձնական տառապալից կյանքով։ Այստեղ նա ոչ թե պատմում է ինչ-որ հերոսի մասին, այլ ինքն իրադարձությունների առանցքում է, հենց ինքն է իմաստագործ երևույթը՝ որպես պատմական իրադարձության ականատես։

Գիրքը ձեռքից ձեռք էր անցնում, արցումքոտված աչքեր կային ինձ հառված, մի ամբողջ դպրոց ամիսներ շարունակ այյանական օդ էր շնչում։ Գրողի միջամտությամբ դպրոցը գրքեր ստացավ, կամաց-կամաց հեղինակի մյուս ժողովածուներն էլ ձեռքից ձեռք անցան...Ծուտով հիացական տողեր էին ծնվում նաև ինձ մոտ նրա ստեղծագործությունների մասին, արվեստագետ գրող կար այնտեղ, հրաշալի գեղանկարիչ, իմաստնացած մարդ...Եվ իմ ամեն մի շարված տող մի նոր ընդվզում էր ծնում հոգումս, դպրոցի սովորական ուսուցչուին դարձել էր մի հասարակ վերլուծաբան, որ իր գնահատականն էր համարձակվում տալ գրողի սեղծագործություններին։

Դրանք իրար հետևից տպագրվում էին, իսկ ես հիացած էի, ինձ վերագտած, որ գրականագիտական վերլուծությունների փորձեր եմ անում, արժանանում նոյնիսկ զովասանների, բայց նաև աշակերտուհու նման երբեմն ընդունում ինձ ուղղված դիտորդությունը։

Մի որոշ ժամանակ գրիչս կանգ էր առել, բայց այս օրերին մտորում էի՝ հայրենի հողի կանչը հոգում՝ Աղյան գրողը զախս է Արցախ, ուրեմն մի բան պետք է մտածել։ Նոր ծնված տողերիս մեջ տեսա իր վեհության պատվանդանին կանգնած գրողին, որ եկել էր հայրենի բնաշխարհը։ Գեղեցիկ էր ամեն ինչ, գրիչս սահուն շարում էր տողերն այն հայրենի հիշատակների մասին, որտեղ անցել էր նրա պատանեկությունը և ահա նորից եկել էր այցի այդ վայրերին ու հարազատ մարդկանց։ Եվ նրա «Աշնանային ցրտեր» վիհակի իմ վերլուծությունը բարի գալուստի

Նայուշա Պողոսյան

անակնկալ պիտի դառնար մեր հանդիպման ժամանակ, բայց նախատեսեցի նաև **բարի ճանապարհի** մի նոր անակնկալ, որ օրեր անց օտար ավելորդ տուն հասնելուն պես՝ նա պիտի ընթերցեր գեղագետ գրողի մասին մի նոր շարադրանք...

Հայրենի բնաշխարհ կար այնտեղ, Աղյան գրող կար վեհացած...

Տող տողի վրա մտքերս ծնվում էին, և հանկարծ օրեր առաջ ինացա, որ չենք հանդիպելու՝ հանգամանքներից ելնելով.... Բայց ինչպե՞ս, չէի հավատում, չէ՞ որ երբեմն իրականություն են դառնում չիրականացվող երազանքները: Շարվածք կանգ առավ միանգամից ու այդպես էլ մնաց անավարտ, բայց հոգումս դաշված մնաց չկայացած մի հանդիպում, չստացված մի անակնկալ...

Այսօր իմ հայրենակից գրողի ծննդյան օրն է, ի սրտե շնորհավորում եմ նրան, բայց հանկարծ մի հեռախոսազանգ, ինձ սպասվում է մի նոր անակնկալ.. Արցախսիս մայրաքաղաքում ես հրավիրված եմ Լևոն Աղյան գրողի ծննդյան տարեդարձին...

Այդ օրվա հանդիպման մի հավերժացած պահ:




*ՀՀ Սիյուռքի նախարարության
«Հայերև այսօր» պարբերական, 03.08.2016
<http://hayernaysor.am>*

ԳԻՐՔ, ՈՐ ՊԵՏք ԿԱՐԴԱՆ ԲՈԼՈՐԸ

Այս գիրքը կարծես հազար թերով կապված է ինձ հետ, իսկ դրա առանցքում հարգված և ճանաչված մարդ կա՝ գրող Լևոն Աղյանը, ում հետ վերջերս հանդիպեցի Արցախում, և նա ել դարձավ ինձ շատ ավելի հոգեհարազատ: Ես իմացա, որ այս օրերին Սանկտ Պետերբուրգում բարձր տպաքանակով ընթացրի մեջ է գրքի ոռուսերեն հրատարակությունը, ուստի այդ առիթով ողջունում և շնորհավորում եմ «Հեռացող եզերք» վեպի հեղինակ, արցախցի արձակագիր Լևոն Աղյան գրողին, նաև խորին երախտագիտություն տարբեր երկրներում ու քաղաքներում բնակվող բոլոր այն ընթերցողներին, որոնց նախաձեռնությամբ ի կատար է ածկում այս գրքի հրատարակությունը:

Նայում եմ գրքի կազմին, քաղաքի գեղեցիկ համայնապատկեր, տխուր բովանդակությամբ մի գիրք, քայլ հավատա՞նք, որ այս գեղեցիկ քաղաքը Բարուն է, որտեղ հայերի նկատմամբ անցած դարավերջին կատարվել է մի դաժան ոճրագործություն, ու այնտեղ սպանվել է նաև հայ երիտասարդի և բժշկական համալսարանում ստվորող աղբքեջանուհու գեղեցիկ ու անաղարտ սերը: Բարությամբ է օծված գրողի արվեստը, որը սիրո հարցում ազգություն ու կրոն չի ճանաչում, և այն երևում է բարոյական նարդություն ունեցող Ռենայի գեղեցիկ կերպարում: Առավելապես մեծ համակրանք է ծնվում նրա հանդեպ, եթե իմանում ենք, որ նա հայ գրականություն է ուսումնասիրում, ընթերցում է նույնիսկ «Մուսա լեռան քառասուն օրը»՝ հայ ժողովրդի անցած ողբերգության այդ պատմությունը: Ռենայի շուրբերից հնչող տերյանական տողերը՝ Չի հասկանա ձեր հոգին և՛ ծույլ, և՛ օտար, Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար..., մի նոր զարմանք ու հիացմունք են ծնում նրա հանդեպ:

Այս իրական պատումով Լևոն Աղյան գրողը երևում է նաև իր կեն-



Նալուշա Պողոսյան

սագրությամբ՝ ընդգրկված խմբագրական աշխատանքում: Նա վիպական իրականությունը ներկայացնում է որպես հերոսի նախատիպ՝ իրեն տեսնելով իրադարձությունների առանցքում՝ իր աշխատանքային գործունեությամբ, ընկերական միջավայրում, անձնական սիրով և հեռացող եզերքում հայերի դեմ նախապատրաստվող մի նոր ոճրագործությամբ, որի գրին է դառնում նոյնին Ուենան, ում չեն խնայում իր ազգի ոճրագործները, և այդ գեհենից մի կերպ փրկված Լեռի համար նա դառնում է մի տխուր վերհուց:

Հայ արձակի պատմության մեջ «Հեռացող եզերքը» գեղարվեստական հուշարձան է: Անեզր տխորություն կա այստեղ, հոգերանական զրկվածության ծանր վիճակ, և այդ ճանապարհին այս գիրքը դառնում է փաստագրություն, անցած դարավերջի մի նոր ոճրագործության վավերագրություն: Այյան գրողը աշխարհի հանդեպ իր լավատեսական հայացքներով ստեղծել է մի գեղեցիկ գեղարվեստական ստեղծագործություն, մի գիրք, որ պետք է կարդան բոլորը:

Ես ողջունում եմ գիրքը իրատարակելո՛ ընթերցողների այս հրաշալի նախաձեռնությունը, համոզված, որ աշխարհին ի տես՝ սերունդների համար շարունակական կլինեն տարբեր լեզուներով այս գրքի հրատարակությունները:

*Հայկական լրատվական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի ամելյուն», 2016-08-16
<http://usarmenianews.com/am-n-4986.html>*

ԱՅՆ ԿԱՊՈՒՅՑ, ՇՔԵՂ ԿԱԶՄՈՎ ԳԻՐՔԸ

Հայացքս սահում է տեսրի թերթի վրա գրած տողերով, որ դասամիջոցին ինձ էր հանձնել 8-րդ դասարանի աշակերտուի Սերի Հակոբշանյանը։ Ուսուցչունու ուղղված հրաշալի խոսքեր կային, բայց առանցքում այն կապույտ, շքեղ կազմով զիրքն էր, որ վերջերս նա նվեր էր ստացել հեռավոր Սանկտ Պետերբուրգում ապրող արձակագիր Լևոն Աղյանից։ Եվ հիշողության մեջ այդ տողերն ինձ տանում են այն փետրվարյան օրերը. «Քարվի և Սումգայիթի ողբերգական օրերի մասին ուսուցչուհիս շատ էր պատմել, մի անգամ էլ նա դասարան մտավ՝ ձեռքին մի կապույտ կազմով զիրք։ Նա մեծ հուզմունքով խոսեց մեր հայրենակից գրող Լևոն Աղյանի «Հեռացող եղերը» գրքի մասին։ Մենք էլ հուզվեցինք, նույնիսկ ցանկություն հայտնեցինք՝ անձամբ հանդիպել գրողին, նաև կարդալ նրա ստեղծագործությունները»։

Ես մի պահ ընդհատում եմ ընթերցելը, բայց վերիիշում եմ իմ աշակերտուի՝ այն օրերին գրած շարադրանքից տողեր. «Ես ուրախ եմ, որ իմ մայրիկն էլ սովորել է այն նույն դպրոցում, որի տաղանդավոր սաներից մեկն է եղել Լևոն Աղյանը։ Ես վաղուց քաջածանոք եմ նրա անվանը, խոստանում եմ ընթերցել նրա բոլոր ստեղծագործությունները, նաև շնորհակալ եմ իմ հայրենակցին, որ այս գրքով ես հասկացա, թե ինչ է Սումգայիթը»։

Այս սիրուն, հրաշալի աղջնակի խոսքերում նորից վերապրում եմ ապրիլյան տառապալից օրերը, երբ արկակոճկող Մարտակերտի հողը ցավից ճար էր տվել, իսկ այնտեղ ապրող բնակչությունը փրկության մի նոր ապաստան էր փնտրում։ «Ապրիլյան տեղահանության ժամանակ ես Առաջանոր գյուղում էի՝ իմ պապիկի տանը։ Բոլորովին պատահական գրքերի պահարանում տեսա արդեն ինձ ծանոք այն շքեղ, կապույտ կազմով զիրքը։ Իսկույն ձեռքս առա այն, շոշափեցի, սկսեցի թերթել, պատերազմական սարսափելի օրերն ապրեցի այդ գրքով։ Հիմա շատ ուրախ եմ, որ նորից մեր բնակավայրում եմ և հաճախում եմ իմ հարազատ դպրոցը»։

Մի նոր կարոտ ուսուցչունու տանում է դեպի այդ դասարանը, որ-



Նալուշա Պողոսյան

տեղ անցած ուսումնական տարում այդ աշակերտներին դասավանդել էի: «Նա շատ սիրվեց աշակերտներիս կողմից իր յուրահատուկ դասավանդման ձևերով, և երբ սկսվեց նոր ուսումնական տարին, փոխվեց մեր հայոց լեզվի և գրականության ուսուցչությունը: Բայց նա չմոռացավ մեզ, երբեմն մտնում է մեր դասարանը, մի օր էլ ասաց, որ անակնկալ ունի ինձ համար: Շատ անսպասելի, բայց ցանկալի էր, որ տիկին Պողոսյանն ինձ նվիրեց Լևոն Աղյանի՝ այն կապույտ կազմով վեպը, որ այս օրերին դարձավ իմ սեղանի գիրքը: Այդ պահին շատ հուզվեցի, շփորչվեցի, սակայն մեծ հպարտություն ապրեցի՝ ստանալով նվեր մի մարդոց, ով ճանաչված արձակագիր է, մեծատառով հայ մարդ»:

Նրա գրած տողերում մեր հայրենակից գրողի հարազատ ծննդավայրի ու այնտեղից սերված մի ազգի հրաշալի պատմություն կար, որ հպարտության զգացումով էր լցրել մեր գեղեցկատես դպրոցականի հոգին. «Ես նաև շատ հպարտ եմ, որ իմ պապիկը՝ Լենոր Հակոբջանյանը, ծնունդով Չլդրան գյուղից է՝ Աղյանի հայրենակիցը: Նա Սուրբիան (Մերգել) Հակոբջանյանի որդին է, նրանք սերում են Չլդրանի Սևունք կամ Միրումանց ազգից: Խակ պապիկիս մայրը հարևան Առաջաձոր գյուղից է, արդեն իննառումն անց, բայց առույց մեր մեծերը հիմա էլ կան, ապրում են Մարտակերտում՝ իրենց հիշողություններում պահելով հայրենի գյուղը, նախնիներին, սրբավայր դարձած պապենական գերեզմանները»:

Վերջին տողերը մի նոր հիացմունքով եմ ընթերցում, որտեղ շնորհակալական խոսքերին զուգահեռ, արցախցուն հատուկ հյուրափրությամբ՝ գրողի հետ մի նոր հանդիպման մասին է ակնկալվում. «Ծնորհակալ եմ իմ ուսուցչությունը նման անակնկալի ու այսպիսի հրաշալի հնարակորդյուն ընձեռնելու համար: Հուսով եմ, որ մի օր մեր հյուրները կարկի տակ կիանդիպենք մեծ արձակագրի հետ»:

Զգիտեմ ինչու, ես ինքու էլ հուսով եմ, որ մի օր Աղյան գրողի նոր այցելություն կլինի Արցախ, մի նոր հանդիպում՝ այս անգամ նաև իր գիրքն ընթերցող մեր դպրոցականների հետ:

*Հայկական լրագրական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-09-20
<http://usarmenianews.com/am-n-5623.html>*

**ԱՅԴ ԳԻՐՔՆ ԸՆԹԵՐՑԵԼԻՍ ՏԱՔ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ
ԳԼՈՐՎՈՒՄ ԷՒՆ ԱՅՏԵՐԻՍ**

Եթե մտա դասարան, աշքովս ընկավ, որ նա մտասույզ, կարծես վերացած ամեն ինչից՝ խորասուզված է ընթերցանության մեջ: Առաջարկեցի գիրքը մի կողմ դնել, իսկ նա վարանու նայեց ինձ: Ինձ թվաց՝ նա ուզում էր ասել, որ ինչպես կարող է իր ուսուցչուհին ընդհատել գիրք կարդացող աշակերտուհուն: Ես մտասեն նայեցի նրան, նա առանց գլուխը բարձրացնելու՝ մի քանի խոսք ասաց, որով ուսուցչուհուն հասկացնում էր, որ իրեն «չխանգարեմ», նա գիրք է ընթերցում: Մեր օրերում այնքան դժվար է դպրոցականներին տանել դեպի ընթերցանություն, նույնիսկ ուրախ էի, որ գտնվել է գիրք, որից իմ աշակերտուհին շի կարողանում կտրվել: Այդ պահին իմ ծրագրային դասը նրա համար հետին պլան մղվեց, և ես չէի ուզում նրան «խանգարել»:

Նրա ձեռքին Լեռն Աղյանի «Իրիկնային աղջամուղ» ժողովածուն էր, բայց հիշում եմ նաև նրա անհանգիստ ապրումները, եթե ամիսներ առաջ ձեռքից ձեռք անցնող «Հեռացող եզերը» վեպն ընթերցելուց հետո իմ աշակերտուի Լիլիթ Հովսեփյանը ինձ մեկնեց քրիմ հանձնված տողեր. ««Հեռացող եզերը»,- մտստում էի ես, ու ձեռքերս մեղմորեն շոշափում էին գիրքը: Հուզմունքը պատել էր ինձ, սիրոս թրթոռում էր, շուրբերս ինքնարերաբար ինչ-որ խոսքեր էին շշնջում: Ակսեցի կարդալ սրտի անհանգիստ տրոփյումնով՝ սպասելով վեպի ավարտին: Ես չգիտեմ ինչպես, բայց նկատեցի, որ արցունքներս երկշուտ դողում են աշքերիս մեջ ու փայլում ապակու անկենդան փայլով, ներսս մի տեսակ այրվում էր, աչքիս երևում էին անբովանդակ տեսիներ: Խորը շունչ քաշեցի և նույնիսկ մի պահ կարծես դադարեցի շնչել, ուզում էի հասկանալ, թե ինչու այդպես...Տաք արցունքները գլորվում էին այտերիս ու դանդաղ սահում ցած: Անհամբեր սպասում էի վերջաբանին, չնայած մի պահ, հակառակ իմ ցանկությանը, ընդհատեցի ընթերցելս և սպասեցի մեկ այլ վերջաբանի, որին սիրոս էր ուզում, որ այդպես լիներ»:



Նալուշա Պողոսյան

12-րդ դասարանում եմ...Նայում եմ այս շիկահեր գեղեցկուհուն, որ դասամիջոցին անզամ գիրքը ձեռքին է: Աշակերտուիհներից մեկը նրան նկարում է, իսկ ես նորից հիշում եմ անցած օրերի նրա խոսքերը «Հեռացող եզերք» վեպի հերոսների մասին. «Կներես սիրու իմ, չի ուզում քեզ նեղացնել, չի կարծում, որ այդքան ուժգին ու խորապես կարձագանքն Ունայի և Լեոյի սիրում: Ես ուզում եմ դառնալ հայտնի դերասանուի և իմ անունը գրանցվի աշխարհի ամենահարուստ մարդկանց թոփ տասնյակում: Ես խոստանում եմ այդ վեպի հիման վրա ֆիլմ նկարահանել, ինքու լինել Ունայի դերում և ցուցադրել այն աշխարհի տարբեր երկրներում, իսկ ամենակարևորը՝ ցուցադրել անվճար, որպեսզի բոլորն էլ հնարավորություն ունենան գալ ու հիանալ այս չքնաղ ստեղծագործությամբ: Ուզում եմ յուրաքանչյուր որ տեսնի ու զգա այն, ինչ ես զգացի այս օրերին»:

Երբ նրան ասացի, որ ֆիլմ է նկարահանվում և Ունայի դերակատարուիհն արդեն գիտեն ով է, նա մի պահ վարանեց, բայց հետո ասաց, որ դա չի խանգարում իր ցանկությանը... Հուսանք, որ մի օր նրա երազանքը կկատարվի, կդառնա հայտնի դերասանուի և ամեն մի դերում նկարահանվելիս կունենա այն մարոր, ազնիվ ու բնական ապրումները, որ ունեցել էր այդ գիրքն ընթերցելիս:

*Հայկական լրադպական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի ամևլյուն», 2016-09-27
<http://usarmenianews.com/am-n-5762.html>*


**ԱՆՑԱՎԱԼՈՒՄ ՄՆԱՑԱԾ
ՄԻ ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ**

11-րդ դասարանում է սովորում նա՝ Լուսինե Հակոբյանը: Դասամիջոցին փնտրում էր ինձ... Եվ ահա 12-րդ դասարան է մտնում և ինձ հաճանում մի քանի թղթեր: Նա շտապում էր, բայց նաև փորձում է բացատրել. «Այստեղ հիշողություն կա, գրողի կյանքի պատմություն...»: Ընթերցում եմ տողերը, հիշում այդ օրը դասից ուշացած իմ աշակերտուհուն:

«Օրը մշուշոտ էր, վաղորդյան ցողը դեռ չէր անհետացել, արևն էլ չէր նշմարվում, գուցե դա էր պատճառը, որ փոքր-ինչ ուշացած դպրոց հասա ու մտա դասարան: Սակայն իմ ուշանալը ոչ մեկին զգացնել չտվեց, քանի որ բոլորը ոգևորությամբ լսում էին ուսուցչուհուն, ով ներկայացնում էր մի հեղինակի, ուժ մասին ես վարուց գիտեի: Անշշուկ տեղավորվեցի ու սկսեցի լսել: Ուսուցչուհու ձեռքի գիրքը ինձ միանգամից ծանոթ բվաց. մի՞թե սա այն գիրքը չէ, որ պայիկիս տանն էի տեսել, որ ձեռքից ձեռ էր անցնում, որպեսզի ընթերցեն, իսկ տատիկս հորդորում էր բոլորին, որ անհապաղ մենք էլ կարդանք: Այո՛, հենց այն է, որ կա, ինձ շատ ծանոթ «Հեռացող եզերը»:

Ներքին հպարտությունս անբաքույց էր, ուզում էի բարձրաձայնել, բոլորին ասել, որ ես գիտեմ այդ հեղինակին, որ նրա մանկությունից շատ բաներ եմ լսել իմ տատիկից: Եվ իմ աչքի առջև այդ պահին կարծես երևում էր այն փոքրիկ Լևոնը, որ պարսատիկը ձեռքին՝ դեգերում էր հայրենի հանդերում ու անտառներում, ամիոդ վազում ընկերների հետևից:

Նա մեր համերկրացին է՝ հեռավոր Ռուսաստանում ապրող արձակագիր Լևոն Աղյանը: Եվ ես հպարտ եմ, որ նա ծնվել է Արցախ աշխարհի գողտրիկ անկյուններից մեկում՝ մեր Չլլրան գյուղում, առավել ուրախ եմ, որ նա մեր համագյուղացին է և եղել է իմ վաղամեռիկ պապիկի ամենամոտ դասընկերը: Սվետա տատիկս է պատմում Գավոն (Գավրիլ) պապիկիս անունից, քանի որ ես իմ պապիկին չեմ տեսել: Ասում է, որ գյուղում բոլորը խոսում են Լևոնից, որ նա ունեցել է ազնիվ, մաքուր



Նալուշա Պողոսյան

սիրտ, նվիրված է եղել ընկերներին: Այսօր էլ գյուղում կան այն մարդկանցից, ովքեր մտերիմ են եղել նրա հետ, միասին են մեծացել հայրենի գյուղում, միասին է անցել նրանց մանկությունը: Գավոն, Արտաշը, Զարյան (Հերուշան), Եղիկը, Ալբերտը, Համետը, Լենան, Յուրիկը, Ագնեսան, Լառիքան և շատերը, նրանց հետ կապված՝ շատ հուշեր ունինա մանկության և պատանեկության տարիներից:

Դրանք անջնջելի տպավորություններ են. «Ինչքա՞ն էին օր ու գիշեր վազվզում հանդերում, շնկշնկան հովի թևին բռչկոտելով թիթեռնիկների պես, ոտարորիկ ու կիսարադյ դեպի հեռավոր անտառներն էին քշում իրենց անասուններին, ու թե ինչպես էր իշնում երեկոն, չեն նկատում: Օ՞րն էր հոգնած, թե՞ իրենք էին հետաքրքիր խաղեր խաղում, որ չեն նկատում, թե ինչպես էր մքնում: «Եվ երբ հեռուներում արձագանքում էր Մաշոն մայրիկի ծայնը. «Սաման մատտադ, ո՞ւր ես, տուն արի, մուր է արդեն», Լևոնը միայն այն ժամանակ է հիշում, որ տուն գնալու ժամանակն է....»:

Մի՞թե այդքան անհոգ էր նրանց մանկությունը, բայց չէ որ հետպատերազմյան տարիներ էին, գյուղում այդ տարիներին գրեթե երիտասարդ չկար, շատերի հայրերը, ավագ եղբայրները, հորեղբայրները ուսումանակատից տուն չեն դարձել, ոմանց ճակատագրերը՝ անհայտ, շատերի «սև թուրքն» էր եկել, ընտանիքները ծանր վիճակում էին գտնվում, կիսասոված, աղքատության մատնված, բայց որքա՞ն անհոգ ու երջանիկ էին այդ ծայրահեղ վատ պայմաններում: Ի՞նչն էր նրանց միավորում. միասնականությունը, համախմբված լինե՞լը, ազնվությունն ու բարությունը, թե՞..., որ այն սարասակելի ցավալի կյանքը փորձում էին արտաքուստ անտեսանելիության քողով պատել»:

Ընթերցում եմ Լևոն Աղյան գրողի մանկության օրերի այս հիշողությունը և նորից ու նորից համոզվում, որ նրա կյանքը միշտ էլ անբաժան է իր հայրենի ծնննավայրից: Նա ապրում է հեռավոր օտար ավերում, բայց իր ինքնությամբ մնում է հայեցի՝ միշտ Արցախի հետ, միշտ նրա հոգսերով, նրա ժողովրդի ճակատագրով մտահոգ:

Հայկական լրագրական՝ Լու Անջելիսից,
«Սամակավարժի անկյուն», 2016-10-01
<http://usarmenianews.com/am-n-5817.html>

**ԿԱՆՉՈՒՄ Է ՆՐԱՆ ԱՐՑԱԽԱԿԱՆ
ՄԻ ԵԳԵՍՎԱԿԱՆ ԲՈՒՅՔ**

12-րդ դասարանում իմ աշակերտության՝ Գեղեցիկ Ղուլյանը, տնային հանձնարարությունը հանձնեց ինձ, որ ես կարդամ մի փոքրիկ հիշողություն ճանաչված անհատականության մասին: «**Մեր գյուղում** պապիս ու տատիս օջախում են անցկացրել իմ մի քանի տարիները: Եվ դրանք եղել են իմ կյանքի լավագույն տարիներից մի քանիսը: **Մեր գյուղը** սքանչելի բնություն ունի՝ բարձրաբերձ լեռներ, խորոնկ ձորեր, կանաչ դաշտեր, արծարագույն մարգագետիններ, մի խոսքով, այնքան է գեղեցիկ, որ կարելի է նույնիսկ դրախտավայր կոչել: Եվ ես ուրախ եմ, որ մեր գյուղի՝ Չղրանի բնության գրկում է մեծացել նաև մեր հայրենակից գրող Լևոն Աղյանը»:

Ընդհանում են ընթերցելը, ես էլ մտովի հիշողությունների մեջ եմ, երբ տարիներ առաջ եղել եմ այդ գյուղում, հյուրընկալվել գյուղական դպրոցի տնօրենի՝ Արամայիս Առուշանյանի տանը, ում հանդեպ առանձնակի ակնածանք ունի Լևոն Աղյան գրողը: Իմ աշակերտությունը խոսքից, որ իր տատի պատմածն է գրել, նորից անցյալից գալիս եմ իրականություն, և հայացք սահում է տողերով. «Տասն լինելով Աղյանի համազուլացին՝ կիսվեց ինձ եւս նրա մասին ունեցած իր տպավորություններով: Նա պատմում է, որ Լևոնը ծնվել է Ռուկան Աղյանի ընտանիքում: Ծնողները սովորական աշխատավորներ են և ապրել են գյուղում միմյանց հարևանությամբ: Լևոնի մայրը եղել է շատ բարի և կատակասեր կին»:

Ապա տատի պատմած տողերն են մեջբերվում, որ բոռնուիին սիրով արձանագրել էր: «Պարոցում Լևոնը եղել է աչքի ընկած ու համարձակ, ես ու Լևոնը սովորել ենք մի դպրոցում, եղել ենք մտերիմ: Նա երկկողմանի բարեկամ է ինձ, և ամեն անգամ, երբ Լևոնը գյուղ է գալիս, հանդիպում ենք, զրուցում», - եզրափակում է Պրաֆին տատս, ապա նորից բոպեներ անց ավելացնում. «Պարոցն ավարտելուց հետո նա գնաց Բաքու և ընդունվեց ինստիտուտ: Նա սկսեց ստեղծագործել, և մենք լսում էինք, որ նա անուն հանած մարդ է: Նույնիսկ Բաքվի ջարդերի մասին



Նալուշա Պողոսյան

գիրք է գրել, ասում եմ՝ արժանացել է մրցանակի»:

Արժանվույն գիրքը երանի թե այդպիսի գնահատանքի արժանանար, և մի նոր ափսոսանք է ծնվում հոգումս այդ անտարերության համար: Ու ես հիշում եմ, որ ամիսներ առաջ, երբ «Հեռացող եզերքը»՝ այդ «մրցանակի արժանացած գիրքը», ձեռքիս մտա դասարան, իմ աշակերտուիկն առաջինն էր, որ վերջին նստարանին նստած՝ բարձրածայնեց, թե ինքը գիտի այդ գրողին, նա իրենց համագյուղացին է, և տասն էլ ճանաչում է նրան: Ու տատի խորերում նորից թև է առնում ակնածանքի խորը հեռուներում ապրող գրողի մասին. «Ես հպարտ եմ, որ նման տաղանդավոր, բարի անձնավորությունն իմ համագյուղացին է ու ինձ բարեկամ»:

Դասաժամի զանգը հնչում է, ես էլ մտքերով գրողի հետ եմ՝ այն հեռու-ի-հեռուներում: Արցախսական մի հրաշալի եղեմական բույր կանչում է նրան դեպ իր դրախտավայրը, որտեղ հիշողություն կա, հարազատ դեմքեր, անսահման կարոտ, նոր երազանքներ:

*Հայկական լրատվական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-10-08
<http://usarmenianews.com/am-n-5918.html>*

ԱՆՑԱԾ ԴԱՐԱՎԵՐՁԻ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՍ ՎԿԱՆ

Առիք Լևոն Աղյանի «Հեռացող եզերը» գիրքն է աշակերտների ձեռքին:

Սի նոր մտահղացում՝ պետք է քննարկենք վեպը մեր աշակերտների՝ գրից ստացած տպավորություններով։ Նախապատրաստական աշխատանքներ են ընթանում, բայց ահա մի նոր անակնկալ՝ դպրոցում սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ Անժելա Պետրոսյանը տարբեր դասարաններում հանձնարարել էր՝ գրքի թեմային համահունչ պատիքերեր ձևավորել։

12-րդ դասարանում եմ, հարցնում եմ նրանց, թե որքանով էր ճիշտ, որ այդ գիրքը դպրոց մտավ, որի էջերին մեր դպրոցականները դեռ ծանրացել էին անցած ուստարված փետրվարյան օրերին։ Միահամուն բարձրաձայնում են՝ հաստատելով գրքի մուտքը դպրոց շատ նպատակային ու ողջունելի։

«Այս գիրքը շատ հավանեցի... Աստված իմ, մի՞թե կարելի է մարդուն սպանել միայն նրա համար, որ նա հայ է։ Հային միշտ էլ վիճակված է եղել տառապել, բայց երբեք նա իր հավատը, իր խաչը չի մոռացել։ Գիրքը մեր թշնամու ոճրագործության մի անխոս վկա է, որ իր արցունքուն էջերում պատկերում է այդ արևախոսների վայրագությունները, որոնց մասին կարդալիս տակնուվը է լինում հոգիդ։ Պետք է կարդան այս գիրքը բոլորը, որպեսզի իմանան, թե անցած դարավերջին ինչ խորը և չսպիացող վերը ավելացավ հայի սրտում» /Կարապետյան Արմին»/։

«Այս գրքի տիսուր, ողբերգական պատմության մեջ կա գեղեցիկ սիրո պատմություն, կան ընդհատված ու անկատար երազանքներ, արյունոտ էջեր, մի նոր ցեղասպանություն հայի հանդեպ ոչ հեռավոր անցյա-



Նալսաշա Պողոսյան

լում: Երկու երկրների միջև եղած քշնամության պատճառով խաթարվեց Ռենայի և Լեոյի սերը, կյանքեր կործանվեցին, մի հրաշալի առքբեցանուի դարձավ իր ազգակից ոճրագործների բռնությունների զոհը, թե ինչ է՝ ժխտեց այդ ազգին իր պատկանելությունը: Այս անգամ էլ ցավով այս գիրքը իմ ձեռքը վերցրի» /Զավայշան Վարդուիի/:

«Նորից վերլումբերցեցի այս գիրքը, նորից զգացումներս ու հույզերս խառնվել էին իրար, կոկորդս խեղբում էր, ուղղակի բառերով անհնար էր նկարագրել այն, ինչ կար սրտում, բառերն էլ կորցրել էին իրենց արժեքը՝ զգացածիս դիմաց: Ամեն ինչ այնքա՞ն ցավուտ է այստեղ, այնքա՞ն դառնալի ու անդառնալի կորուստներ կան այս գրքում, այնքա՞ն տառապած ու տառապող սրտեր, արցունքուտ ու արյունուտ էջեր... Ես տեսա այստեղ գրողի, որ ապրել է ու արարել ողջ կյանքում, տեսել անտանելի փորձություններ, բայց, անկախ ամեն ինչից, շարունակել է ստեղծագործել՝ հավատարիմ մնալով իր գրչին» /Հովսեփյան Լիլիր/:

«Այս գրքի դպրոց մտնելը շատ խրախուսելի է, բայց այն պետք է կարդան անպայման ավագ դասարանների դպրոցականները: Այստեղ նկարագրություններ կան, որոնք հասանելի չեն ինի միջին դպրոցի աշակերտներին: Սա այն գիրքն է, որ կարելի է կարդալ մի քանի անգամ» /Խաչատրյան Աննա/:

Երգչուիի դառնալու մեծ ցանկությամբ՝ այդ դասաժամին Աննա Խաչատրյանն ասաց, որ մի քանի երգեր է սովորել, և փորձնական հնչեցրած նրա երգի տողերն այնքան էին համահունչ՝ Սումգայիթի և Բաքվի ոճրագործության զոհերի հիշատակին, որ հուզեցին բոլորի: Իր հոգեպարար ծայնի ելեկցներով տարբեր երգերի տողեր լսեցինք, իսկ ամբողջ դասարանում մի անորոշ թախծոտ տրամադրություն էր տիրում: Համոզված էինք, որ Սումգայիթյան օրերին նախապատրաստվելիք մեր միջոցառումը՝ այդ ոճրագործությանն ականատես գրողի «Հեռացող եզերը» գրքի քննարկման շուրջը, հայությանը պատուհասած մղձավանշի ցավալի հիշողություն կլինի և հարգանքի տուրք՝ այդ վայրագություններին զոհ գնացած նախատակների հիշատակին:

*Հայկական լրագրական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2017-02-25
<http://www.usarmenianews.com/am-n-8147.html>*

ԿԱՐԴԱՆՔ ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Միշտ էլ ժայտանակ լու սովոր էր նա, բայց նրա երգի տողերը, առանց երաժշտության, այնքան թախծուու ու կենդանի էին հմչում, որ նոյնիսկ չեր զգացվում դրա պակասը, ամեն մի հնչյուն երանգավորվում էր իր գեղեցիկ ու նրբին ձայնով: Եվ իմ աշակերտուհու՝ Անգելինա Անդրյանից, չեմ էլ հարցնում, թե ինչ կարծիք ունի Լևոն Աղյանի՝ Սումգայիթի և Բաքվի սարսապրու դեմքերի նկարագրությամբ՝ «Հեռացող եղեր» գրքի մասին, մի գիրք, որ վաղուց մեր դպրոցականներին հարազատ էր դարձել: 12-րդ հունանիտար դասարանի աշակերտների հետ կատարված նախնական փորձերն արդեն զգացնել էին տալիս, որ փետրվարի 27-ին նախատեսված մեր գրական-երաժշտական հուշ-ցերեկույթը՝ ականատես-գրողի վեպի քննարկման շրջանակներում, առիթ կտա, որ այդ գիրքը բացում ընթերցողների նոր ստվար խմբեր ունենա:

«Երբ առաջին անգամ ընթերցեցի այս գիրքը, լեզուս կապ էր ընկել, ձեռքերս կարծես շղթայվել էին, չէի կարողանում երկար ժամանակ ոչինչ արտաքերել: Մի՞թե մարդ-արարածն ընդունակ է նման բռնությունների: Չնայած՝ ինչպես կարելի է մարդ համարել աքարտությունը հետևորդներին, որոնց երակներում արյան հետ կատաղությունն է հոսում: Աստված իմ, նոյնիսկ պատվազուրկ էին անում հայ կանանց ու աղջիկներին, այդ գազանները սարսափելի դժոխք էին ստեղծել հայերի համար... Չոհերի մեջ էր վեպի գլխավոր հերոսուհին՝ մի աղքրեցանուհի, ով հոգով հայուիի էր և ինձ համար՝ օրինակելի ու իդեալական կերպար: Նա կարող էր փրկվել այդ բարբարոսների ճանկերից, բայց գերադասեց նահատակվել, և կործանվեց Ունայի ու Լեոյի հավերժական թվացող այդ իրական սերը» /Ղույան գեղեցիկ/:

«Ամեն անգամ անհանգիստ ապրումներով եմ բացում «Հեռացող եղերը»: Ասում եմ՝ Սումգայիթի, Բաքվի ջարդեր... Լսում եմ ու զարմա-



Նալուշա Պողոսյան

նում, ի՞նչ ջարդերի մասին է խոսքը, երբ համատարած ոչնչացնում էին հայերին: Ամենուր իրար էին խառնված, դա կոտորած էր, արյունահեղություն... Ինչքա՞ն դաժան է ու ծանր, երբ աչքերիդ առջև տեսնում ես, թե ինչպես են մարդուն տանջամահ անում: Այդ վայրենիները չնայեցին ահել-ջահելների, սպանեցին հայերին նրանց հարազատների դիմաց, ներխուժեցին բնակարաններ, հաշվեհարդար տեսան անմեղ մարդկանց հետ: Ի՞նչ մեղք ուներ այն փոքրիկ մանկիկը, որ դեռ չծնված՝ սպանվեց մոր որովայնում: Ինչո՞ւ պիտի վառեին հայերին, բայց ինչե՞ր չարեցին այդ զազանները...Տե՛ր Աստված, ես համոզված եմ... գիտեմ, կգա օրը, երբ նրանց անունը կշնչվի երկրի երեսից» /Աքրահամյան Ռուզաննա/:

Գրքում այդ ոճրագործության իրական նկարագրություններն այնքան գերհուզական են ու զարհութելի, հոգեբանական ծանր ապրումների պատկերներով առկա, որ երբ աղջիկներին առաջարկեցի՝ որոշ հատվածներ կարդալ բնագրից, հրաժարվեցին: Դասարանի միակ տղան հանձն առավ կարդալ որոշ հատվածներ միջոցառման ժամանակ: Անհնար է առանց հուզումների ընթերցել այն բարբարոսությունների մասին, որ քաղաքակիրք աշխարհի աչքի առջև իրականացվել էր անցած դարավերջին ու ցայսօր մնում է անպատիծ:

Իսկ անպատմելիությունը նոր ոճիներ ծնեց՝ Գուրգեն Մարգարյան, Քյարամ Սլոյան...Որտե՞ղ է ուղղված քաղաքակիրք Եվրոպայի հայացքը...

*Հայկական լրատվական՝ Լու Անջելիսից,
«Մամկանարժի անկյուն» 2017-02-26
<http://www.usarmenianews.com/am-n-8149.html>*

**ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ
ՆԱՀԱՏՎԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**



Այօր Սումգայիթի ոճրագործության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումը՝ արձակագիր Լևոն Աղյանի «Հեռացող եղերք» գրքի շրջանակներում, կայացավ Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարանում։ Տնօրեն Սերգ Հայրապետյանի, թանգարանի աշխատողներ Մարինե Սիրայելյանի և Նահրա Ավետիսյանի ջանքերն իգուր չեն անցել՝ մեր դպրոցի 7-րդ ա և 12-րդ հումանիտար դասարանների աշակերտների միջոցով գրական-երաժշտական հուշերեկույթին մի նոր ոճական երանգավորում տալու համար։ Միջոցաման երաժշտական մասի օժանդակությունը նկատելի էր մշակույթի տան տնօրեն Թամարա Եղիշյանի ու այդ ոլորտի՝ իր աշխատողների մասնակցությամբ։

Հրավիրված էին Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի դաստիարակչական գծով տնօրենի տեղակալ Կարինե Բալասանյանն ու դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Պետրոսյանը, դպրոցի պատմության մեթոդիավորման նախագահ Արշալույս Գարբինյանը, 12-րդ դասարանի դասղեկ Նոնա Հայրապետյանը, 7-րդ ա դասարանի աշակերտների մասնակցությամբ՝ ասմունքի խմբակավար Սվետլանա Դալլարյանը, կենտրոնական գրադարանի տնօրեն Իրա Բաղրյանը, երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Սիեր Անդրյանը՝ իր աշխատողներ Գոհար Մամոնցի, Մանուշ Մաթևոսյանի հետ, նաև՝ դպրոցականներ։

Մարինե Սիրայելյանի նախնական խոսքը Բարվի և Սումգայիթի

Նադաշա Պողոսյան



հայության նկատմամբ իրականացված արյունահեղության դատապարտումն էր, որ առայսօր էլ, կոպտորեն աղավաղելով փաստերը, ոճրագործները մնացել են անպատճեցիք: Այդ ցեղասպանության հավաստի վկայությունը թերևս ականատես գրողի կողմից գրված «Հեռացող եզերք» վեպն էր, որի քննարկման և գրականերաժշտական ցերեկույթը վարելու նախապատվությունը վերապահվել էր մանկավարժիս՝ ին աշակերտների ակտիվ մասնակցությամբ: Ին խոսքում պատմական այդ դաժան իրադարձության զոհ գնացած բազում նահատակների հիշատակին կազմակերպված այս միջոցառումն էր, թանգարանում անցկացնելու միտումը, առանցքում՝ Լևոն Աղյան գրողը՝ իր «Հեռացող եզերքով»:

Գրողի կենսագրության ու գրական գործունեության համառոտ տեղեկություններին գուգահեռվեց վեպի դիպաշարի վերլուծականը, որ մեկընդմեջ հավելվում էր Գերտրուդա Բեգլարյանի, Մանե Հակոբյանի, Աննա Խաչատրյանի ու Անգելինա Անդրյանի թախսալից երգերի հմայիչ ձայներով: Գրքից ստացած տպավորություններով ու իրենց կարծիքներով կիսվեցին դպրոցականները՝ յուրաքանչյուրը յուրովի տարբեր, մեկը մյուսից հետաքրքրիր ու նույնքան՝ հուզական: Նրանց խոսքում գրի ու նրա հերոսներին կատար առանձնակի համակրանք կար, զիրք, որ անցած տարվա փետր-



Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

Վարից մտել էր դասարանից դասարան, առայսօր էլ նրա արցունքու էջերն իրենց հետքն են բողնում նրանց հոգական աշխարհում, եթք ամեն անգամ թերթում են այն:

Վեպի բնագրից ընթերցած հատվածները հաստատում էին այդ սև գործն իրականացնողների հրեշավոր դեմքը, որ ուղեկցվել էր սպանություններով, տանջանքներով, բռնաբարություններով, մարդկանց վառելով, վտարանդի դարձած հայությամբ: Դրանք պատասխան էին Արցախի հայ բնակչության խաղաղ ցույցերի, որոնցով արդարացիորեն պահանջվում էր իրականացնել ինքնորոշման սահմանադրական մեր իրավունքը:

Սիցոցառման ավարտի շնորհակալական խոսք ուղղված էր բոլոր մասնակիցներին, որ եզրափակվեց պատմաերկրագիտական թանգարանին՝ գրողի կողմից փոխանցված «Հեռացող եզերք» գրքի նվիրատվությամբ:

*Հայկական լրապրական՝ Լու Անջելեսից,
«Մանկավարժի անկյուն» 2017-02-27
<http://www.usarmenianews.com/am-n-8163.html>*

**ԲԱՑՈՒՄ ԵՆՔ ՍԻՐՈՎ, ԸՆԹԵՐՅՈՒՄ
ՀԱՓԵՏԱԿՎԱԾ, ՓԱԿՈՒՄ ԱՓՈԽԱՆՔՈՎ**



Այսօր ծաղիկներ

Սումգայիթի նահատակների հիշատակին: Դպրոցում մեր երեկվա միջոցառման վերլուծությունն էր՝ կարծիքների փոխանակություն, իիանալի արձագանքներ դրա նուադացման, գրքի բնարկման, անմեղ զոհե-

րի հանդեպ հարգաճքի դրսևորման մասին: Նորից 7-րդ ա դասարանում աշակերտների զգացած ապրումների մասին է խոսվում, նորից 12-րդ հումանիտար դասարանում նատարաններին Լևոն Աղյանի «Հեռացող եզերք» գիրքն է, առանցքով՝ նրանց՝ վեպից ստացած անցած տպավորությունները, որ այդ օրը Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարանի պատերի ներսում մի նոր շոնչ էին ստացել:

«Ես խոսելու ունակությունս կորցրել եի, երբ խորասուզվել եի վեպի ընթերցանության մեջ: Առաջին անգամ գիրքն ընթերցելիս զգացի, թե որքան թանկ և որքան դժվար է լինում բաժանումը: Սումգայիթում և Քարվում կատարված ճակատագրական եղավ շատերի համար, այն ծրագրավորված է եղել նախօրոք, այդ են վկայում ջարդարարների մոտ հայերի բնակարանների ցուցակների առկայությունը, այդ ոճիրն իրականացնելու համար արտադրամասերում մետաղաձողերի և այլ գործիքների պատրաստումը: Երեք օր շարունակ նրանց բռնությունները զարհութելի էին, ջարդարարների գործողությունները՝ անօրինակ դաժան: Անմահ գործեր շատ են եղել: Ինձ թվում է՝ կանմահանա նաև այս վեպը: Իր առաքինությամբ մարդասիրության օրինակ է նաև Աղյան արձակագիրը» /Կանիելյան Անուշ/:

«Կարդացի գիրքը, խառնվել էին մտքերս, ուզում էի արտահայտել այն, ինչ կա ներսում, բայց ասես ոչ մի կերպ չէի կարողանում բացատ-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

թել զգացածս: Կյանքը շատ դաժան է, չես կարող պատկերացնել, թե թեզ համար ինչ է պատրաստել հաջորդ վայրկյանին: Վայրագությունների ալիքը սրբեց-տարավ իր ճանապարհին եղած ամեն ինչ: Դաժան ճակատագրի արժանացավ Ունան՝ սպանվելով իր իսկ ազգի խուժանի կողմից: Երանի թե հնարավոր լիներ անզգայանալ ու չզգալ այն ցավն ու տաճշանքը, որն ինձ պարուրեց զիրքը կարդալոց հետո»:
/Բաղրան Իննա/:

«Դժվար է, երբ տխուր է հոգիդ, երբ չես կարողանում ժպտալ, երբ ներսումդ տիրում է դատարկություն: Կարդալով վեպի առաջին էջերը՝ մտածում էի, թե ինչքա՞ն գեղեցիկ է այստեղ սերը, ինչքա՞ն սրանչելի է պատկեր- ված նոր ծնվող զգացումը: Բայց երբ կարդացի դաժան սպանությունների մասին, խոհերս մուր զիշերվա նման մրագնել էին: Սիրտս ցավում էր՝ Ունայի նկատմամբ դաժան բռնության դրվագը կարդալիս: Տիրությունն իր պաղ շնչով պատել էր հոգիս, ամեն ինչ դարձել էր գունազուրկ: Ամենաանտանելի վիշտը հոգու ցավն է, բայց ակամայից սովորում ենք դրան ու ապրում այդ ցավով րոպե առ րոպե, ժամ առ ժամ, օրեր, տարիներ և ամրող մի կյանք: Խսկապես ամենացավալին այն է, որ կորցնելով մեզ համար ամենաբանկ մարդկանց՝ մեզ ոչինչ չի մնում, քան համակերպել նրանց կորստին» /Արզումանյան Լադա/:

«Այս գրքում գրողն ապացուցեց, որ սերը չի ճանաչում ազգություն, հավատ ու տարիք: Ափսոս, որ այդ գեղեցիկ սերն ունեցավ այդպիսի վերջաբան: Ես ընդիմանաբառես դեմ եմ, որ հայն այդ ազգի հետ ընտանիք կազմի, բայց երևի այն ժամանակներում դա ստվորական էր, իսկ հիմա՝ անհնարին բան: Երբ այն դաժանությունների մասին կարդացի, ունայնություն իջավ վրաս, բայց նաև ինձ հուսադրեցի, որ այս ոճրագործները պատասխան են տալու մի օր՝ իրենց անմարդկային արարքների համար» /Կարապետյան Սյուզաննա/:

Ես փակում եմ այս զիրքը, որ բացել էի դպրոցում անցած փետրվա-



Նալբաշա Պողոսյան

թիմ: Այս մեկ տարում այն մեզ հետ էր, մեր հոգում և դարձել էր մեր լավ ու վատ օրերի ուղեկիցը... Գիրք, որի մասին այս մեկ տարվա մեջ ամենուր լսել եմ, որ սա այն ամենահետաքրքիր գիրքն է, որ մի շնչով է ընթերցվում, իսկ որպես մանկավարժիս ամփոփիչ խոսք՝ վստահորեն կարող եմ ասել, որ սա այն գիրքն է, որ բացում ես սիրով, ընթերցում՝ հափշտակված, փակում՝ ավասանքով:

Հայկական լրատվական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն» 2017-02-28
<http://www.usarmenianews.com/am-n-8172.html>

**«ԻՐԻԿԱՎՅԻՆ ԱՂՋԱՄՈՒՂՋԻ»
ՄԻ ՀՈՅՎԿԵՐՏ ՔԱՆԴԱՎ**

Ապրիւյան քառօրյա այդ դժմղակ օրերին պատերազմը մեզ համար դարձավ մարդու ինքնաճանաշման փորձաքար՝ տագնապներով ու ողբերգական անցըներով, մարդկանց հերոսական բնավորություններով, որտեղ ազատության, սեփական հողի վրա ապրելու իրավունքի համար անկուտրում կամքով ու արիությամբ հերոսներ են անմահանում, դառնում խիզախության ամրակուր ոգի ու լեզենդ:

Գրիչս այդ օրերի որդեկորույս մայրերի կողքին անցյալի մեջ հայկնոց, արիասիրտ մոր խորհրդանիշ կերպար էր փնտրում... եվ այն պիտի դառնար հինգ զավակ կորցրած Շահում մեծ մայրը՝ արցախյան բարբառը շուրթերին՝ կյանքի մայրամուտ ապրող այդ տառապած կինը:


Արձակագիր Լևոն Աղյանի «Իրիկնային աղջամուղ» ժողովածուն լույս է տեսել Ստեփանակերուում: Այն բովանդակում է հեղինակի մի շարք վիպակներ, պատմվածքներ ու մանրաքանդակներ, որոնք արտացոլում են հայրենի Արցախ աշխարհի ու նրա մարդկանց առօրյան: «Իրիկնային աղջամուղ» համանուն վիպակը զետեղված է այդ ժողովածուի մեջ, որտեղ բնական ու հարազատ գույներով գրողը պատկերել է Հայրենական մեծ պատերազմի, դրան նախորդող և հաջորդող ժամանակաշրջանների հայ գյուղը: Բնավորությամբ և իր ապրած դժվարին կյանքով Շահում մեծ մայրը, իմ կարծիքով, տարբերվում է մեր գրականության մեջ պատկերված հայ կանանց կերպարներից, նա համարվում է որպես հինգ զավակ կորցրած մոր խորհրդանիշ կերպար: Կյանքի մայրամուտ ապրող կնոջ վերջին օրերը՝ քաղցրահունչ լեզվի ու բնաշխարհի մեջ ներհյուսված անցյալի մեջ են, իսկ այդ անցյալում անասելի ծանր ճակատագրով ապրած գրողի հարազատ տատն է՝ իր տառապալից կյանքով, նրա պատկերած գյուղը և այնտեղ արարող մարդիկ: Հիրավի, Շահումը արցախցի մոր լավագույնս մարմնավորված կերպար է, որի մեջ խտացված իմաստ, արժեք ու խորհուրդ կա: Համբերության, նվիրումի, զսպվածության ու սիրո անշեց կրակ է:

Սա բառարվե՞ստ է, թե՞ սիրո արտահայտություն՝ հայրենի հող ու ջրի, բառ ու բանի հանդեպ, որ դրսից եկող պարզունակ ծայներին, բոշունների դայլայլին, առավոտվա անապակ լույսին, տերևների երգեցիկ սվավոցին, ամեն-ամեն ինչին անհաղորդ, հեռավոր մտքերին, վերհուշերին տրված՝ Շահում տատի անուշ և հյութեղ լեզվով արցախյան բար-

Նալուշա Պողոսյան

բառի շունչն է քաղցրերգվում ու աշխարհն ասես լցնում ծով քարությամբ. «Վո՞ւ, քո անցվորանց գերեզմանին լույս գա, բա ևս բա՞ն եմ ուտում: Ուտեմ որ ի՞նչ. պառավի կերածը կորածա, այան թեզ մատաղ» կամ «Այսն մատաղ, ինչի՞ ես էստեղ նստել, գնա հանդերը ման եկ, մարդ երեխա ժամանակ ման եկած տեղերը շատ կկարոտի», ու նտովի իշշում են հայտնի տողերը. «Ինչ չքնաղ լեզու է կյորեսերենը...Չուտեիր և չխմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես քաղցր և նուրբ հնչյուններով խոսում է լվացարարուիի Մինան...»:

Եվ այս մտքին զուգահեռ՝ հնչում է Սեծ մոր քաղցրածոր լեզուն՝ իշեցնելով մեզ, որ այս մեկը նույնպես իր քնության, ծառի ու քարի, անցյալի ու ներկայի, նաև լեզվի նկատմամբ ծնրադիր խոնարհում է. «Գլուխս, է, դրոսում, դիմդնգում է, հարսանիք է, ինչ է, հասկանում չեմ...-ու շարունակում է՝ գլուխս օրորելով, մի տեսակ ասես երգելով,- մարդուս բաժին կյանքն էս աշխարհում շատ է կարճ, այան թեզ մատաղ, ամեն ինչ հոսում է, կյանքն էլ է հոսում ոնց որ ջուրը, բայց իմ ջուրն արդեն վերենից, է՝, ակունքից կտրած է, մնացել է մի ծլով, էն էլ որտեղ որ է՝ էսա կկտրվի»:



դրանք նրանք վիզ ծուեմ»: Անգամ, երբ ալյուրի պարկը շալակած նա տուն է մտել, նրանից «սպիտակ հացի հոտ էր» եկել, այն էլ՝ սպիտակ, ու մրմունջն էլ դարձել է բողոք լսելի. **«Մեծացնեմ, տեղ հասցնեմ ձեզ ու էլ դարդ չունեմ»:** Մարդուն վիճակված է տառապանք, ու այդ տառապանքը տանջում է նրան, որ խտացնում է հայ կնոջ ընդհանրական կերպարը: Ուզում ես հայացք ուղղել նրա հոգու խորքը, որի մեջ մի ամ-

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

բողջ տիեզերք կա, մի կյանք, և այդ կյանքն էլ հստել է նրա կողքով «ոնց որ ջութ»: «Ինչպես թռչնակ՝ նա պատեպատ է զարկվել», բայց նրան պարտադրված էր մաքառումներով նվաճելու իր կարողության սահմանները:

Ընդամենը մի քանի տող, հրաշալի համեմատություններ, որ գալիս են լրացնելու նրա հմայքը. «Աչքերը ոնց գիշեր՝ սև են եղել, բերանը՝ պողի նման կարմիր, մեջքը՝ ճապկի պես նուրբ ու բարակ», «ձայնը ոնց որ քամու հետ եկող ջրի խոխոց», որ խոսելիս մերք դողացել է, մերք բրրուն դարձել կտրվող լարի պես: Ծնվում է ինքնահացումը, մարդոց ցավի հաղթահարումից ավելի ուժեղ է դառնում ու շրեղանում է իր արտահայտած խոսքով. «Քարով կորիվ չինի, խաղաղություն լինի, դու էլ բարով երեխերին տեղաց անես, հացը բու լինի, սով չտեսնաք,- ինչպես օրինանք մրմնջում է նա:- Աստված ձեզ հազար ճողնը շինի ու երեսներդ լվացած տեղը վարդ ու մասնուշակ բսնի»:

Մարդն այստեղ անցնում է հոգևոր զարգացման երկար ճանապարհ, մակդիրավոր կապակցություններն ավելի տեսանելի են դարձնում այն: Երազանքներով տարված՝ «շուրբերի ծայրերին» ունեցած «հուսակորույս ժափտով» նա «տագնապալից սպասումներ» պիտի ունենար, «հրաշունչ օրեր» պիտի տեսներ, որ կարողանար վիշտն անխոռվ տանել: Փոխարերությունների շարքը բնության, թե մարդու տարբեր հոգեվիճակների իրական արտահայտություն է, այնտեղ «օրերն անբաժան են», որտեղ սկսում է «հալվել ցրտել տաք գիշերը», «արտերը տաքություն են բուրում», «սահուն ծորում է դեղձանիկների երգը», «ծուլքը գալարվում է տանիքների վրա»:

Մի թախծագին տիսրություն է համակում հոգին, երբ գյուղից հեռացած գրողի գրիշը հիշեցնում է ընթերցողին, որ «հուշերի մեջ խորասույզ, կապույտ ստվերներով շղարշված ճանապարհով» քայլելիս մտածում է այն մասին, որ այդ վայրերի հետ իրեն կապող շատ քիչ քան է մնացել:

Ու հիշորության մեջ նորից երևում է, թե ինչպես Մեծ մայրը ձեռքը բռնած՝ նրան տանում է գյուղի գերեզմանատուն: Շուրջբոլորը խոտ ու ծաղիկ է, բռչունների երգ, Մեծ մայրը գունատվում է, շուրբերը դողում են. «Գնա էն կողմը, ծաղիկ քաղիր, բեր դի՛ր քարերին»:

Ստեղծագործելու այս անթերի արվեստում գրողը մնում է բոլորին հարազատ՝ մարդն աշխարհ է եկել, ապրում է իր հուշերով ու անցողիկ կյանքի գաղափարը հիշեցնում է մեզ, որ ժամանակն անցնում է իր շարժման օրենքներով, դա ցավերի ու հոգսերի աշխարհ է, այդ ժամանակի սկիզբը գալիս է անհիշելի ժամանակներից, որ պայմանավորված

Նապաշա Պողոսյան

է բնության հավերժականությամբ, որտեղ մարդը չէ իր կյանքը տնօրինողը. «**Ոչ ոք չի գգում, թե ինչպես է անցնում ջահելությունը, սակայն ամեն ոք գգում է, երբ արդեն այն անցել է»: Ու այդ կյանքում նորից երևում է Սեծ մայրը, որն այս կյանքում իր բաժին դժվարը տեսել է արդեն..., «մարդկանց մեջ մինչև էղ լուս, շուրբերը սեղմած, գունատված կանգնած էր, հանկարծ չորեչոր, ինչպես առաջները զնում էին սրբի դուռը, այդպես էլ չորեչոր մոտեցավ հուշարձանին, գլուխը դրեց պատվանդանին ու դառը լաց եղավ»: Իսկ հուշարձանին նրա որդիների անոններն էին: Ու գրողի ստեղծած այս հուշարձանի կողքին երևում են մեր օրերի սևսիրտ մայրերը՝ որդիներ կորցրած, ցավի կնիքը դրոշմված դեմքներին: Մի տեսակ արձագանք է տալիս Սեծ մոր խոսքը. «**Իմ տունն էստեղ է, իմ երեխներն էստեղ են»: Ու այս բառերի շարքը՝ էստեղ, էսօր, էգուց, էնտեղի, էս, էդ, գալիս են լրացնելու մոր հյութեղ խոսքը, որ հայրենի գյուղում ապրող մարդը միշտ էլ հավատարիմ է մնալու իր քաղցրահունչ լեզվին, որ երբեմն դառնում է հարազատ, իր օջախին կառչած:****

Ու նորից արդիական է դառնում թեման, օտարության մեջ ապրող մարդը ցավագնորեն շատ ժամանակ հեռանում է երբեմն արմատներից, հավատից անգամ: Եվ ցավագին է հնչում, սաոցասառն տոնով իր արմատներից հեռացած մարդու խոսքը. «**Մի՛ որոնեք ինձ, իմ հավատն ուրիշ է...Մի՛ որոնեք...»: Համոզվում ես, որ այս տողերը կարդացող յուրաքանչյուր որ սարսուն կզար, ուժացման ցավը հոգում կունենա, բայց նաև Աղյան գրողի կենսափիլխափայությունը դառնում է մեծ ճշմարտություն, որ ժամանակներն անցնում են, անցավոր է մարդը իր ապրած կյանքով, քանի «Մարդ մի օր ծնվում, մի օր էլ պիտի մեռնի, վախենում ես մեռնելոց, թե չէ մեկ է, նա զալու է»:**

Ազգի գգոնության կո՞չ է սա, որ մեր օրերում էլ օտարությունը կարուտի բույն է դարձել, ազգի հիշողության բարմացո՞ն է սա, թե՞ սրավիեցնելու կոչ, որ պատմության ու ժամանակների քառուղիներով անցած ժողովրդին չպետք է հոգեպես կորցնել, ու հայրենաբարձության կարուտի զգացողության կողքին, թեպես օտարության մեջ, կսկիծը նույն է դառնում. «**Ամեն ինչ մաշվում է, նույնիսկ վիշտը, ժամանակը բուժում է բոլոր վերքերը, բացի հարազատ զավակի կորստի վիշտը»: Ու այդ վիշտը դառնում է քեզ ընկեր. ամենուր, ամեն տեղ դու նրա հետ ես...**

Զարմանալի՞ չէ, որ իմաստությունն իր մեջ կրող Սեծ մայրը երբ մահանում է, այդ պահին կռունկների երամ էր անցնում գյուղի վրայով, կռունկների երամը հանկարծակի փոխում է ուղղությունը, երկու անգամ

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

պտտվում է տան գլխավերնում և թևածելով հեռանում իրիկնային աղջամուղի ոսկե շողերի մեջ՝ իր հետևում բողնելով թախծագորով մի կանչ։ Ու նորից պատկերավոր արվեստն է խոսում գրողի՝ «...և հետզհետ» ձորերը լոին խորասովում են իրիկնային լուրք աղջամուղի մեջ։ գետակը լուս, հավքերը լուս, մոտիկ արտերում արտույտներն արդեն էլ չեն արտորում...Զայները կամաց մարում են դրսում, և հետզհետեւ իշնում է մուրք՝ իր սև շղարշով ներընդգրկելով ամեն մի շշով, ամեն մի շարժում...»։

Սի պահ մտորում ես՝ ուրեմն վե՞րջ, այսպես ամեն ինչ՝ խավարի մեջ թաղված... Տիրում է հոգին, բայց նորից ծնվում է լույսը՝ «սարերի վրա, բարձր երկնքի անձիր կապույտում աստղերի բույլը իր անհատնում լույսերն է հղում հեռու երկրին։ Աստղացող լույսը՝ խավարում նիրիող դաշտին, գետակին, հավքին ու մարդուն...»։

Կենսասիրությամբ լեցուն Աղյան գրողի բեղմնավոր գրիչը նորից բոլորի հոգին լցնում է բերկրանքով. «Գու մի՛ վիատվիր, խավարից հետոն գալիս է լույսը, իսկ հույսը մեռնում է ամենավերջում, շուտով, շատ շուտով կրացվի նոր օր՝ արևը, լույսը և հույսը իր հետ», ասել է թե՝ նոր օր կրացվի՝ արևով, լույսով, հույսով երիզված...»։

Բայց նորից գրիչը մի պահ կանգ է առնում. «մի տեսակ ընկալելի ու անընկալելի գյուղի վրա բացվում էր լույսը», բայց արդյո՞ք այդ լույսը հույս և ուրախություն կրերի բոլոր մարդկանց... Մտորում ես լուս, բանզի ինչ էլ որ բերի, հաստատ ոչ նրանց համար, որ մեզ հետ չեն այլս։

Եվ վերջում բառահյուսվածի ստեղծման մեջ վարպետացած գրողին կարող եմ ասել, որ ստեղծած անսպասելի դիպուկ պատկերները գեղագիտական հաճույք են պատճառում ընթերցողին։ Նրա խոհերին միանում է կրակոտ զգացմունքների և փիլիսոփայական խոհերի միասնությունը, որի առանցքում հայտնվում են հոգեբանական ներքին բովանդակությամբ հագեցած կերպարներ, իսկ դրանց կողքին ամբողջանում է Լևոն Աղյան գրող արվեստագետի ու հրաշալի մարդու դիմանկարը՝ «Իրիկնային աղջամուղի» մի հրաշակերտ քանդակ։

«Հուսարար», թիվ 12-13, 2016 թ.

Հայկական լրապետական՝ Լու Անջելիսից,

«Մանկավարժի անկյուն», 2016-03-07

<http://www.usarmenianews.com/am-n-1866.html>

**ԻՐԻԿԱՎՅԻՆ ԱՂՋԱՄՈՒԴՅԻ
ՏԽՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՆԵ**



Ղիտեմ, որ այդ վիպակը գրողի ամենասիրելի ստեղծագործությունն է, որի մասին, որպես ուսուցչուհի, ամիսներ առաջ հասցրել էի գնահատանքի խոսքեր գրել։ Նաև զարմանալի չէր, որ այս օրերին վիպակների և պատմվածքների միակ ժողովածուն 12-րդ դասարանում աշակերտները հերթականությամբ տանում էին ընթերցում։ Եվ չզարմացա, որ գիրքը կարդալու ցանկություն հայտնեցին նաև մյուս դասարաններից։ Իսկ այս մեկը՝ Լադա Արզումանյանը՝ շատ համեստ ու ազնիվ մի աշակերտուհի, կարդաց համանուն վիպակը էլեկտրոնային տարրերակով և հաջորդ օրն ինձ ուղարկեց իր տպավորությունը կարդացածի մասին։

«Հոգիս աճշափ տիսեց, երբ կարդացի Լևոն Ալյանի «Իրիկնային աղջամուլջ» վիպակը։ Որքա՞ն շըեղ ու հարուստ է այն, հիշողություններ կան այնտեղ, սեր, կարոտ, խարեւություն, պատերազմ, կորուստ, ցավ... Եվ որքա՞ն ծանր էին Շահում տատի կյանքի էջերը։ Բայց նա ուժեղ էր, կարողացավ տանել կյանքի հասցրած ամեն մի հարված։ Միայնակ մեծացրեց իր հինգ որդիներին և ցավալիորեն ապրեց նաև նրանց կորուստը Հայրենական մեծ պատերազմի տարիներին։

Պատկերացնում եմ, թե ինչպիսի զգացումներ ուներ Շահում տատն այն ժամանակ, երբ գիտակցում էր, որ որդիները գտնվում են իրենից հազարավոր կիլոմետրեր հեռու՝ պատերազմի կործանարար ձեռքերում։ Երևի այդ ցավի ապրումներին միախառնվել էին նաև դասարկությունն ու անորոշությունն, անզորությունն ու կսկիծը, որ կեղեքում էին նրա սիրտը։ Բայց ակամայից նա սովորեց դրան ու ապրեց հոգին կեղեքող ցավով բռպե առ բռպե, ժամ առ ժամ, օրեր, տարիներ շարունակ։ Իսկ երբ հասավ կյանքի մայրամուտը, նա արդեն կուրացած էր, և զիսում իրաք էին խառնվել լավ ու վատ հիշողությունները։ Երևի նրա սիրտն այրվում էր անհուն կարոտից ու հետ չվերադառնող, նորից չկրկնվող անգին պահերից։ Եթե որդիների կորուստը չլիներ, երևի թե նա կարողանար փակել իր անցյալի ցավոտ էջերն ու հանգիստ ապրեր

նրանց երջանկությամբ:

Իմ ուշադրությունը գրավեց նաև Սամվելի կերպարը: Երբ երկարատև որոնումներից հետո գտան նրան, պարզվեց, որ արդեն փոխել էր հավատը, լեզուն, ամուսնացել էր օտար աղջկա հետ և արդեն երեխաներ ուներ: Չեմ կարողանում մեղադրել հայրենիքից հեռու ապրող այդ մարդուն: Նա միայնակ էր այդ օտար երկրում, իուս չուներ, որ երբևէ կհաջողվի իրեն վերադառնալ հայրենիք, և այլ բան չէր մնում անելու, քան համակերպվել և շարունակել ապրել ուրիշ հավատքով, ուրիշ լեզվով: Կարոտ ու տաճանք կա այդտեղ, հոգին խոցող ուժգին հարվածներ:

«Իրիկնային աղջամուղջ» վիպակը կարդալուց հետո մտքերս խառնվեցին իրար, բայց բառերն անկարող են բացատրել իմ ապրած հուզմունքը: Միայն հասկաց, որ կուգենայի մարդու ուղեղում կամ սրտի մեջ մի կոճակ լիներ, որի օգնությամբ հնարավոր լիներ չգգալ ոչինչ, մի որոշ ժամանակ ապրել առանց սրտի, առանց զգացմունքների: Մեր կողքին էլ պատերազմ կա, սգավոր մայրեր ունենք, անհում տառապանք: Ամենացագալին այն է, որ կորցնելով մեզ համար ամենաքանի մարդկանց՝ մեզ ոչինչ չի մնում, քան հարմարվել նրանց կորստին»:

Հնրերցեցի իմ աշակերտուիու տպավորությունը, և լրությանս մեջ այդ վիպակի մասին իմ գրած տողերն են մտարերում. «Գյուղից հեռացած գրողի գրիշը հիշեցնում է ընթերցողին, որ «հուշերի մեջ խորասույզ, կապույտ ստվերներով շղարշված ճանապարհով» քայլելիս մտածում է այն մասին, որ այդ վայրերի հետ իրեն կապող շատ քիչ քան է մնացել:

Ու հիշողության մեջ նորից երևում է, թե ինչպես Մեծ մայրը ձեռքը բռնած՝ նրան տանում է գյուղի գերեզմանատուն: Շուրջբոլորը խոտ ու ծաղկի է, բռչունների երգ, Մեծ մայրը գունատվում է, շորքերը դողում են. «Գեա էն կողմը, ծաղկի քաղի՞ր, բեր դի՞ր քարերին»: Իրոք, բառերն անկարող են դառնում՝ բացատրելու աված հուզմունքը: Մի անհանգիստ և սիրու կերեքող տառապանք մի նոր կսկիծ է բերում հեռվից... Տառապանք, որ վերնագիր ունի, հարազատ բովանդակության հարազատ անուն, ապրումների փորձ, որ գուգորդվում է «Իրիկնային աղջամուղջի» հետ: Եվ այդ հեռուներում երևում է բոլորիս հարազատ դարձած մեր համերկրացի Աղյան գրողը՝ մի վշտամորմոք որդեկորույս հայր, որ ծաղիկներ է խոնարհում իր երկու զավակների շիրիմներին:

*Հայկական լրագրվակամ՝ Լու Անջելիսից,
«Սանկավարժի անկյուն», 2016-10-29
<http://usarmenianews.com/am-n-6294.html>*

**ԱՆՍԱՀՄԱՆ ՏԻՐՈՒԹՅԱՆ
ՍԱՆՐԱՔԱՆԴԱԿՅԱԼ ԽՈՀԵՐ**

Sիեզերասույզ մտքի դեգերումներով արձակագիր Լևոն Աղյանի ստեղծագործություններում առանձնանում են մանրաբանդակներ, որոնք կարծես գրողի խոհերի բաղադրիչներ են, փոքր մենախոսություններ: Որպես հոգեկան ապրումների արտահայտություն, մտքերի ու զգացմունքների մտորումներ՝ գրված են խոր ներշնչմամբ, ինքնարուիս, բարձրարվեստ, սրտի թելադրանքին անսալով: Իրենց տեսակի մեջ ինքնատիս ու անկրկնելի են, գրողի արձակի մեջ ճառագած կենսախինդ ու թախծոտ երանգով հագեցված, որ երբեմն վշտաբեկ են դառնում անմիջական ու բռնկուն տարերքով: Քանդակված այս մանրապատումները գրողի անհանգիստ մտորումների հրաշալի համաձուլվածք են, որոնք ինչքան անձնական, նույնքան անանձական են, համամարդկային ու մարդասիրական:

Նայում ես վերնագրերին, դրանք էլ խորհրդանշական են, շատ իմաստալից, կարծես ամեն ինչ ասված է, և ահա հայացք բրբռում է տողերով, կարծես մեղեդի է ալիքվում հոգումդ, երկնային գոյյներ կան այնտեղ, խորհրդավոր շշուկներ, իսկ հեռավոր հորիզոնում թևածում է մի հուսահատ կոռունկ: Կոռունկի թևերին ամպերի ծանրություն կա, տիսուր ու թախծոտ հորիզոններ, բայց նա հզոր է իր տիսրության մեջ: Կոմիտասյան շունչը մեզ հիշեցնում է երամից կտրված կոռունկներին, երբ նրանք տեղ չեն հասնում, չեն հանգրվանում, մի տեղ ընկնում են ու մահանում: «Օրոր, օրո՞ր, իմ օրերին օրո՞ր, իմ օրերին բոլոր՝ օրո՞ր, օրո՞ր...քո՞ն մտիր, սի՞րտ իմ, քո՞ն մտիր, կոտրած թևերով թշնակ իմ, քո՞ն մտիր խաղաղ, մեր սին հույսերին օրոր, անուրջներին օրոր, օրոր, օրո՞ր» («Օրոր, օրոր»):

Բայց Աղյան գրողի պատկերած կոռունկի հոգնած ու թևկված թևերից ու կտուցից կարկրում էր նաև կուլուն, որ հոգի է կեղեքում և կորցրած երամին գտնելու հուսահատ փորձեր անելով՝ հեռավոր ու տաք իր երկրի հուշն ու կարոտն է երգում. «Կոտրու-կոտրու...թախծազորով կանչերով գնում եք տաք երկրներ: Ես էլ հավը եմ թևահատ՝ ես մնացած երամից, ինձ էլ տարեք, ա՝խ, ձեզ հետ, չմնամ այս ցրտերում»: Կոռունկն էլ բափառիկ է, նրա աղերսագին ծայներում իր ցավից էլ կան, միայն պետք է կարողանալ նրան լսել ու հասկանալ. «Սիրտս երկիրն է ուզում մեր, ուր մեղմ հով կա շնկնելան, կակաչազարդ հանդ ու սար, ջինջ գե-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

տակներ քչչան, անտառները թափախիտ իրենց գույնն են ամբողութ, լրին է կանչում քաղցրալուր դեղնագունած արտերում...» («Կոունկ-ներ»): Կամ՝ «Հեռվից նայողը ինձ չի հասկանա, իմ սիրտը հեռու լեռներում է միշտ, այստեղ է հոգիս, ու ես կարոտից գիշեր ու ցերեկ այրվում եմ անձուխ...» («Իմ սիրտը հեռու լեռներում է միշտ»):

Ուզում ես ինքնամոռաց լսել հայրենի անտառների խոլ ու անդուլ շառաչը, այստեղ մարդն իր կարոտը իրեն գուրգուրող անտառներից ու զանգակ աղբյուրներից է առնում, քամին էլ հարազատ է նրան, որ իր հետ քերում է հայրենի բնաշխարիի լիակուրծք խշշոցը. «**Ղարաբաղն իմ սիրտն է հեռավոր, եզերքն իմ՝ այլևս անհաս, և հոգին իմ՝ վհատ ու նկուն, երբ իշնում է գիշերը լուսնիկա, բափառում է քնած հանդերում ու մանկուր կածաններով նրա:** Դեղնած արտերն այնտեղ ծփուն օրորվում, ալիքվում են քամուց, շրջան կազմած՝ ծտերի երամն է անցնում հին կալերի վրայով, ծիրանագույն արևի մեջ տատրակն օդում կախվում, քարանոս է անշարժ, լորի գեղգեղանքն է ծորում ծաղկանախշ դաշտերում» («Ղարաբաղ»):

Գրողին ուղեկցող քախիծը փոխանցվում է ընթերցողին, դրամատիկ հոգեվիճակ է ստեղծվում, այս անձնական անհանգիստ մտորումները դադարում են անհատական լինելուց և դառնում են մարդկանց սրտերը հուզող ընդհանրական զգացումներ: Հայրենիքի նկատմամբ կարոտը դառնում է աշխարհով մեկ սփոված հայության ցավագին մորմոքը. «**Ղարաբաղն իմ հոգին է հեռավոր ինձ համար անմատուց այլևս...**» («Ղարաբաղ»): «**Հնչքան էլ որ հեռու լինենք մենք քեզանից, մեր օրոքան, ուր էլ լինենք հարափոփոխ մեր այս կյանքում, կապրես մեր մեջ դու հանապազ, միշտ անպակաս դու մեզանից՝ մեր հուշերում, մեր սրտերում ու մեր հոգում» («Արցախ»):**

Հնարավոր չէ առանց հուզունքի կարդալ որոշ մանրաքանդակներ, որոնք անձնական մեծ կորստի արտահայտություն են, տառապած հոգու ցավագին ճիշ, որտեղ արտացոլվում է արձակագիր գրողի հոգևոր մաքառումը. «**Ես աղերսում էի Վաստում՝ Տե՛ր իմ, պահապա՛ն եղիր իմ զավակներին, և քախանձում ու պաղատանքն էի հղում իմ նրան: Խնայի՛ր Տե՛ր իմ, մրմնջում էի, քանզի կենսարար արև են նրանք մեր զիսավերեւ, և առանց նրանց լուսերեւս տեսքի ու մեղուշ ձայնի՝ փուշ է մեզ համար աշխարհը արար» («Եղերգ»):**

Մարդու հոգին միայն ցավից կարող է ողբալ, բայց ծովանում են հույզերը, որ դառնան սիրտ կեղեքող երազներ. «**Վս էլ քանի՛, քա՛նի**

Նապաշա Պողոսյան

անգամ երազներում տեսնում եմ ես զեղեցկատեաք իմ լույս որդուն...Ասես խոռվ ամեն ինչից ու ամենքից՝ բարեկամից, չարեկամից, լույս աշխարհից ու աշխարհի նենգ ու դավից, բազմատանց ու նահատակի իր սուրբ տեսքով Քրիստոսի որդիս հանկարծ հառնում է ինձ մշուներից, հեռվից հեռու լրին ու հեգ նայում է ինձ անմեղսունակ հույլ ժպիտով...» («Գրա՛ ինձ, տե՛ր»):

Սիրտդ ճնշվում է աղեկսուր տառապանքից, բայց այն անհատական լինելուց բացի, որտեղ նկատվում է նաև մի տիսուր կենսագրություն, վերածվում է լնդիանուր, տիեզերական մեծագույն ցավի, դառնում մարդու ճակատագիր՝ բարձրագույն արվեստով քանդակված. «Տե՛ր իմ Աստված, եթե դու կաս, իրավ դու կաս ու զորեղ ես, ամենազոր, երգորազոր, ասա՛, ինչու չես կամենում այս աշխարհից վերացընել վիշտ ու մորմոք: ...Գոնե գըթա՛, գըթա ինձ, Տե՛ր, մեղմի՛ ր ցավը իմ անանցիկ. զրկիր մտքից, հուշ ու սրտից, գուցե թե իմ հոգետանց ու սիրտ կեղեքող այս կրակին ես դիմանալ կարողանամ...» («Գրա՛ ինձ, տե՛ր»):

Երբեմն գրողը խոսում է Աստծո հետ, հոգու ընդգումը շարունակվում է, թե ինչու է կյանքն անարդար, և անձնական վիշտը վերաճում է ազգային բախսի, մարդկային տառապանքի հանդեպ գրողի կարեկցանքը բացահայտում է մեծ մարդասերին. «...Եվ ո՞ւ ի Աստված: Տիեզերական հավիտենուրյան իր գահին բազմած՝ այդ բարձունքներից չի իշնում նա ցած՝ ունկն դնելու ողբ ու կականն իր իսկ արարած երկըրի վրա: ...Իր տունն ու տեղը բողած բուրքերին՝ հարյուր տարուց վեր՝ Աղանա գեհենից մինչև Սումգայիթ ու մինչև Բաքու, բայլում է մարդը՝ լրյալ վշտաբեկ...» («Եվ ո՞ւ էր Աստված»):

Մարդը ենթակա է քմահած ճակատագրի հարվածներին, համբերությունը կորցրած անհատը երբեմն դիմում է Աստծոն, իր հոգու և մտքի ձայնը հանձնում թղթին, որով անձնական տառապանքը դարձնում է ընդիանուրական: Կյանքի և նահվան առեղծվածը միշտ էլ հետաքրքրել է մարդուն, բայց այդ սահմանագծից էլ սկիզբ է առնում անմահուրյան գաղտնիքը, որն առնչվում է յուրաքանչյուր էակի գոյության հետ: Հենց այս կենսափիլխոփայուրյամբ էլ գրողը խորհուրդ է տալիս. «**Իմացի՛ր, որդի՛ս, կյանքը շատ է կարծ, ժամանակն անցնում, անունն է մնում, պիտի աշխատել լավ անուն թողնել մարդկանց սրտերում, որպեսզի հետո ոչ թե ուրիշի, ինքդ քեզ ասես՝ իզուր չապրեցի ես այս աշխարհում» («Խրատ որդուս»):**

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

Գրողի հոգին երգում է մանրաքանդակներում՝ երթեմն տխուր, երթեմն հիացած, երթեմն տողերը հոգուն լրություն են բերում, և լրության մեջ կերպավորվում է անհատը, որ ամեն ինչից նա ամենազոր է, որ կարծես նկարչի ձեռքով կարողանում է իր խոհերը վրձնել բղթին։ Անձրևի շշուկն անգամ լսում է նրա հոգու ձայնը, որ երթեմն ծառս է լինում աշխարհի անարդարության դեմ։ «Ես այս աշխարհից հոգնել եմ արդեն։ Էլ չեմ դիմանում կեղծիքին, ստին, շողոմքոր մարդկանց շողոն խոսքերին, հանկարծ փող տեսած՝ հոգով աղքատի զագիր պահվածքին, փող ունեցողի քանականքին, չունեցողների խոճախից տեսքին էլ չեմ դիմանում» («Հոգնել եմ արդեն»)։

Այդ խոհերի արձագանքները լսվում են շատ բարձր, հեռու-հեռուներում, երթեմն օդն է շիկանում է գրողի մի խոսքից, «արևահամ» են դառնում բառերը, բույրը տարածվում է ամենուր։ Երգը սիրելու համար ասում են՝ պարտադիր չէ հասկանալ նրա բառերը։ Ընթերցողն էլ զգում է, որ մարդը երթեմն իր լրության մեջ փարարվում է անհուսությանը, անորոշության ծանրությունից երթեմն կարող է ծնվել զայրույթը, բայց նորից ու նորից կարծես ոզի է առնում և ազդարարում, որ մարդը ընդունակ է նաև լինել անսահման հզոր իր տիրության մեջ, և սկսվում է սիրո բուռն ապրումների ու խոհերի անկաշկանդ հոսքը մանրաքանդակներում։ Այս դեպքում արդեն անգերազանցելի է մայրական սերը, այն կյանքի հենարանն է, աշխարհի չարիքներին դիմագրավելու համար այդ սերը հզոր պատվար է դառնում։ «Վատծուց բարձր ու կյանքից քանի՝ մայրն է, մայրն է մեր միայն։ Ու երբ որ դու թևեր առնես ու հեռանաս՝ զերքած օտար քմայքներով, հրայրքներով հոգեզմայլ, նա թեզ երբեք չի մոռանա, իր ավեր տան շեմին կանգնած՝ հեզ ու վհատ, կսպասի թեզ՝ աչքը ճամփին, սիրտը ճամփին, հոգին ճամփին...» («Մեր մայրերին»)։

Այստեղ այդ մեծ սիրո գաղափարին զուգահեռվում է անվախճանության խորհուրդը, մահը նաև դառնում է հավերժության մեջ մարելու, նոր սկզբի, հավերժությանը ձուլվելու խորհրդանշան։ «Ես մեռել եի։ Ինձ քաղել եին, կամ այրել եին. դա չէ կարևոր. ես հառնել եի։ Ես հառնել եի ուրիշ աշխարհում. ընկերները իմ չկային արդեն, ովքեր էլ կային՝ ծերացել եին. ինձ մտաքերել չկարողացան։ Մայրս...մայրս անպայման ինձ կճանաչեր, արցունքն աչքերին կրծքին կսեղմեր, բայց...մայրս չկար։ ...Ես հառնել եի, բայց մեկը չկար ինձ դիմավորեր...Ու նորից մեռա, որ դառնամ կակաչ, կամ մի այլ ծաղիկ՝ ամեն լուսայզի ողջունեմ

Նապաշա Պողոսյան

մարդոց յուրաքանչյուրին...»:

Բարձր ներշնչանքով գրված նրա սիրային մանրաքանդակներում կարևորվում է սիրո հոգեբանական մի նոր հատկանիշ, վիլխտփայական գաղափարն այն է, որ սերը մարդուն ուղեկցում է ամբողջ կյանքի ընթացքում, այն իմաստավորում է մարդու կյանքը՝ անկախ տարիքից ու ժամանակից: Դրանք հագեցած են նաև սիրո հավերժական կրկնության և կյանքի ունայնության տրամադրություններով. «...Այս աշխարհում ամեն ինչ էլ անցողիկ է, ու տևական ոչինչ չկա: Ինչ որ կյանքում սկիզբ ունի, ունի և վերջ: Սիրո հուշն է լոկ տևական, որ հեռավոր մշուշների շղարշներից հանկարծ հառնում, թև է առնում, որ դու տարվես ցնորդներով անքանական ու կարենաս երջանկավետ այն պահերի անուշ հուշի ցավը մեղմել: Արագոնքաց քաղցր հուշի, որ առհավետ եկավ անցավ ու այլևս չի կրկնվի» («Սերը հրաշք է»):

Գրողն իր մենախոսություններում փորձում է հաստատել նաև այն ճշմարտությունը, որ անկախ կրոնից ու ազգային պատկանելությունից՝ մարդուն ամենուր հասանելի են ուրախությունն ու տխրությունը, քշվառությունն ու սերը...«Սիրո համար ազգություն ու կրոն չկա: Սերը վարդ է, իսկ խանդը՝ փուշ: Առանց փշի վարդ չի լինում, առանց խանդի՝ սեր չի լինում: Սերը վեր է ամեն ինչից, քանզի նրա կենդանարար սուրբ լույսով է օծված շուրջը ամեն մի բան»: («Սերը հրաշք է»):

Սերը ուղեկցում է մարդուն ամբողջ կյանքում, իմաստավորում նրա ապրած օրերը: Լևոն Աղյանը մեծ վարպետությամբ բացահայտում է սիրո ամենազոր ուժը, նրա պատճառած հոգեկան տառապանքն ու կորցրած մորմոքը: Երբեմն այդ սերը մարդուն տանում է մեծագործությունների, ուժ ու եռանդ տալիս նրան: Բայց նաև սերը քմահաճ է, երբեմն առեղծվածային, որ չգիտես ինչպես, ծնունդ է առնում և օծում մարդուն հրաշալի արժանիքներով: Աշխարհը երևում է մանրաքանդակներում իր լուսավոր և ստվերու կողմերով, բայց միշտ էլ գրողը մնում է որպես մարդկային լուսավոր հոգու ջատագով և լույսի ազդարար. «Երջանկությունը հորիզոն է մի՝ ինչքան մոտենաս՝ հեռանում է այն: Անցողական է ամեն բան կյանքում, դա նույնպես կանցնի, ամեն ինչ կանցնի, հույս մի՝ կորցրու հանդեպ լավ օրվան: Դարձի՛ր արմատիդ՝ որտեղից գալիս և ուր ես գնում, բարություն արա ու գցի՛ր գետը, կտեսնես՝ մի օր առջևե կգա» («Իմ սիրտը հեռու լեռներում է միշտ»):


Որպես վերջաբան՝ մի քանի խոսքով կարող եմ ասել՝ եթե Լոռվա հանճարեղ բանաստեղծի խոսքերով բառյակներն իր հոգու կենսագրու-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

թյունն են, ապա Աղյան գրողն այս փոքր ծավալի արվեստի սրանչելիք-ները իրավացիորեն կոչել է մանրաքանդակներ: Գրողի խոսքն այստեղ աչքի է ընկնում հակիրճությամբ, սեղմությամբ, քիչ բառերով շատ բան ասելու առանձնահատկությամբ: Իր ստեղծած պատկերներն ել արտահայտում են նրա բարձր արվեստն ու անկրկնելի գեղեցկությունը: Գրողի կյանքն էլ ընդհանուր կյանքից անբաժան է, նրա ցավը և՝ անձնական է, և՝ ընդհանրական, նա ապրում է հեռավոր օտար ափերում, բայց իր ինքնությամբ նա մնում է հայեցի՝ երբեմն բարձրանալով անձնական տառապանքից, ազգային ցավերից ու խնդիրներից, երբեմն շոշափելով նաև համամարդկային հարցեր:

«Սպիտականակերպ» շաբարարելք, 15 ապրիլի
Հայկական լրագրական՝ Լու Անգելեսից, «Մանկավարժի անկյուն»,
2016-03-27 <http://www.usarmenianews.com/am-n-2325.html>
«Ալեկիս» պարբերական, 2016-03-27 <http://westarm.org/11130.html>
Արցախի հանրային ռադիո, 09.06.2016
<http://www.artskh.tv/am/programs/show/25137>

ԱՅՆ ՀԵՌԱՎՈՐ ԱՄԱԿՆ
ԿՐԱԿՈՏ ՀԵՌԱԲՆԵՐԸ



տարիների, անցած օրերի մի անմոռաց հիշողություն միշտ զգացնել է տալիս իր գոյությունը, որտեղ նաև քաղաքից եկած գեղեցիկ աղջիկ կա և զյուղում ապրող պատանի, որոնց կորսված սերը պիտի դառնար մի բախծոտ վերհուց: Պատանեկան այդ սերը Վահրամին հասցնում է քաղաք, բայց աղջիկը գիտեր իր առավելության գիտակցությունը, զգում էր իր ազդեցությունը պատանու վրա, և իր գեղեցկության արժեքն իմացող աղջկա անհավատարմությունը պիտի դառնար չկայացած մի տխուր սիրո պատմություն: Եվ տարիներ անց նրանց հանդիպումը ափսոսանքի զգացում պետք է ծներ աղջկա մոտ, որ կորցրել է անվերադարձ մի գեղեցիկ աշխարհ, ուր հարազատ եղեքք կար, կարոտ կար անհաս, պատանության օրերի սիրո մի գեղեցիկ վերհուց:

Երբեմն մի խնաստալից ասույթ կամ որևէ հեղինակից կատարված քաղվածք, որ սովորաբար զետեղված է լինում տվյալ ստեղծագործության վերնագրի տակ, արտահայտում է այդ գրական երկի ամբողջ ասելիքը: Հենց այդ առումով էլ ուշադրության է արժանի այս վիպակի բնաբանը: «Կյանքը եղել է զինջ ու արևկա, Երկինքը՝ կապույտ, Մենք ընդամենք տասնուր տարեկան...» /Ցու. Սահակյան/:

Լևն Ալյանի «Այն հեռավոր ամռանը» վիհակի վերիուշը մի թախ-
ծալի տրամադրություն է ատեղծում, նոյնիսկ ընթերցողն ինքնարուիս
տրամադրվում է, որ իմանա այս վիհակի հիմքում ընկած այդ տիսուր
օրերի պատմությունը, երբ յուրաքանչյուրի կյանքում էլ անմոռանալի
գեղեցիկ օրեր են լինում և երբեք չեն մոռացվում. «Վյոր ես վերստին
ուզում եմ հիշել այն իին, հեռավոր օրերը, և այդ օրերի մեջ՝ Մարինեին:
Ուզում եմ հիշել այն հեռավոր, բայց անմոռաց ամառը, այն հերիարա-

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

յին, անդարձ ամառը, իմ առաջին հանդիպումը Մարինեին...»: Բակունցի ոճին շատ քնութագրական է վերհուշային պատումը, որը խոսքին հաղորդում է անմիջականություն և անկեղծություն, քնականություն և հուզականություն: Ապրած լյանքի մի պահը, սիրո անկրկնելի զգացումը տարիների հեռավորությունից գունավոր թեկերով կապվում են նոր օրերի հետ և կամաց-կամաց հյուսում կարտուների մի նոր աշխարհ:

Այսան գրողի այսպիսի ոճը վիպակի հաջողված լինելու լավագույն հատկանիշներից մեկն է, այն միշտ էլ ընթերցողին հրապուրում է խորքային ջերմությամբ, երբ կամաց-կամաց ընդզորկվում ես քաղաքից զյուղ եկած աղջկա և զյուղում ապրող տղայի խոհերի ու զգացմունքային նկարագրով, անհանգիստ ապրումներով և անկեղծությամբ: Ինչպես իր մյուս ստեղծագործություններում, այնպես էլ «**Այն հեռավոր ամռանը»** վիպակում գրողի լեզուն շատ պարզ է և անպաճույժ, միօրինականությունից հեռու, կենդանի ու պատկերավոր և թրթռում է քնարական շնչով: Աղջկա խոսքով զյուղում ապրող պատաճուց «**ասրերի բույր է գալիս», իսկ նրա հոգում աղջկա «ձայնը մեղեքու պես»** է հնչում: Իմաստային առումով միասնական ամբողջություն կազմող այս պատկերավորման միջոցները խոսքը դարձնում են դիպուկ, արտահայտիչ ու ներգործուն, որոնց գործածությունն առանձնապես յուրահատուկ է գեղարվեստական ոճին: Խոսքին պատկերավորություն և արտահայտչություն տվող միջոցները ձևավորվում են բառերի ու արտահայտությունների և նախադասությունների ու խոսքի շրջանակներում. «**Լուս էին և ձորերը, լեռները, զյուղամերձ տաք անտառները, սարերը, ուր ամբողջ օրը գերանդիներն առաջ խոտ էինք հարում տղաներով...**»:

Փորձում են տարբերակել փոխարերությանն առնչվող բառային դարձույթների տարբեր տեսակներ, երբ իրերին ու երևոյթներին, կենդանիներին ու քոչուններին վերագրում են մարդկային հատկանիշներ, և անձնավորումը կիրառելով՝ խոսքը դառնում է հյութեղ ու հմայիչ. «...**Խավարի մեջ այլևս չեն երևում հանդերը, հանդերը նույնպես, երևի քնել էին խոր քնով», «**Ներքևում՝ ձորում, համրացել էին դեղձանիկները...**» կամ «**Մքան մեջ երգում էր դեպի զյուղի բանջարանոցները վագող առուն**»: Աննկատ չի մնում նաև փոխանունություն բառային դարձույթի գործածությունը, այստեղ քնակիչների, մարդկանց փոխարեն ապրելու վայրն է նշվում, և հարազատ զյուղը մեզ երևում է մարդու հոգուն ցավ պատճառող տարբեր իրավիճակներում. «**Գյուղը, ամռային****

Նալուշա Պողոսյան

օրվա աշխատանքներից հոգնած, քնել էր խոր քնով» կամ «Ամայացել էր մեր Հնձախութիւն առանց Մարինեի»:

Ընդամենը մի քանի բառ և ահա մեկտեղվում են տարրեր բառային դարձույթներ, իսկ նման գեղարվեստական բառահյուսվածք ստեղծելու վարպետությունը միայն տաղանդներին է հասուկ: «Գյուղը դատարկ էր իմ սրտի պես» /փոխանունություն և համեմատություն/, «Կատաղի խանդր ալիք տվեց իմ հոգում» /մակդիր և փոխարերություն/, «Աչքերը կրակի շեղջի պես հորիրատում էին» / համեմատություն և փոխարերություն/, «Նորաբաց վարդի պես բարմ շուրթերի բույրն էի շնչում» /համեմատություն, մակդիր և փոխարերություն/: Լինելով պատկերավորման միջոցների նախնական ու պարզագույն ձևը՝ համեմատությունը՝ որպես ոճական դարձույթ, հանդիսանում է նրանց բոլորի հիմքը, որի առանձին գործածությունը նույնպես նկատելի է այս վիպակում. «Սերը, ինչպես կրակը մոխրի մեջ, մնում է», «Երջանկությունը նման է հորիզոնի, ինչքան մոտենում, այնքան հեռանում է քեզանից», «Գու լավն ես, իսկ մազերդ ոնց որ ոսկեցրած, ձայնի է անչափ բարի է: Ասես լեռնային գետակի կարկաչ» կամ «Անցյալը երթեք չի անհետանում, այն ստվերի պես շարունակ հետևում է մեզ»:

Այստեղ կարենի է առանձնացնել փոխարերույթը, որն ինքնին տարբերվում է փոխարերությունից, այն իր մեջ ունի համեմատության տարրեր, որտեղ պակասում են նման, պես, ինչպես և այլ սպասարկու բառեր. «Աղջկա շուրթերը նուն գույն էին ստանում», «Խնձորենիների մետաքանան կեղլու կենդանի մարմին էր հիշեցնում», «Սերը աստվածային պարզել պես շարունակ հետևում է մեզ»:

Հանդիպում ենք նաև համեմատական մակդիրների՝ ձյունանման ատամներ, մանուշակաբույր պարանոց, ծաղկաբույր մատներ... Հոգեկան տարրեր վիճակների արտահայտություն են այնպիսի մակդիրների գործածությունը, որտեղ գորդն այդ հուզական ապրումներն արտահայտում է գործող անձերի բացահայտման ճանապարհով՝ դրանով իսկ ընթերցողին հաղորդակից դարձնելով նրանց հոգու ներքին շարժումներին՝ խուլ լուռություն, քաղցր ջերմություն, բախծանուշ ժպիտ, խշշուն լուռություն, շաղված նայվածք, խելառ երանություն, հուսակտուր վիհատություն, միամիտ մաքրություն, փիսրուն ջերմություն, խորամանկ ժպիտ, խելացնոր համբույր... Նույնքան հետաքրքիր են նյութական իմաստ արտահայտող առարկաներին վերագրված քնարական շնչով հագեցած մակդիրները՝ հարազատ աղբյուր, մենավոր դեզեր, ծաղկաբույր մատներ, կրակոտ շուրթեր, բախծաժպիտ աչքեր, խելացի արև,

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

**մեռած տերևներ, տխուր օր, հերթաքային երեկո, մաքուր գիշեր, կրա-
կացայտ աչքեր, կամակոր շուրթեր...**

Գոյցներն էլ այստեղ իրենց առանձնակի դերն ունեն, ամեն մի երանգ կամ գոյցների յուրաքանչյուր հարաբերակցություն որոշակի իմաստ, տրամադրություն, զգացմունք է արտահայտում՝ **սպիտակ** դեմք, կապույտ աչքեր, կարմրաքույր շրջազգեստ, կանաչ մարգեր, կա-
պույտ մշուշներ, ծիրանագույն արև, ոսկեգույն ծղուտներ, կապտակա-
պույտ աչքեր, վարդակարմիր շուրթեր, հրակարմիր զգեստ, ոսկեզօծ
մազեր, կապույտին տվող երկինք, ..ծովի մուգ կանաչավուն մա-
կերևույթ, և մազափունջ, ցորենագույն մաշկ...

Գեղեցիկ սիրո պյատմություն է վիպակը, բայց միշտ չէ, որ իրական սիրո երազանքները իրականանում են, և գեղարվեստորեն ստեղծված հրաշալի պատկերները գալիս են հիշեցնելու ընթերցողին, որ երբեմն բարձր ոգևորությամբ սերը փլուզվում է, ապրած զգացողությունն ու կանացի գեղեցկության ու հմայքի նրբագեղ պատկերները դառնում են ամսոռանալի հիշողություն. «...Իմ առաջին հանիպման վերջին օրն եմ ուզում իիշել, այդ օրը նա գնում էր մեր գյուղից: ...Ծա-
ռերը հանդարտ ու տխուր օրորում էին գլուխները, տերևները մանրիկ դողում էին, սվավում էին, դեղանիկները բախժածոր երգում էին, հետո լուսմ, ականջ էին դնում ու նորից երգում էին...»:

Եվ այդ օրը պետք է հյուսվեր մեկ օր ապրող թիթեռնիկի մասին մի տխուր պատմություն, որ պիտի հիշվեր որպես չկայացած մարդկային մտերմության անամոք մի ցավ. «Կա թիթեռնիկի մի տեսակ, որ մի օր է ապրում...Ուսկե թևիկներով մի թիթեռնիկ ապրեց մի ամբողջ օր, և այդ օրն ամպոտ էր, շարունակ անձրև էր տեղում...Արև չկար, չկար դեղա-
նիկի երգը...Անցավ օրը, և ոսկե թևիկներով թիթեռնիկը ոչինչ չտեսավ
ու չիմացավ, որ օրերը լինում են նաև արևոտ, աշխարհը լցված է լինում
ցնծուն ձայներով...Իր կարճատև կյանքն այսպես ապրեց ոսկե թևիկ-
ներով փոքրիկ թիթեռնիկը»:

Այս վերջին օրն էլ պիտի ունենար շարունակություն՝ հոգեկան մտերմության մի նոր մթնոլորտ, մի նոր հանդիպման բերկրանք ու մի նոր բաժանում, որտեղ պիտի իր հարատևությամբ փայլատակեր գրո-
ղի իմաստուն և ճշմարտացի մարդկային կենսափիլխոսփայությունը, որ երբեմն կյանքում լինում են բաներ, որ հնարավոր չէ ետ վերադառնել՝
«նետած քարը, ասված խոսքը, չօգտագործված հնարավորությունը,
ժամանակը, որ բաց է բողնվում, և սերը, որ կորցրել ես ընդմիշտ»: Ու
պիտի հավերժացվեր սիրո մասին աստվածաշնչյան բանաձևը, որն իր

Նալուշա Պողոսյան

դաստիարակչական հնչողությամբ դեռ սերունդներ պիտի դաստիարակի. «...Կինը տղամարդու կողոսկրից է ստեղծված, որ միշտ կողք կողքի լինի տղամարդու հետ՝ նրան հավասար...Թևի տակ, որ պաշտպանված լինի...Սրտի կողմից, որ սիրված լինի...»:

Ամբողջ վիպակը հյուսված է ապրած կենսական վիճակների վերապրման ու կարոտի զգացողության մի այնպիսի ոճով, որ ինչքան գրողը կենդանացնում է անցած օրերի վերհուշը, այնքան ավելի տառապագին է դառնում հոգին այրուրած ցավը. «Ես այսօր ուզում եմ վերստին հիշել այն հեռավոր ամդարձ օրերը, և ասես ներքին մի ձայն ինձ կամացուկ ասում է՝ մի՛ հիշիր դու գեղատեսիլ վայրերը քո պատանության, ինչ թողել ես այնտեղ վաղուց, ել չես գտնի, ոչ վայրերն են այնտեղ արդեն գեղատեսիլ, և ոչ ել դու՝ այն պատանին...»:

Մի պահ պատկերը ցավալի է դառնում, մի՞թե հայրենի եզերքից հեռացած որդիները խորբանում են իրենց հողին ու բնության լեզվին, բայց կամացուկ նորից այդ ներքին ձայնը հուշում է. «Մի՛ հիշիր... Մի՞թե հնարավոր է դա, և մի՞թե հնարավոր է նորից մոռանալ լուսնյակ այն գիշերը...», ու նորից «Հեռվում ասես տարիների հեռու խորքից, կարոտարած ու տիրածոր կանչում էին շոգեքարշ գնացքները», որ կարոտի զգացողությամբ են լցնում մարդու հոգին դեպի այն հեռավոր ու հարազատ եզերքները, որտեղ ապրել է նա իր պատանեկան սիրո այն անդարձ հրաշալի օրերը:

Մի խոսքով, կարող եմ ասել, որ Լևոն Արյան արձակագիրը կարողացել է ստեղծել վիպակի իր տեսակը, որը լեզվաոճական առանձնահատկություններով հանդերձ բնութագրվում է նաև իր կառուցվածքային յուրօրինակություններով, զգացմունքների խտացվածությամբ, իրական կյանքի համադրությամբ: Այստեղ անբաժանելի են բնաշխարհն ու մարդը, մի հայրենի աշխարհ, որի հանդեպ անսահման սեր կա, կարոտ, մի քանձր վերհուշ՝ քախծախան ու անվերադարձ: Եվ թվում է՝ տարիների հեռավորությունից ու այն հեռու- հեռավոր եզերքների բարձրակետից, որպես մաքառնան ոզի ու գոյատևման հավատ, նա հսկում է իր հայրենի բնաշխարհի անդրորը, որտեղ հավերժական են իրենց գեղեցկությամբ բնությունն ու մարդը, և որտեղ ծնվել էր իր անկրկնելի առաջին սերը, այն կորցրած աստվածային սրբությունը մաքրամաքուր:

«Եղիցի լուս», 2016թ., թիվ 02 (171)
Հայկական լրապատճեն՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անլյուսի», 2016-03-19
<http://www.usarmenianews.com/am-n-2148.html>

ԿՅԱՆՔԻ ՄԻ ԳԻՐՔ ԵՎ ԿՈՐՑՐԱԾ ՄԻ ՍԵՐ

Ա դասարանում բարձրաձայն լուսաց, որ այդ գիրքը, եթե բոլորն ընթերցեն, իրեն փոխանցեն, ուզում է նորից կարդալ վիպակներից մեկը: Ես գիտեի, որ նրա հոգում անհանգիստ տփայտանքներ կան, բայց փորձում եք ցույց չտալ: Օրեր անց նա ինձ հանձնեց Լևոն Աղյանի «Երիկնային աղջամուղ» ժողովածուն և մի տեսակ տիխրանած ու խղճախի ասաց, որ նորից ընթերցել է «Այն հեռավոր ամռան» վիպակը, մի ստեղծագործություն, որի հերոսուիին անշափ հուզել է իրեն:



Նա խոսում էր հատ-հատ, մի քիչ էլ՝ կցկտուր. «Ես դադար չունեմ, ընթերցում եմ, տիսրում, լացում, որոշ ժամանակ անց նորից եմ թերթում, տողեր ընթերցում, ավելի հուզվում: Այդ վիպակն ինձ սովորեցրեց, որ վսեմ սիրո համար մի ամբողջ կյանք է հարկավոր, իսկ այն կորցնելու համար՝ մի վայրկյան: Տեսնելով Մարինեի տառապալից կյանքը՝ հիմա կարողանում եմ տարբերել ճիշտն ու սխալը: Հասկանում եմ արդեն, որ մեր կյանքի գեղեցիկ վարդերը կարող են բռնելու ուրիշի գրկում, ինչպես վիպակի գեղեցկատենչ Մարինեն, որ չգնահատեց իսկական սերը և դժբախտացավ՝ իր հետևում բողնելով սիրո մի անմոռանալի հիշողություն»:

12-րդ հումանիտար դասարանում է սովորում Անուշ Դանիելյանը, ամենաընթերցասեր աշակերտուիլին է, ազնիվ բնավորությամբ մի հրաշալի անձնավորություն: Այդ վիպակում Աղյանի գրական կերպարների ապրած զգացողությունը զուգահեռվում է իմ աշակերտուին անձնական ապրումներին. «Ինչքան էլ անիրազործելի լինեն երազանքներս, ես քարուն հույս եմ փայփայում, որ մի օր նրան կհանդիպեմ: Սկզբում համոզված էի, որ նրա սրտում ես տեղ չունեմ, զայրանում էի, որ զանգահարում, անհանգստացնում եք օր ու գիշեր: Եվ մի օր էլ նա մոռացավ ինձ անսպասելի: Ես սկսեցի կարոտել նրան, հիշել նրա կցկտուր խոստումները... Ինչպես Աղյանն է ասում, ես հասկացա, որ անմոռանալի, գեղեցիկ օրեր միշտ էլ լինում են, ուղղակի պետք է պահպանել այն երկու ձեռքով, որպեսզի ժամանակ առ ժամանակ մեր սրտերը լց-

Նապաշա Պողոսյան

վեն սիրով, կարոտով ու երջանկությամբ»:

Հիշողությունս վերարտադրեց «Այն հեռավոր ամռան» վիպակում արտահայտած գրողի իմաստուն և ճշմարտացի մարդկային կենսափիլխովայությունը. երբեմն կյանքում լինում են բաներ, երբ հնարավոր չեն վերադարձնել՝ «Ենտած քարը, ասված խոսքը, չօգտագործված հնարավորությունը, ժամանակը, որ բաց է բողնիում, և սերը, որ կորց-բել ես ընդմիշտ»:


Ես մտքերով իմ աշակերտուիու հետ եմ, որ ուզում եր գրել նամակ, և ինչքան շատ բաներ ուներ նրան բացատրելու, բայց հաղթահարեց ցավը, չուղարկեց իր գրած նամակը. «Ես վախիկոս եի, ամաչկոտ, աղջկա-կան հպարտությունս թույլ չտվեց ուղարկեմ այդ նամակը, բայց սկսե-ցի սպասել: Որքան տհաճ եր այդ սպասումը, նույնքան անդուր էր ուշա-ցումը: Հիմա եմ հասկանում, որ ուշացումը հավատի սպասում է՝ հույ-սի կորուստ»:

Որպես ուսուցչուի՝ ուզում եմ օգնել նրան, և իզուր չեմ, որ երբեմն դպ-րոցում ամենաշահեկան դիրքորոշումն եմ ընտրում՝ դեռահասի հետ ավագ դասարաններում լինել ընկերական, մտերմիկ միջավայրում: Եվ ահա իմ աշակերտուիին մտովի երևում է ինձ այդ վիպակը թերթելս, որ նրա համար դարձել է կյանքի գիրք, որպեսզի կարողանա հաղթահարի դեռահասության ճգնաժամի դժվարությունները: Նաև մայրական սի-րով ու զգանքով է պետք մտենալ դեռահասության ու պատանեկու-թյան տարիքի բոլոր այն աշակերտներին, ովքեր հուզառատ ապրում-ների մեջ են, այնպիսի ապրումներ, որոնք ծնողական կամ մանկավար-ժական անուշադրության դեպքում կարող են սրացվել և անկախատե-սելի հետևանքներ ունենալ:

*Հայկական լրագրական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-10-19
<http://usarmenianews.com/am-n-6103.html>*

ՆՎԻՐՈՒՄ

Անհաճիսստ սրբի տրոփյունով վերջերս Արցախում հանդիպեցի մեր համերկրացի, բայց սփյուռքում ապրող արձակագիր գրող Լևոն Աղյանի և նրա ստեղծագործությունների ոռութեն թարգմանչուհի Նելլի Ավակովայի հետ:



Ակատմամբ կարուր աշխարհով մեկ սփռված հայության ցավագին մորմորն է, ու հայրենի երկրի և հարազատ մարդկանց հանդեպ այդ կարուր ճանաչված ու հարգված գրողին ու նրա երկերի տաղանդավոր թարգմանչուհուն բերել էր Արցախ: Եվ շոտով ես իմացա, որ Սանկտ Պետերբուրգում բարձր տպաքանակով Նելլի Ավակովայի հովանափորությամբ ու նրա իսկ թարգմանությամբ տպագրվում է Լևոն Աղյանի «Այս հեռավոր ամռան» խորագրով վիպակների ու պատմվածքների ոռութեն գիրքը, որի հիմքում հայրենի Արցախն է, իրենց ազնիվ աշխատանքով ապրող մարդիկ:

Ասեմ, որ մինչ այդ ես Նելլի Ավակովային երբեւ չեմ տեսել: Ապրիլյան պատերազմական ծանր օրերին հեռավոր Լու Անշենեսից եկած հեռախոսազնոր ինձ անակնկալի բերեց: Սյուս կողմից մի հարազատ ձայն ինձ ասաց, որ Ղարաբաղի բարբառով խոսեմ:

Սփյուռքում ապրող բանաստեղծուի Նելլի Ավակովան էր խոսում: Ես նրան, այս, երբեւ չեմ տեսել, բայց գրուցում էինք անկեղծ, շատ անմիջական... Մարտակերտում տիրող մղձավանջային ծանր վիճակը բոլորի մտահոգությունն էր: Մեր գրագրություններով և հետազայտմ հաճախակի դարձած նրա հեռախոսային զանգերով հեռվից հեռու հասկանում էի, որ հայրենի բնաշխարհով ապրող իս հայրենակցուին կարոտի թևով ամեն օր այստեղ է, իսկ նրա բանաստեղծություններում հայրենի Արցախն էր թևածում:

Սիով բանիվ, մանկության ու պատանեկության օրեր կան Նելլի

Նայուշա Պողոսյան

Ավակովայի բարձրարժեք թարգմանությամբ հրատարակվող այդ գրքում, մի հայրենի աշխարհ, որի հանդեպ անսահման սեր կա, կարոտ, անցած օրերի մի թանձը վերհուչ՝ թախծախսառն ու անվերադարձ։ Աղյանական գրողական կյանքի՝ իր նախընտրած բնագավառը հայրենի բնօրրանն է, բնությամբ հագեցած գյուղական միջավայրը՝ համակրելի հերոսներով լնողովկած, գեղեցիկ ու մաքուր հուզական աշխարհով։ Այդտեղ սիրելի մարդիկ կան անցյալի հիշողություններում, և անսահման մեծ ափսոսանք կա կորցրած-զնացած օրերի հանդեպ։

Ես այդ հարազատ վայրերն այցելած գրողի ու բանաստեղծութու կերպարներում տեսա շատ հասարակ ու պարզ, ինձ շատ մտերիմ մարդկանց, սակայն չնայած իմ հայրենակցութու ստեղծագործական գործունեության ու թարգմանական աշխատանքի մասին գիտեի, բայց երբեւ նա չէր ակնարկել այն մեծ մարդասիրության մասին, որ ինքն է անում ազնիվ ու նվիրական մղումնվ։ Ուստի Այդան գրողի գնահատանքով ու մանկավարժիս հարգալից խոնարհումով սրտանց ողջունում եմ Նելլի Ավակովայի այս հրաշալի նախաձեռնությունը՝ իր հովանավորությամբ «Այն հեռավոր ամռանը» ռուսերեն գրքի հրատարակության համար, մի գիրք, որի համանուն վիպակը խորհրդային տարիներին հազարավոր տպաքանակներով հայերեն բազմաթիվ հրատարակություններ է ունեցել։

ՀՀ Սիյուռի նախարարության
«Հայերև այսօր» պարբերական, 18. 08. 2016
<http://hayernaysor.am>

**ՀԵՌՈՒՆԵՐՈՒՄ ՏԱՐԱՎԻՔ ՀԱՅԵՐԻ
ԿԱՐՈՏԻ ԵՐԳՆ Է ՀՆՉՈՒՄ**

Ես ուզում եմ իր ստեղծագործությունների տողերի արանքում վիճակը նրան՝ մի հայուհու, ով ապրում է օտար ափերում: Իր մասին պատմող ֆիլմն եմ նայում, ու նրա ընթերցած տողերի արանքում տեսնում հայրենիքից հեռու, հայրենի հողի կարոտով ապրող հայուհու: Այնտեղ բանաստեղծուիկ կա՝ Նելլի Ավակովա Գրիգորյան, ով իր հայրենակարոտ տողերով ընդիմանրացրել է ժամանակակից մարդուն՝ անցյալի տխուր հիշողությունների ու ներկայի օտարության խաչմերուկում: Այն ազդարարում է հայի ճակատազրի մասին մի պատմություն, որ հասուկ է շատ-շատերին ու տարրեր՝ յուրովի....

Տարեգրություն է այն, կարոտի երգ՝ հորովելի բախծալի մեղեդայնությամբ օծված, որ նկարահանվել է հեռավոր Լու Անջելեսում, որտեղ անուններ կան, որ արժանիքույս մեծարանքի են արժանի: Այն հայի հոգու ճիշն է, որ կամաց, բայց հնչեղ արձագանքում է օտարության մեջ ապրող մարդու կակագող հոգուն: Այդ փաստագրական ֆիլմը կարոտի երգ է, որ հանդիսատեսին տանում է մտորումների գիրկը՝ հետևում բողնելով անզուսաց մի թախիծ...

«Երկիր Սեղիայում» տեղադրված տեսանյութն եմ նայում արձակագիր Լևոն Արյանի մասին՝ «Գրողը՝ Ղարաբաղի հեռու լեռներից»: Ամենուր հայրենի Արցախ բանաշխարհի և Արյան գրողի միասնությունն է ամրագրվում, որ եկել էր այն հեռու-հեռավոր լեռներից: Մի անցած խմբագրական կյանք կա անցյալում՝ Բարվում ապրած տարիներից, ցավալի խոսք՝ հունվարյան ջարդերի ու ապրիլյան դեպքերի մասին:

Չեռքիս Նելլի Ավակովայի՝ ինձ նվիրած իր գիրքն է՝ «Ղարաբաղ... Ցավ և հիշողություն», ու նա ինձ երևում է Բարվի ոճրագործությունից փրկվածների մեջ և հետագա տարիներին՝ այդ ճշմարտությունը բարձրածայնելիս... Նա ինձ երևում է մի քանի ժամկա մեր հանդիպման ընթացում, երբ հյուրընկալվել էր իմ տանը՝ Մարտակերտում: Ես հաճախակի լսում եմ նրա ձայնը, որ հնչում է Լու Անջելեսից, և գիտեմ, որ ապրում է Արցախով ու այստեղի հիշողություններով: Նա ինձ երևում է իր բանաստեղծական աշխարհով ու հայրենակարոտ տողերով, որ ոուսերեն են գրվում, բայց բարգմանվում են հայերեն:

Սարոյանի տողերն եմ հիշում, որ օտարագիր ստեղծագործողներին կարելի է վերագրել. «Թեև անզիերեն կը գրեմ, ...ինքինքս կը նկատեմ հայ գրող մը: Գործածած բառերս անզիերեն են... Ոգին, որ կ'ստիպե

Նալսաշա Պողոսյան

ինձ գրել, սակայն հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ...»:

Մտորումներս ինձ տանում են դեպ հեռուները, որտեղ տարբեր եզերքներում ապրող և անցած դարավերջի՝ եղեռնից փրկված ականատես գրող կա և բանաստեղծուին, ով հայտնի է մեզ նաև Աղյանի ստեղծագործությունների բարձրարժեք բարգմանություններով: Այստեղ այդ գեհենի ականատես Աղյան գրողի պատմություն կա «Հեռացող եզերքում», որի ռուսերեն բարգմանության հրատարակությունն այս օրերին արժանի ապտակ կլինի ազերի ոճրագործներին: Արդեն լույս է տեսել արցախցի գրող Լևոն Աղյանի «Այն հեռավոր ամռան» գրքի ռուսերեն բարգմանությունը, որտեղ յուրահատուկ մի Արցախ աշխարհ կա գրողի այն վիպակներում ու պատմվածքներում, որ մեր հայրենակցուին կողմից են բարգմանվել ու նրա իսկ հովանավորությամբ էլ այս օրերին հրատարակվել:

Մտքերով ես նորից ճախրում եմ հեռուներում, կարոտի թեսվ ուզում եմ նրանց նորից ետ քերել իրենց հայրենի եզերքը... Ու իմ հայրենակիցներին ես տեսմում եմ Արցախի մայրաքաղաքում, որտեղ ուսուցչին հանդիպել եր նրանց ամխաներ առաջ: Հպարտությամբ եմ տախս նրանց անունները, որ իրենց ստեղծագործություններով ու բարգմանչական աշխատանքով յուրաքանչյուրը յուրովի իր նպաստն է քերում հայ գեղարվեստական մտքին ու մշակույթին: Բայց, ցավոք, հիշում ենք նաև շատերին հայ ժողովրդի ստեղծագործ զավակների մեջ, որ ձուլվել են օտարներին...

*Հայկական լրադպական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-12-05 10:44:0
<http://usarmenianews.com/am-n-7086.html>*

ՀԵՌՈՒ ԼԵՌՆԵՐՈՒՄ ԽՆԿԱՐԿՎՈՂ ՄԻ ՍԵՐ

Արձակագիր Լևոն Աղյանի «Հեռու լեռներում» վիպակը զետեղված է նրա «Իրիկնային աղջամուղ» ժողովածուի մեջ: Գրքում տեղ են գտել նաև այլ վիպակներ, պատմվածքներ ու մանրաքանդակներ, որոնք արտացոլում են հայրենի Արցախ լեռնաշխարհի ու նրա մարդկանց առօրյան:

Համոզված կարող եմ ասել, որ գյուղական կենցաղի ու կենսակերպի նախասիրությունների տեր է Աղյան արձակագիրը: Նորից առնչվում ենք կյանքի՝ իր կենսափիլխոփայությանը, որն ամբողջանում է հրաշագեղ բնությամբ հագեցած միջավայրում՝ գյուղական համակրելի հերոսներով ընդգրկված, և նրանք երևում են մեզ իրենց ազնիվ ու մաքոր հուզական աշխարհով, քախծախառն սիրո պատմությամբ, անքոնագրու, երբեմն էլ՝ միամիտ ու երկշոտ...

Աղյանը բնությունը դարձնում է մարդու գործունեության միջավայրը, ինքնանպատակ չեն նրա կողմից բնապատկերների նկարագրությունները. «Դեղձենիները ծաղկել են, և այսօր ես առաջին անգամ տեսա, որ գյուղ մտնող ճանապարհի վրա խոնարհված դեղձենու ճյուղը կոտրվել է: ...Այդ ճյուղը չտեսավ այս ծաղկեները, որ կան հիմա և կիմեն ամեն տարի, երբ գարունը կգա, և դեղձենիները կծաղկեն նորից կարմիր ու մանուշակագույն»:

Ամբողջ պատումը տարբում է փոքրիկ տղայի անունից, և ընթերցողը նրա անքիծ հայացքով է տեսնում ամեն ինչ, գրողը մեզ տանում է տղայի մանկութ աշխարհը, ուր բնության զարթոնք է ամենուր, կենսատու կյանք ու այդ բնությանը ծովագած գեղեցկության մեջ մի նոր հրաշք՝ քաղաքից եկած աղջիկ, որ թվում է՝ տեսիլիք պես պիտի երևար ու անցներ անդարձ: Կարծես գույներն էլ իր հետ բերել էր, մի նոր դյութանքով շաղ տվել ամենուր, վեհորեն գեղեցկացրել այն կենարար ու թրռուն իրականությունը, որտեղ պարզ ու հասարակ նարդիկ են ապրում՝ ազնիվ մաքրությամբ օծված: Գեղեցկության կողքին գունային խաղ կա, գեղանկարչի վրձին, որ այդ գեղեցկությունն իր վարպետ գրչով ծիածանի գույներին է համադրում: Կարծես սրանք էլ զալիս են համալրելու մի նոր ասելիք, ու ստեղծվում է շարքը՝ գունային հրաշալի մի երիզ: Այդտեղ դեղձենիները ծաղկում են կարմիր ու մանուշակագույն, անտառների ու լեռների խայտաբղետ գույներով և ներկվում փոքրիկ գետակը, ջրափոսերի վրա ընկնող գույնգույն թիթեռնիկներ կան, նույնիսկ ոսկեփայլ է կատուն՝ իրեն սիրել տվող, մողոշիկ ու փափկամազիկ: Քա-

Նայուշա Պողոսյան

դարից գյուղ եկած աղջկա շրջազգեստն էլ կարծես **բաց վարդագույն** է, սև թիկնոցով բարակիրան մի աղջկի է նա: «Նրա մազերն էլ **ոսկեգրում** լվացված են, աչքերը՝ բաց շագանակագույն են՝ ինչպես դեղնած հաճարկենիների ետևից երևացող լուսաբացի դարչնագույն երկինքը»: «**Սպիտակաղեմ** է նա», և ունի «**վարդակարմիր** շուրթեր», «**ոսկեզօծ** քանձր մազեր ունի նա, ձյունից էլ **ճերմակ** ատամներ, նույնիսկ աչքերն էլ շոշշողում են ինչ-որ անհասկանալի փայլով»:

Գրողի միտքը ճյուղավորվում է, համարվում մի նոր ասելիքով... Գոյների շրեղ հրավառություն կա այնտեղ, ամեն ինչ գունավոր է, որ հիշեցնում է սահյանական զանգեզորյան գունավոր աշխարհը, որտեղ ոչ միայն ծիածանը, այլև ջրվեժը, անտառը կարկուտն ու քարանձավը յուրահատուկ գույն ու բույր ունեն, և հիշում ես քանաստեղծի խոսքը. «Ես մեծ նշանակություն եմ տալիս գույնին ու հնչյունին: Որոշ քանաստեղծների մոտ գույներ չկան, կա միայն մի գույն՝ ասֆալտի գույնը»: Քանաստեղծի խոսքում ափսոսանք է արտահայտվում, բայց ահա աղյանական հայրենի բնաշխարհը իր գունային հրաշալիքներով արձակի մեջ կարծես հավելում է միտքը մեծ քանաստեղծի, որ առանց գույների աշխարհը տիսուր է, ապրելն էլ՝ ասես անհնաստ: Եվ գեղեցիկ է դառնում կյանքը, երբ շորջը **ոսկեշղարշ** արև կա, **լուսափայլ** ժայռ, **դեղին** տերևներ կան ու **դեղին** արդուզարդի մեջ՝ **դեղին** շորեր: **Կապույտ** երկինք կա այնտեղ, գետակի ջրերին՝ **երկնագույն** փայլ կա և **երկնակապույտ** շրջազգեստ: **Վարդակարմիր** շուրթեր կան այնտեղ, **վարդ** շիկնանք կա, **դեղնանիկների կարմիր** ծաղիկներ:

Գրողի գրիչը չի հանդարտվում կարծես, գունային խաղ կա նորից, աշուն է արդեն. «Հնձախութը **դեղին** շորեր է հազել, Բարակ ջուր գետը ցոլկում է **բաց երկնագույն** փայլով, մայրամուտի վերջին շողերը **եղրևանագույն** փայլ են ստանում, **դարչնագույն** երկինքն էլ գունատվում, երբեմն դառնում է **կապտամթափուն**»:

Չմոռանանք, որ գրողի տարերքը գունային աշխարհում լուսավոր է ու պայծառ, և այստեղ նա միայն նպատակ չի ունեցել ստեղծել գույների գեղանկարչական պատկեր, դրանք ունեն նաև իրենց իմաստային դերը՝ կապված տարվա եղանակների, օրվա պահերի, հարավոփոխս տրամադրությունների հետ: «Անտառների միջով է հոսում **Թարթառը**...**Խսկ Թարթառից** այն կողմ Մոռավ սարն է...Սար ու ձոր, հանդ ու անտառ ծածկվել են իրիկնային փափուկ շղարշով, մերքընդերք բեկրելուն կանչում են գիշերային հավքերը, իսկ այնտեղ՝ հեռվում, ինչպիսի հերիաթային տեսարան, **Մոռավ սարի** կատարները ողողված են դեռ ոս-

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

կեշղարշ արևով»:

Եվ այս գեղեցկությունը հանկարծ նկատում է մի նոր հրաշալիք, բնաշխարհին հյուր եկած մի նոր գեղեցկություն հանկարծ կանչում է.

«Աստված իմ, ինչ գեղեցիկ աշխարհ ե...»:

Արցախյան բնաշխարհի գեղեցկությունը նկատող գրողի արվեստի մեծ հմայքը դեռ առջևում է, որ պիտի տեսանելի դարնա բոլորին, բայց հիշում եմ նաև մեկ այլ գրողի, որ իր գույներով իր պատկերած աշխարհում մարդու և բնության խոհափիլխոտփայական բանաստեղծական միասնության պատկերն է արտացոլել, որի մասին Խսահակյանը Սարյանի հետ ունեցած իր մի գրույցում շատ դիպուկ բնորոշել է. «Կոմիտասի երգերի և քո գույների մասին խոսում են որպես բառերով անքարգմաների հրաշքների մասին: Բայց դա այդքան էլ ճիշտ չէ:

Հայաստանում կա մի գրող, որի բառերը զբնգում են կոմիտասյան շնչով և փայլատակում են քո կտավների գույներով: Դա Ակսել Բակոնցն է»:

Անկախ նրանից՝ գրողը չափած է գրում, թե արձակ, տվյալ դեպքում գույնի գործածությունը կարևոր բաղադրիչ է դառնում նրա համար, միաժամանակ այստեղ գույնը կենսասեր գրող Աղյանի բարձր ճաշակը, գեղագիտական համակարգը, նրա ինքնատիպությունն ու մտածողությունն է ամբողջացնում: Եվ մտովի հիշում եմ խոսքը Սեծարենց փաղամեռիկ բանաստեղծի: «..բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա, թե ոչ բանաստեղծ չէ իրավես, քերթական իրեր իրեն բառ պետք է ունենան տերևին թրոռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լեռան մշտանույն գորությունը...»:

Մի պահ թվում է՝ գրողը նպատակ չուներ խոսեցնելու իր հերոսներին, եթե առանց խոսքի էլ գեղեցկությունը տեսանելի էր, և զարմանալի չէ, եթե հանկարծ գյուղի կանայք էլ նկատում են այդ աղջկա գեղեցկությունը. «Անաստվածը մի տես ինչքան գեղեցիկ է: Աչքերը գեղեցիկ, քիրը գեղեցիկ, բերանը գեղեցիկ, կազմվածքը գեղեցիկ... ասես բացված վարդ լինի, ոչ ուտես, ոչ խմես, կանգնես ու էղպես նայես»: Այսքանին լրացնելու է զայիս բնության սքանչելիքին ծովլված՝ մարդկային գեղեցկությունն արտացոլող պատկերավորման միջոցներից մակորների գործածությունը, որ շունչ է տալիս բառին՝ **Վիրավոր** դեղձենի, կապտամթավուն քննուչ ձայն, **ոսկեզօծ** բանձր մազեր, մանր ծիծաղ, անուշարույր մարմին, ծանր ամպեր, լուսափայլ ժայխ, **ղեռափրիք** բուրմունք, վարակիչ ծիծաղ, քերն շարժում, **տերևների** աղմուկ, **բաղցրենի** ժայխ, ծիծաղի կտորներ, **բամու քերն** պոռթկում...Եվ դրանց պետք է

Նալուշա Պողոսյան

լրացներ փոխարերությունների շարքը, որտեղ երկինքը գումատվում է, դեղձենին՝ **աղմկում**, սիրտը երջանկությունից ուռչում է, ձյան փարի-ները քում են մտնում, արեգակը ժպտում է, անպերը չվում են, տերևնե-րը՝ դողում ու ձգվում են, գետը փրփրում է, ոռնում...

Որքան գրողը գույներ չի խնայել քաղաքից գյուղ եկած աղջկա՝ երի-տասարդ ուսուցչուհու գեղեցկությունը նկարագրելու համար, նա նոյն-քան գեղեցիկ էլ նկարագրել է նրա մաքուր սերը, որ սահմաններ չի ճա-նաչում, անկեղծ է, քափանցիկ: Բայց այդ գեղեցկության նկատմամբ անպատճախան սիրուց իրեն կորցրած մարդու խոսք կա վիպակում, և քվում է՝ անմահական սիրու մի չքնաղ բանաձև է ընթերցվում. «**Սերը ու-րիշ բան է...Երբ սիրում ես, էնպիսի մի հարստություն ես հայտնարե-րում ինքդ քո մեջ, էնպիսի մի բնրշություն, որ ես մրցյունն ինչ է, ուզում ես կանգնել ու էղ մրցյունի հետ անգամ զրույց անել և նոյնիսկ ինքդ էլ զամանում ես քեզ վրա, որ կարող ես էղպես սիրել...Առանց սեր կյան-քը...ոնց որ տարին առանց գարնան, առանց ծիլ ու ծաղկի...Մեղավոր չեմ, սիրում եմ գետնից մինչև երկինք, ինենքի պես սիրում եմ»: Մի բան պարզ է, գրողի կենսասիրությունը տանում է մարդուն մաքուր ու անա-ղարտ սիրու զգացողությանը, որը ծնվում է նաև կյանքի, աշխարհի ու նրա մյուս գեղեցկությունների նկատմամբ: Ասրումների անկեղծություն կա աղյանական սիրու մեջ, և պատումը տարվում է առաջին դեմքով, այն դառնում է երբեմն սիրալիր ու հարազատ. «**Մեր գյուղում Արգինա անունով աղջիկ չկա: Սիրուն է Արգինան: Նրբագեղ կազմվածք ունի, իսկ դեմքը լուսափայլում է նուրբ գեղեցկությամբ ու հմայքով: Ջյունա-ձերմակ պարանոցով ու վարդաշուրք՝ նա ասես երկնքից է իջել: Վյդպի-սի գեղեցիկ աղջիկ ոչ միայն մեր գյուղում, երևի արար աշխարհում էլ չկա»:****

Թումանյանական գործի անմահության գաղափարը միշտ էլ ուղեկ-ցել է մեզ՝ որպես ամենայն հայոց բանաստեղծից մեզ հասած պատ-գամ, որ այսուհետ էլ սերնդեսերուն դեռ պիտի փոխանցվի: Եվ կյան-քի երկար ճանապարհ անցած գլխավոր հերոսի հոր խոսքում հաս-տատվում է այն ճշմարտությունը, որ ծեր մարդիկ միշտ էլ իրավունք ու-նեն խորհուրդներ տալ երիտասարդներին. «**Կարճատև է կյանքը, բայց մարդու գործը երկար է ապրում, ուրեմն երկար է ապրում նաև նրա անունը», «Ժողովրդի սրտում երկար ապրելու միակ հնարավորությու-նը իրենից հետո որևէ լավ գործ քողնելու մեջ է», «Կան աստղեր, որ վա-ղուց հանգած են արդեն, բայց նրանց լույսը շարունակում է հասնել մեզ, լուսավորել մեր ճանապարհը...»:**

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

Գուցե մի նոր նախազգուշացու՞ն էր՝ ընթերցողին ուղղված, որ գրողը մեզ տանում է իր հերոսուհու ճակատագրին ընդառաջ: Հիվանդանոցը ճարճատում է բոցերի մեջ, այնտեղ երեխաներ կան, և հանկարծ ծխի ու մրի մեջ նշմարվում է աղջիկը...

«Ահա և զյուղի հանգստարանը: Գարնան արևի շողերում քամին տարութերում է բարձր խոտը: Իմ աշքերը սահում են ժանոր քարերի վրայով, հայացքս ընկնում է մեծ ու սպիտակ քարի վրա փորագրված ուկեզուն տառերին՝ Արգինա, որու ծաղիկ էիր սիրում... Դու ծաղիկ էիր անթառամ... Ես մոտենում, ձեռքս դնում եմ սառը քարին. զյուղական սովորություն է, որ նշանակում է՝ բարև, սիրելին, ես քեզ չեմ մոռացել...»:

«Հեռու լեռներում» վիպակն ավարտվում է բախսախառն մի տիսուր պատմությամբ, բայց այստեղ էլ երկու գույնի համադրություն կա, որտեղ վարպետ գրչով գույները կատարում են իրենց գեղանկարչական ու խմաստային դերը. «Խեղդեղով հառաչանքը, ես շրջվում, նայում եմ զյուղի կողմը: Ներքեում՝ ծորում, փայլում, իր հին ձայնով երգում է Քարակ շուր գետը, երևում է զյուղ մտնող մեծ ճանապարհի վրա խոնարհված մենավոր դեղձենին, որի ճյուղը կոտրվել, կորցրել է իր գարունը: Այդ ճյուղը չտեսավ այս ծաղիկները, որ կան հիմա և կլինեն ամեն տարի, երբ գարունը կգա, և դեղձանիկները կծաղկեն նորից կարմիր ու մանուշակագույն...»: Ինընատիալ ու անկրկնելի ոճի տեր է գրողը, որի արձակում միշտ էլ առկա է իրական պատմության քնարական տար շունչը, որտեղ արցախյան հայրենի բանաշխարհի և Աղյան գրողի միասնությունն է ամբագրված այն հեռու-հեռավոր լեռներում, և միշտ էլ այնպես է բվում, թե հեռավոր մի ձայն հազիվ լսելի միշտ շշնջում է. «Ես այս զյուղից չեմ գնալու: Ընդմիշտ մնալու եմ ձեզ մոտ...»:

Որպես վերջարան՝ կարող եմ ասել, որ Աղյանը, ինչպես այս, այնպիս էլ մյուս ստեղծագործություններում, ներկայացնում է կենդանի ու թրթոռուն իրականությունը, իրական մարդկանց, հենց դրանում է նրա արվեստի մեծ հմայքը: Պատկերավորման արտահայտչական միջոցների ճաշակավոր կիրառությունը մեծացնում է նրա երկերի ժողովրդական ոգին և դիմակու ու կենդանի է դարձնում նրա խոսքը, դրա համար էլ հասանելի ու սիրելի է ընթերցողներին:

*Հայկական լրաբարձության՝ Լու Ալիջելեսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-03-11
<http://www.usarmenianews.com/am-n-1973.html>*

ԱՃՆԱՆԱՅԻՆ ՑՐՏԵՐՈՒՄ ԴԵԳԵՐՈՂ ՍԵՐԸ

«**Ի**րիկնային աղջամուղ» ժողովածուի մեջ է գետեղված արձակագիր Լևոն Աղյանի «Աշնանային ցրտեր» վիպակը: Գրողի ստեղծագործական տարերքը գյուղն է, այնտեղ ապրող մարդիկ, նրանց հոգեկան աշխարհը՝ իրենց անհանգիստ ապրումներով: Այդ հերոսները սիրում ու տառապում են իրենց ներսում և ասեն նրանց ներքին ապրումները որևէ կապ չունեն սոցիալական հանգամանքների և հասարակական կյանքի այլ խնդիրների հետ: Սակայն դա սոսկ թվում է, առանցքում հոգեկան խոռվում գտնվող անհատն է, նրա խոռվահույզ մտումներում վերակենդանացած մի կորսված պատանեկան սեր, որ երբեք չի մոռացվում:

Աղմկեցին, անցան անձրևները աշնան... Բնարան դարձած մեկ տող, որ պիտի դառնար Աղյան գրողի ստեղծած կերպարների հոգեվիճակների արտահայտություն: Սի պահ Էությանդ մեջ ներսուզվում են տերյանական բախծոտ անհուսության ապրումները: Կարծես տարվա եղանակների հետ են պայմանավորված զգացմունքային բոլոր դրսնորումները, որ առկա են այս վիպակի գործող անձանց հոգեկան ապրումներում, որոնք զուգահեռվում են աշնան պատկերի հետ. «Անկատեկի սկսվեց ու անցավ ձմեռը՝ ձնառատ ու տաք: Հետո, ինչպես տոնական երկու խնդուն օր, ցոլացին և անցան գարունն ու ամառը: Եվ ահա եկել է աշունը՝ անձրևներով, հազվադեպ արևի պայծառ, արդեն սառը վերջին փայլով, ծառերի տակ բափկած գույնզգույն բոշնած տերևներով, պաղ օդով, առավոտյան դրած եղյամով ու անթափանց խոնավ մառախուղներով»:

Աշնանային մի գեղեցիկ բնանկար և դրա կորդին՝ վիպակի հերոսուհու հուսարեկ կերպար, որտեղ անցած օրերը դառնում են երազելի ժամանակ և վերիուշ: Խսկ նա այդ անցյալի աշնանային օրերին երբեմն հորիզոնում երևացող դարուկ արևի նման չէր, այլ մի ամբողջ աշխարհ էր, մի կենդանի ու շարժուն տարերը, ով դպրոցական տարիների ավարտական դասարանում սկսեց վայելել մի գեղեցիկ սեր, որ պիտի դառնար անանցողիկ մի հուշ և հոգու տվայտանքների բախծոտ արձագանք: «Անահիտը բարի գիշեր մաղթեց հերթապահ բժշկին ու բուժքրոջը և դուրս եկավ հիվանդանոցից: ...Զգիտես ինչու, աշնանային այդ երեկոն Անահիտին թվաց մի տեսակ ոչ սովորական: Դա արտասավոր երեկո էր, իսկ թէ ինչու միանգամից այդպես թվաց՝ Անահիտը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ: Միրտն անհանգիստ էր: Միրտն ինչ-

որ բան էր զգում՝ ոչ այն է կարոտալի, ոչ այն է տագմապալից: Հոգմել էր երևի: Նա մի քանի վայրկյան կանգնեց զյուղական հիվանդանոցի փայտե աստիճաններին՝ մինչև աշքերը կընտելանային մքությանը, ու նոր միայն գնաց անձրևներից հետո տոփանված արահետով»:

Այյան գրողի հերոսները երբեմն հայտնվում են մենության մեջ, նրանք մի ներքին մենախոսությամբ բացահայտում են իրենց հոգում տեղի ունեցող ներքին ճգնաժամը: Երևակայական ու մտացածին աշխարհից հեռու է գրողը, նա իրականությունն է նկարագրում, ստեղծում իրական կերպարներ՝ իրենց հոգու անհանգստությամբ, ներքին մտումներով ու խոռվով. «Անահիտը ամեն անգամ զարմանում է՝ ինչո՞ւ իր կյանքն այդպես անհմաստ ու հիմարաբար դասավորվեց: Ե՞րբ, ո՞ր օրը ճեղք տվեց այն, և այդ ճեղքը գնալով մեծացավ՝ դառնալով անդունի նման խոր, և օրեցօր ավելի սարսափելի է թվում նայել այդ վիհի խորքը: Ո՞վ է մեղավոր այն բանի համար, որ դու ամեն ինչ ունես՝ սիրելի որդի ու քեզ սիրող ամուսին, տունուտեղ, սրտովդ է նաև աշխատանքը, ամեն ինչ կա՝ բացի մի բանից, որին տեսնում ես ամբողջ կյանքում՝ մի քիչ երջանկություն»:

Իրեն գեղագետ՝ կերպարների կերտման արվեստում վարպետաց Այյան գրողը կարողանում է անցյալը մոտեցնել, դարձնել ներկա, այն տեսանելի ու շոշափելի է դարձնում ընթերցողին, ավելի ցայտուն, որի համար էլ առանձնակի հետաքրքրությամբ ընկդմվում ես անցյալի հուշերի մեջ՝ մի պահ ասես մոռացած, որ ներկայից զատկած մի այլ ժամանակում ես գտնվում: Գրողը մտնում է անցյալի խորքը, կարծես անցյալի հնությունից դուրս է բերում ցանկացած հերոսի, ում միջոցով կյանքի ճշմարտությունն է բացահայտվում: Եվ ահա հիշողությունը մարդկային երջանկությունն է իմաստավորում. «Տարիներ առաջ, երբ հայրը ողջ էր, մի խոսք ասաց: Վերջերս, չգիտես ինչու, Անահիտը հաճախակի էր հիշում այդ խոսքը: «Կաղնավուն մի թռչուն կա, հանդերում է լինում, երջանկությունը նման է եղ թռչունին,- ասաց հայրն այն ժամանակ:- Նստում է աշքիդ առաջ, մի երկու քայլի վրա, ուզում ես բռնել, ցատկում, մի քիչ էն կողմ է կանգնում, ասում ես՝ մի քայլ էլ անեմ՝ կրոնեմ: Խարելով տանում է, է՝, աստված գիտի, թե որտեղ: Մարդու երջանկությունը նման է եղ փոքրիկ թռչունին, թվում է ահա մոտ է արդեն, հասնում ես երջանկությանդ, բայց, չէ, էն թռչունի պես նորից իր ետևից տանում է քեզ ու մինչև վերջ էլ էղպես գնում ես երջանկության ետևից ու երեք չես հասնում»»:

Ի՞նչ է երջանկությունը, որին ձգուում են շատերը, բայց այն հասանելի չէ ամենքին: Ու մտորումների շրբան տանում է նրան դեպի անցյա-

Նալուշա Պողոսյան

լը, որտեղ գեղեցիկ ապրումներ կային, երկար սպասումներ, դպրոցական մարուր մի սեր: Բայց հնարավո՞ր է ապրել առանց այդ երջանկության... Արյանը հուշում է. «Հնարավոր է, իհարկե, բայց դրա հետ միասին երկինքը պարզապես մնում է անծայրածիր երկինք՝ սև դատարկությամբ, աստղերը՝ սովորական աստղեր, որոնք ոչ թե ժպտում, աչքով են անում զիշերային երկնքից, այլ հենց այնպես հրում են իրենց հեռավոր սառը լույսը, տան կողը անցնող առուն չի կարկաչում մանկան զվարք ծիծաղով...»: Այդ անցյալում Անահիտը երջանիկ էր, թե՞ն ան ինքն էր ստեղծել այդ անցած երջանիկ շաբաթներն իր երևակայության մեջ: Այն ժամանակ ուրիշ էր կյանքը, կամքջից վեր՝ ուժենիների տակ, մի փոքրիկ աղբյուր կար, այնտեղ էին նրանք ամեն օր հանդպում: Մամուռ քարերի մոտ կամացուկ երգող անանուն աղբյուրը նրանց գաղտնիքն էր պահում. «Ճապկի ծիպոտի պես ճկուն, խաղաղուն իրանով մի սիրուն աղջիկ ու բարձրահասակ, սև հոնքերի տակից սևեռուն նայող լրջախոն մի տղա համարյա ամեն օր զափս են իր մոտ, իրեն են վատահում իրենց սերը, իր ներկայությամբ երկար գրուցում են՝ շարունակ շիկնելով ու չհամարձակվելով նայել իրար, խոսում են կամացուկ, և ինքը հասկանում է, իհարկե, որ սիրո մասին չի կարելի բարձր խոսել»:

Կյանքը ճանաչած գրողը, լինելով իրականության նկատմամբ ուշադիր, ձգտում է տիպական կերպարներ ստեղծել կյանքի տիպական երևույթներում, որտեղ երբեմն դառնում է ոչ միայն դեպքերի նկարագրող ու պատկերող, այլ հենց ինքն էլ նույնացվում է այդ կերպարին, գրական երկը դարձնում իրական: Այստեղ գրողը մի նոր կերպար է մարմնավորում՝ կայուն բնավորությամբ, հաստատակամ գործողությունների մեջ, և այդ կերպարը աղջկա համար դառնում է երջանկության աղբյուր:

Նա նույնիսկ ամաչում է, երբ իիջում է այն մասին, որ առաջինը ինքն է առաջարկել տղային, որ կհամբուրի նրան, եթե նա իր մշկամկենու գլխարկը տա իրեն...՝ Հիշողությունը նրան տանում է նորից այն աղբյուրը. «Անահիտը, դեռևս մեջքով սեղմած ծառաբնին և անուժ դիմադրելով Կարենի մոլուցքին, դանդաղորեն սահեց ցած՝ ասես տենի մեջ՝ հառաչելով ու տնքալով: «Մի՞քե հնարավոր է ապրել առանց քեզ»,՝ շշնջում էր Կարենը, անհագորեն շնչելով նրա աղջկական բույրն ու մոլեգնաբար համբուրելով իրագույն շուրբերը, թախծանուշ ջինջ աշքերը, դեմքը, մազերը...»:

Այդ օրերին աղջկան բվում էր՝ կիսենթանս երջանկությունից, աշխարհի բարի էր նրա համար, հոգին էլ ցնծում էր ուրախությունից.

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

«Կար ժամանակ՝ ուրիշ կերպ էր ամեն ինչ՝ և աստղերն էին ուրախ աչքով անում թափշյա մութ երկնքում, և առվակն էր ծիծաղում մանկան զնզուն ծիծաղով...»: Բայց մի անգամ Կարենը նրան ասաց. «Հիշիր խորս. կգա ժամանակ՝ կկործանի թեզ անհաստատ բնավորությունը»:

Իրավ, տղայի ասածի մեջ ճշմարտություն կար, գուցե կայուն բնավորություն ունենալ, այդամբ՝ չ շրասավորվեր իր կյանքը. «**Ուզ գիտի,** երևի նրա կյանքը լավ է դասավորվել, այլապես գոնե մի անգամ զյուղ կգար. արդեն մի քանի տարի է հարազատ զյուղում չի եղել»:

Ժամանակը չնայած մոխրացնում է ամեն մի գեղեցիկ երազանք, բայց մարդուն նաև դատապարտում է անամոք տառապանքի: Ակնքարք է դա, մի սխալ խոսք, որ մարդուն տանում է երազանքների մոխրացման սարսափելի ապրումներին, որտեղ մենակության տառապանքը իր հոգեվիճակը թերևացնելու համար մի տաքուկ անկյուն է փնտրում, մի կարեկից սիրտ, ով կարող էր նրան փրկել կործանվող երազներից: Եվ Անահիտի հիշողության մեջ արքնանում է Մուշեղի խոսքը. «Այնուամենայնիվ, Անահիտ, դու ինձ հետ ես ամուսնանալու: Եվ գիտե՞ս ինչու, Կարե՞ն: Հիշիր, կանայք սիրահարվում են բարդ բնավորությամբ տղամարդկանց, բայց որպես ամուսին՝ զերադասում են... իմ նմաններին...»:

Այս դեպքում երբեմն տխրությունը ողողվում է պայծառ երազանքով: Մտերմական նոր ապրումները թվում է մոռացության կտան անցյալում մնացած սիրո, կարոտի մորմորները հոգու, որ պիտի երևան նոր խոստվանությունների տեսքով: «Անահիտը ծիգեր էր քափում՝ Մուշեղի սիրատենչ տաք գրկում անձնատուր լինել մոռացման: Եվ երբեմնակի նրան նույնիսկ թվում էր, թե դա իրեն հաջողվում է... Սակայն Կարենի աննկատելի ներկայությունը զգացվոմ էր, նա այստեղ էր ու ամենուր՝ լուծված իրիկնային օդում, տաք մթության մեջ. «Պետք չէ, չեմ ուզում, նա չկա...»- համոզում էր Անահիտն ինքն իրեն՝ ահազնացող սոսկումով գիտակցելով, որ անզոր է դիմանալու այդ կախարդանքին. ինքը հիմա գրկում է ոչ թե Մուշեղին, այլ Կարենին...»:

Գրողը ամեննին չի խուսափում կյանքի բնական ընթացքի հետագա նկարագրությունից, իր հերոսուիին ամուսնանում է՝ հոգում անթեղած իր առաջին սերը: Լինո՞ւմ է գաղտնի երջանկություն, երբ մտորումներով ու երևակայությամբ վայելում ես կորցրած սիրո գեղեցկությունը: Բայց այդ երջանկությունը, գաղտնի մնալով, կորցնում է իր արժեքը, վերածվում հոգու ցավագին տառապանքի. «Անահիտի մեջ օտարացման զգացումն առաջանում էր այն ժամանակ, երբ նրանք մտնում էին անկողին: Մուշեղի փաղաքանքը թեև տիաճ չէր նրան, բայց և չէր հու-

Նալուշա Պողոսյան

զում, չէր ալեկոծում նրա արյունը, և որպեսզի բարցներ դա, Անահիտը ստիպված էր լինում ձեւացնել և, պատասխանելով նրա փաղաքանքներին, նա սարսափով մտածում էր այն մասին, որ ինքն ամբողջ կյանքում պիտի ձեւացնի և վախենա, որ Մուշեղը մի օր կզգա իր կեղծիք...»:

Ամուսնության սկզբնական շրջանում նրանց հարաբերություններում դժգոհության ոչ մի նշան չէր ցուցաբերվում, առերևույթ Անահիտը սիրայիր էր ամուսնու հետ, հոգատար ու գորովալից: Դուցե երեխայի ծնունդը վերջ կտար նրա հոգու երկատվածությանը, որտեղ երբեմն գլուխ էր բարձրացնում այն կորցրածը, իսկ այնտեղ հիացումի, խանդավառության, վայելումի հրաշալի պահեր կան, հոգու և սրտի ներդաշնակություն, որ երբեւ չեն մոռացվում: Նույնիսկ պատահեց այնպես, որ մի երկու անգամ «Անահիտն իրեն բռնեց այն բանում, որ քիչ էր մնում Մուշեղի փոխարեն արտասաներ Կարենի անունը և սառավ այն մտքից, որ երբեւ դա կարող է պատահել և թե ինչ կարող է տեղի ունենալ դրանից հետո: Նա տեսնայնորեն իրենից հեռու վանեց իրեն վախեցնող այդ անունը և գիշերային իր մեղքը՝ ամուսնու առջև, նա ձգտում էր քավել ցերեկները՝ նրա հանդեպ ցուցաբերած նուրբ հոգատարությամբ, փայփայանքով, հանգիստ բնավորությամբ»:

Արձակագիր գրողը շատ նուրբ հոգեբանական անցումներով է մոտենում վերջաբանին, պետք է ինչ-որ ձևով նա ազատեր իր հերոսուհուն ներքին տվյալանքներից, իսկ նա հիշողությունների մեջ է. «Գրում շարունակում էր հոսել աշնանային արտասովոր, լուսնիա երեկոն: Անահիտը պատուհանի առջև նստած, վերիիշում էր անցած-գնացած օրերը»: Այդ ամուսնությունը հնարավոր է փլուզվեր, իսկ մարդասեր գրողը կողմնակից չէ ընտանիքի բայրայմանը, երբ հոգատար ամուսին կա այդ ընտանիքում, մեծացող որդի, որ շուտով առաջին դասարան պիտի հաճախեր: Կտրուկ մի շրջադարձ կարող էր փոխել գործողությունների ընթացքը, և դա Կարենի վերադարձն էր, և նա եկել էր այցելելու Անահիտի և Մուշեղի ընտանիքին, նա, ում մասին սուս լուրեր էին տարածվել, որ իբր մոր պահանջով ամուսնացել էր հարուստ ազգականի աղջկա հետ: Կարենն էլ ընտանիք ուներ, բայց ի՞նչն էր նրան բերել այդտեղ, կամ ո՞վ...Առաջին կորաված սե՞րը, իր հանարասարանցիների հետ հանդիպման ցանկությո՞ւնը, թե՞ այն մեծ ճշմարտությունը, որ նրա խոսքերով Աղյան գրողը պետք է ընդիանրացներ. «Մեր բախտը մեզնից է կախված, բայց հերիք է, որ թեկուզ մի անգամ թերևամտորեն վերաբերվենք այդ բախտին, որպեսզի նա քեն հանի մեզնից մեր ամբողջ կյանքի ընթացքում»:

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

Կարենի գնալուց հետո այդ օրը կեսօքիշերին ամուսինն էլ կտառապի հոգու խորքում, երբ արթնանա, տեսնի կնոջ այտերի չշորացած, արձաքույն արցունքները, իսկ աշնանային պարզկա, ցուրտ երկնքով անցնող կոռոնկների երամը կարձագանքի տխրամած կնոջ տառապանքին.
«Կուր-լու, կուր-լու, քախծոտ կանչում էին կոռոնկները, նրանց քախծախառն կանչերը հեռանում էին... Ահա թե ինչու էր ամբողջ երեկոն թվում այնպես ոչ սովորական, արտասովոր, այո՛, իր սիրտն զգում էր, երևի, որ նա պիտի զար...»:

Մոռացության տայու համար նա այսոով կհպվի Մուշեղի՝ մեքենայի յուղի հոտ արձակող խոշոր, կոշտ ձեռափին՝ թույլ չտալով, որ նա ձեռքը քաշի, ու կփակի աչքերը՝ մի նոր անհանգստություն թերելով ամուսնու հոգուն. «Չեմ վերցնի, դու քնի՛ր...Քայց իր մեջ ակամայից մտածեց. ո՞ւմ ձեռքին ես հպվել այդպես՝ ի՞մ, թե՞...Եվ մտովի ընդհատեց ինքն իրեն՝ ուրիշ անուն չտալու համար»:

Կանցնեն օրեր, ամիսներ, տարիներ, և գուցե մի օր, դպրոցական տարիների իրենց սերը անթեղած հոգիներում, այս վիպակի հերոսներն էլ, առանց վայելելու իրար, հեռվից հեռու կհաշտվեն իրենց ճակատագրի հետ՝ հիշելով, որ սերը մի աննյութական երազ էր, և այն անցավ անվերադարձ:

Մնում է մի քանի խոսք ասել արվեստագետ Աղյան գրողի մասին...

Նա գեղեցկության, իիացումի վեհ պահի նկարագիրն ունի իր մեջ, որ վարպետորեն բափանցում է իր կերտած հերոսների հոգեկան աշխարհը, նրբորեն բացահայտում նրանց ապրումները: Վիպակի գեղարվեստական բարձր արժեքը պայմանավորված է նաև գրողի՝ կյանքի մասին ունեցած իր ճշմարտացի իմաստությամբ, և ինչքան էլ որ այդ հերոսները հայտնվում են ընտանեկան կյանքի ծանր հանգուցակետում, հոգերան գրողը կարողանում է նրանց վարքագծի պատճառների քննությամբ և այդ կերպարների հոգերանական վերլուծությամբ կանգնեցնել նրանց կյանքի իսկական ճանապարհին: Թեկուզ նրա հերոսներն անցյալի հիշողություններում տառապում են լուս, բայց գրողն իր վարպետ գրչով ամեն անզամ սովորեցնում է մարդուն ներդաշնակ ապրելու արվեստը:

*Հայկական լրապարական՝ Լու Ամիջելիսից,
«Մանկավարժի անլիյուն», 2016-11-08 09:31:00
http://usarmenianews.com/am-n-6448.html*



Առաջարկություն ստացա՝ աշակերտների մասնակցությամբ կազմակերպել որևէ գրողի ստեղծագործության քննարկում։ Ծուտով դասարանն ընտրվեց՝ 12-րդ հումանիտար, նախատեսվեց նաև թեման՝ դպրոցական սեր։ Գրողի և ստեղծագործության ընտրության հարցում տարակարծություններ կային, բայց նախընտրությունը տրվեց արցախցի արձակագիր Լևոն Արյանի «Իրիկնային աղջամուղ» ժողովածուին։ Իմ ձեռքի միակ գիրքը շրջանառվեց դասարանում, ընտրությունը մեկն էր՝ «Աշնանային ցրտեր» վիպակի շուրջ քննարկում կազմակերպել Մարտակերտի կենտրոնական գրադարանում։ Բայց մինչ միջոցառման անցկացնելը՝ հասցրի իմանալ որոշ աշակերտուիների կարծիքներ վիպակից ստացած տպավորության մասին։

Զավադյան Վարդուհի: «Այս վիպակը միանգամից գերեց ինձ։ Սկզբում ինձ թվում էր, թե այդ դպրոցական սերը հավերժական է, շատ գեղեցիկ էլ նկարագրված են նրանց հանդիպումները։ Սակայն ամեն ինչ փոխվեց... Երանի՝ այս տիսուր պատմությունն այսպիսի վերջարան չունենար...Հասկանալի է, որ սիրող սրտերն այդպես էլ հավերժ կապված կլինեն իրար, բայց, ավա՞ն, այն կմնա որպես սիրո հերիարային օրերի մասին մի անցած հիշողություն։»

Հովսեփյան Լիլիթ: «Այնքան հետաքրքրիր ու պատկերավոր էին շարադրված դեպքերը, կարծեն ինչ-որ գերբնական ուժ ինձ շղթայել էր այդ պատմությանը և թվում էր՝ ականատեսն եմ իրադարձությունների զարգացմանը։ Կարդալով այս պատմությունը՝ հասկացա, որ կա միայն մեկ ճանապարհ՝ ճիշտ ապրելու և կյանքին հաճոյանալու համար՝ ապրել ազնիվ ու անսխալ, իսկ ապրել անսխալ, դա նույն է, ինչ բայլես ավագի վրայով՝ առանց հետքեր թողնելու։ Մի դպրոցական սիրահարված աղջիկ, ով ուզում էր լինել իր սիրած էակի կողքին և ապրել երջանիկ, անկեղծ սեր էր ուզում այս կյանքից, բայց...»։

Կարապետյան Արմինե: «Չեմ ասում, որ այս վիպակը կարդալուց հետո ես արտասվեցի, բայց անզգայացա։ Ես մի պահ ինձ պատկերաց-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

թի հերոսուհու վիճակում: Իրոք, շատ հոյակապ է վիպակը, շտապում էի խմանալ, թե հետո ինչ է լինելու, փորձում էի գուշակել վերջը: Շատ դժվար է մոռանալ հոգով ապրած պահերը... Այս հերոսները դարձան ճակատազրի զոհ, յուրաքանչյուրն էլ ունի իր մեղքի բաժինը»:

Սահյան Դիանա: «Վիպակը դպրոցական գեղեցիկ սիրո պատմություն է, որը գրավեց ինձ իր յուրահատկությամբ: Կողծանվեց մի գեղեցիկ սեր, այն փշրվեց միանգամից: Շատ դժվար իրավիճակ է, եթե հերոսուհին շատ լավ գիտի, որ անհմաստ է իր կյանքը չսիրած տղամարդու հետ, բայց ստիպված է համակերպվել»:

Խաչատրյան Աննա: «Յուրաքանչյուրի կյանքում լինում են անմոռանալի օրեր, որոնք ժամանակ առ ժամանակ մեր հոգին ու սիրությունում են անսահման կարոտով ու երջանկությամբ: Վիպակում երկու սիրող սրտեր բաժանվեցին իրարից՝ առանց իրար հետ բացատրվելու, նրանք չհասկացան, որ կյանքը կարճ է, և կաղն արդեն ուշ կլինի սիրո համար: Բոլորին ես խորհուրդ կտայի, որ սիրեն ու վայելեն նրա սերը, ով որ իր կողքին է միշտ և խսկապես սիրում է սրտանց»:

Ապրումների անկեղծություն կար նրանց խոսքերում, և ժամանակի ու տարածության հեռովից իմաստավորվում էր մի անգիտակից սեր, որ բազմազան էր իր դրսնորումներով ու անկրկնելիորեն գեղեցիկ, և սպատահական չէր եղել այդ զգացումը, եթե տարիները չեն մոռացրել սիրո հուշը: Այդ զգացումը հաճախ անթարգմանելի է դառնում, առավելապես ցավազին է անորոշության՝ սիրո ճնշող տագնապը, սպասման տառապանքը, կրկին հանդիպման հույսը, որ վիպակի հերոսների ապրումներին միահյուսված՝ նորօրյա աշակերտության սրտերում էլ արտահայտվում էր իրենց իրական ապրումների՝ կարոտի ու ցավի, հիասքանչություններով:

*Հայկական լրագրական՝ Լու Անջելեսից,
«Սամակավարժի անկյուն», 2016-11-09
<http://usarmenianews.com/am-n-6474.html>*

**ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ, ՈՐ ՄԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ
ԴՊՐՈՑ ԷՐ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ**



տարբեր ոլորտի մարդկանց և մեր դպրոցի աշակերտներին: Առանցքում գրողի «Աշնանային ցրտեր» վիպակն էր, որ 12-րդ հումանիտար դասարանի իմ աշակերտների կողմից քննարկվում էր:

Միջոցառումը հուզառատ էր, զգացմոնքային: Կարծիքների հեղեղ կար՝ յուրաքանչյուրը յուրովի արտահայտությամբ: Կերպարներ կային վիպակում, որ արդարացվում կամ մեղադրվում էին, ու սիրո թեման նորացվում էր, մի նոր սեր էր բացատրվում, մի նոր կյանք, մի նոր լույսի տակ էին լուսաբանվում այս վիպակի հերոսները: Դպրոցականները, նորօրյա հերոսներ դարձած, վիճաքանում էին ու բանավեճի մեջ ընդգրկված ուսուցչուոս մտքերին էլ մեկ հակադարձում էին, մեկ՝ համաձայնվում: Որքա՞ն գեղեցիկ էր այդ բանավեճը, որ իրար դեմ էր հանել աշակերտական խմբերին: Կարծիքներ կային այնտեղ, սիրո ապրումներ, որ միահյուսվել էին դպրոցականների աշնան ու սիրո մասին գրած ստեղծագործական մտորումներին:

Մի կործանված դպրոցական սեր էր քննարկվում՝ ներսուզված աշնանային թախծու անհուսության ապրումներով: Տերյանական շարքի բանաստեղծություններով ներկայացած իմ դասղեկական 7-րդ դասարանի աշակերտուհիներն իրենց ասմունքով պիտի լրացնեին 12-րդցիներին, որոնց երեք խմբերի ներկայացրած այն աշնանային սիրո տիտուր երգերի ելույթները հիասքանչ կատարումներով միահյուսվել էին դահլիճում հավաքվածների ապրումներին:

Մանկավարժիս և իմ աշակերտներին ուղղված շնորհակալական

Մարտակերտի կենտրոնական գրադարանում կազմակերպված միջոցառումը մի առանձնակի հարգանքի արտահայտություն էր օտար ափերում ապրող արցախսի գրող Լևոն Աղյանի և նրա ստեղծագործությունների հանդեպ, որ իրար կողք էր հավաքել

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

խոսքը մի նոր հուզումնառատ զգացողություն էր, որ արտահայտվեցին շրջանի վարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասար-



դության հարցերի բաժնի վարիչ Հ. Մանուկյանի, հ. 2-րդ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչության Սուսաննա Բալասանյանի, 12-րդ դասարանի դասղեկ Նոնա Հայրապետյանի կողմից: Սիրառատ խոսքերս պիտի ուղղվեին կյանքի դպրոց քննարկող իմ աշակերտներին, միջոցառման բոլոր մասնակիցներին:

Սիրո թեման քննարկվեց որպես արժեք, որպես մարդկային վեհ զգացմոնք, որի մեջ ամբարված են խորը մարդասիրությունն ու նվիրվածությունը, վստահությունն ու հավատը:

*Հայկական լրաբանական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անլյուն», 2016-11-10
<http://usarmenianews.com/am-n-6505.html>*

**«ԱՇԽԱՎԱՅԻՆ ՑՐՏԵՐԻ»
ՄԵՂԱԳՐՎՈՂ ԿԵՐՊԱՐԸ**

Առավելագույն հետախոսազանցն ինձ համար հաճելի անակնկալ իր: Մարտակերտի պատմագիտական թանգարանի տնօրենն իր բարձր գոհունակությունն ու հիացմունքն էր արտահայտում Լևոն



Աղջուն, համաձայնվեցի մեկ ուրիշ միջոցառում կազմակերպել թանգարանում: Սնում էր ընտրել թեման, տեղավորվել ժամանակի մեջ, և ես նորից կանգնում եմ այն ստեղծագործության վրա, որ անցած փետրվարին՝ Բաքվի և Սումգայիթի ոճրագործության հիշատակի օրերին, վշտահար սրտերից արցունքներ էր քամել: Ու նորից թերթում եմ այն «Հեռացող եզերքը», որ ամեն անգամ այն մեզանից չի հեռանում ու մտովի մանկավարժիս տեսնում եմ ամիսներ հետո՝ մի նոր զայք փետրվարի, այդ գիրքը ձեռքին՝ աշակերտների հետ թանգարան մտնելիս:

«Աշնանային ցրտեր» վիպակն էր քննարկվում, բայց այդ գիրքը մեզ հետ էր...Ես տեսնում եմ սեղանին դրված «Հեռացող եզերքը», լսում եմ 12-դ դասարանի իմ աշակերտուհիների խոսքերն աշնան ցրտերում մնացած մեկ այլ սիրո մասին, որ մեղադրում են հերոսներին:

Կարապետյան Արմինե: «Գուցե Կարենի սերը անկեղծ էր, գուցե խսկապես սիրում էր Անահիտին, բայց ինչո՞ւ առանց բացատրության հետոցավ: Ինչ վերաբերում է Անահիտին, իրոք, սիրում էր Կարենին և կսիրի հավերժ, իսկ Մուշեղը, քաջատեղյակ լինելով Անահիտի ապրումներին, ամուսնացավ նրա հետ: Գուցե Կարենը չվերադառնար, նրանք,

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

անցյալի հուշերը հետևում թողած, ապրեին: Սակայն այստեղ կա նաև երեխա, ով մեղավոր չէ, բայց նրա համար էլ հաճելի չէ սառը և անտարքեր մքնողորտում մեծանալը: Զգիտեմ՝ նման իրավիճակում ինչպես կդասավորվի հետագա կյանքը, բայց ես Անահիտի փոխարեն կփորձեի Կարենին ցույց տալ, որ Մուշեղի հետ երջանիկ եմ ապրում»:

Հովսեփյան Լիլիք: «Մուշեղն այս պատմության մեջ չնայած միակ տուժողն էր, որ դարձավ սիրո գերի, բայց նրան չեմ կարողանում արդարացնել: Նա օգտվեց Անահիտի միամտությունից և գողացավ նրա սերը ու քարուն պահեց իր սրահի խորքում, որ ոչ մեկը չտիրի իր սիրուն: Իմ կարծիքով, Կարենն այնքան բույլ գտնվեց, որ չպայքարեց իր սիրո համար և դարձավ Անահիտի դժբախտության պատճառը, բայց վերջինս էլ երևի պիտի ասեր սիրած տղային, որ աշխարհում դեռ չկա մի այնպիսի սարքավորում, որով չափվեր իր անշափելի սերը նրա հանդեպ»:

Խաչատրյան Աննա: «Երբեմն ուզում եմ չհիշել անցյալն ու ապրել միայն երազներով: Այդպես էր նաև Անահիտը, սիրում էր Կարենին, ապրում է նրա հետ կապված իշխողություններով, բայց Մուշեղի կողքին էր լինում: Ես ատում եմ Մուշեղին, նա մարեց երկու սիրող սրտերի նրբագեղ ու զեղեցիկ սեր: Մեղադրում եմ նրան, որովհետև օգտվեց աղջկա թուլությունից, միխթարեց նրան ու հասավ իր նպատակին՝ չնայած իրենց մեղքի բաժինն ունեին նաև Կարենի ծնողները...»:

Դանիելյան Անուշ: «Ընթերցեցի վիպակը, չկարողացա խեղդել հուզմունքը, նրանց անմար սերը լուսի նման փայլ էր տախս շրջապատին: Մեղադրում եմ Կարենի ծնողներին, որ իրենց զավակի երջանկությունը խորտակեցին, իրենց վերաբերմունքով խափանեցին նրանց զինջ ու անհոգ սերը: Գուցե ես հակադրվում եմ մյուսների կարծիքին, բայց իմ համար Մուշեղը ստոր արարած է, ով, միխթարելով և խոճահարություն առաջացնելով Անահիտի մոտ, դարձավ սիրո տեր, բայց առանց փոխադարձ զգացողության: Անահիտի համար միևնույն էր, թե իր կողքին ով է՝ Մուշեղը թե մեկ ուրիշը: Նա կրցցրեց Կարենին, և, ինչպես ինքն էր ասում, ուրիշ կորցնելու ոչինչ չուներ: Նրան միայն մի հույս էր փայփայում՝ գոնե կրկին տեսնել Կարենին ու բացատրել... Ես համոզվեցի, որ յուրաքանչյուր անմոռաց սեր իր հետքն է բողնում ամենքի սրտում, և այդ օրերը մշտապես մեզ հետ են»:

Հայացքս սահում է զրբի տողերով, և ուզում եմ մեղմացնել Մուշեղի մեղադրանքը: Բայց ինչո՞ւ, չէ՞ որ նա սիրում էր: Ու գտնում եմ նրա խոսքը, որ ուղղված է Կարենին. «Հիշիր, կանայք սիրահարվում են բարդ բնավորությամբ տղամարդկանց, բայց որպես ամուսին՝ գերադասում

Նալուշա Պողոսյան

եմ... իմ նմաններին...»:

Եվ ահա տարիներ անց արձագանք է տալիս Կարենի պատասխանը. «Մեր բախտը մեզնից է կախված, բայց հերիք է, որ թեկուզ մի անգամ թեթևամտորեն վերաբերվենք այդ բախտին, որպեսզի նա քեն հանի մեզնից մեր ամբողջ կյանքի ընթացքում»:

Ու հայացքս հառում եմ դեպ երկինք, կարծես փնտրում եմ հեռուներից եկող աշնանային պարզկա, ցուրտ երկնքով անցնող այն կրունկների երամին, որ արձագանքում էր տիրամած կնոջ տառապանքին:

*Հայկական լրագվական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-11-11
<http://usarmenianews.com/am-n-6510.html>*

ԽՈՀԵՐՍ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՄ ԹՂԹԻՆ

Πρյուններով կիսվել և
խոհերս հանձնում եմ թղթին:

Աշնանային այդ գեղեցիկ օրը
մասնակցում էի յուրատեսակ մի
միջոցառման: Մարտակերտի
կենտրոնական գրադարանում
քննարկման էր դրված արձակա-
գիր Լուսն Աղյանի «Աշնանային
ցրտեր» վիպակը: Մթնոլորտը
տրամադրող էր, շուրջընուզը՝



զունագեղ ու, շուրջը լուրջը
զունագեղ ու պայծառ: Ահաև և միջոցառման «հերոսները»՝ Մարտա-
կերտի Վաղիմիր Բալայանի անվան թիվ 1 միջն. դպրոցի 12-րդ հումա-
նիտար դասարանի աշակերտները՝ հայոց լեզվի և գրականության ու-
սուցչուհի Նատալա Պողոսյանի գլխավորությամբ, ով կազմակերպել-
էր այս միջոցառումը:

Նրանց աշքերից հուր ու սեր էր ճառագում: Ոգևորությունը գագաթ-նակետին էր, դա փաստում էր նրանց յուրաքանչյուր խոսքն ու հայացքը: Պատաճեկան սիրո դրաման, որ վիպակի առանցքում էր, մեկնաբանվեց յուրովի: Խմբերի բաժանված աշակերտները փորձում էին արդարացնել կամ մեղադրել եերուսներին, առաջադրում իրավիճակի հարթեցման իրենց տարրերակները:



Նալուշա Պողոսյան

կետները հասանելի դարձնել հանդիսատեսին:

Ամեն ինչ այնքան գեղեցիկ էր կազմակերպված, որ թվում էր՝ հերի-արում էի: Լևոն Աղյան մարդաբնիատը այնքան էր հարազատացել, որ նրա ֆիզիկական բացակայությունը չէր զգացվում: Նրա «հերոսների» շուրթերով հնչած յուրաքանչյուր միտք մի պատկերավոր գրիար էր, իսկ աշնանային «ցրուերից» ոչ մի սառնություն «չփչեց», այլ այդ «ցրտեր» ջերմացրին բոլոր մասնակիցների հոգիները:

Ավարտելով խոսքս և դատելով բանավեճ-քննարկմանը ներկա մասնակիցների ջերմ ժպիտներից ու աշնանաբույր քողով պատված նրանց գրիանակ դեմքերից՝ վատահարար կարող եմ փաստել, որ միջոցառումը ստացված էր, գրքի սիրո առեղծվածը՝ ինքնատիպորեն բացահայտված:

Գոհար Մամունց

*Սարկակերպի շրջկարչակազմի աշխարհակազմի
մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի
երիտասարդության գծով գլխավոր մասնագետ*

*Հայկական լրապալամ՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-11-12
<http://usarmenianews.com/am-n-6514.html>*

**ԵՍ ՆՈՐԻՑ ԴՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԵՄ...
ՈՒՐԵՄՆ ՇՈՒՐՋՍ ԽԱՂԱՎԸ Է**

Մահմանային լարվածությունը երբեմն ինքնարավ, ահեղաղորդ գոռում-գոշյունով ծեծում է մեր դրները, իսկ ես անզորությունից երբեմն փորձում եմ մեղմաբար գրկել իմ անցած օրերը, ու այդ օրերի հանդարտության մեջ նորից իմ աշակերտների հետ եմ, նորից անցած օրվա՝ նրանց արտահայտած մտքերին շաղախված: Կիսատ մնացած խոսրո ուզում եմ շարունակել, որ Լևոն Աղյանի «Աշնանային ցրտեր» վիպակի բանավեճ-քննարկումը մի նոր հայացք էր, այն սիրո, ընտանեկան կյանքի մի նոր ընկալում էր նորօրյա աշակերտության պարզ ու գուլալ հոգիներում, որտեղ հնչում էին մեղադրանքի ու արդարացման խոսքեր՝ ուղղված գլխավոր հերոսներին: Եվ այն բարձրաձայնվում էր շատ հաստատուն, որ ներգործում էր հանդիսատեսի հոգուն: Իմ հարցը, թե արդյո՞ք սերը նոյն ձևով է ընկալվում հիմնա, համեմատած նախորդ տարիներին, չէ՞ որ հիմնա՝ մեր ժամանակներում, աղջիկը կարող է նույնիսկ սեր խոստվանել տղային: Լոռությունը խախտեց աշակերտուիդներից մեկը, ով պատրաստ էր վիպակի հերոսուհու փոխարեն նամակ գրել նրա սիրած տղային:

Արգումանյան Լաղա: «Այդ վիպակը կարդալիս ես կարծես հայտնի էի մի տխուր ու երևակայական աշխարհում, սիրտս թրթռում էր, չի կարողանում զապել հուզմունքս, ես ներխուժել էի Անահիտի հոգեկան ապրումների մեջ և զգում էի նրա ցավը: Կտրվել էի իրականությունից, ամքող էությամբ վիպակի հերոսուհու հետ էի, ում համար կորցրած դարոցական մաքուր սերը միայն թևածում էր իր հիշողություններում: Հասկացա նաև, որ ոչինչ չի լինում առանց պայքարի, պիտի պայքարես նրա համար, ում սիրում ես: Ես ուզում էի Անահիտի փոխարեն Կարենին գրել. «Մենք չվստահեցինք միմյանց: Դու գնացիր, երբ ես քո կարիքն ունեի, իմա քեզանից հետո ինձ համար լոռությունը դարձավ կատարյալ ձայն, ինձ պատեց խենք միայնությունը, ես սկսեցի ապրել քեզանով, բայց առանց թեզ: Երբ ոչինչ, ոչինչ չմնա, ես զգացմունքներս



Նալուշա Պողոսյան

կրողնեմ այստեղ՝ այս բառերի մեջ, այս տողերի մեջ, ու այնտեղ գրված կլինեն, որ ես այն օրերից ել սիրել եմ քեզ, բայց ինձ մնում է փակեմ անցյալի էջը ու ապրեմ իմ այս կյանքով»»:

Հակառակ մյուս խճի՝ Մուշեղին ուղղված մեղադրանքների, այս աշակերտուիհիները արդարացնում էին նրան, ով անսահման մեծ սեր է ունեցել վիպակի հերոսություն հանդեպ և տարիներ հետո ամուսնացել նրա հետ:



Անդրյան Անգելինա: «Լևոն Աղյանի «Աշնանային ցրտեր» վիպակը սիրու պատմության հուզումնառատ դեպքերի նկարագրություն է, որն առաջին իսկ էջերից անմիջապես մեծ հետաքրքրություն առաջացրեց ինձ մոտ: Նուրբ ու իրական է գրողը պատմում՝ յուրովի ներկայացնելով ամեն մի կերպար: Սակայն հակառակվելով երկրորդ խճին՝ Ես Մուշեղին արդարացնում եմ: Անմիջապես սիրեցի նրա համառույթունն ու ազնվությունը՝ հանուն սիրո: Ես սիրային այս եռանկյունում մեղավոր եմ համարում միայն Կարենին՝ որպես բուլանորք դասաճանի, ով իր մոտ չպահեց Անահիտին»:

Քաղրյան Իննա: «Վիպակը կարդալուց հետո, չգիտեմ նոյնիսկ՝ ինչ զգացողություն ապրեցի, երևի թե՝ ափսոսանք: Ոչ մեկին չեմ կարողանում մեղադրել, միակ մեղավորը ճակատագիրն է, որ բաժանեց երկու սիրող սրտերի: Այդ սերը լի է գեղեցիկ ապրումներով և տագնապներով, երկուսն էլ մեղավոր են, որ կորցրին իրենց երջանկությունն ու հանգիստը: Անահիտին համարում եմ «անմեղ մեղավոր», նա պիտի պատախանեք Կարենի նամակին, այնինչ այն բողեց անպատճախան, գուցե այդ դեպքում հանգամանքներն այլ ձևով դասավորվեին:

Այս վիպակում ամենից շատ խղճում եմ Մուշեղին՝ այդ բարի ու հոգատար մարդուն, որ այսպես ասած՝ «կրակն է ընկել իր սիրո ձեռքին»: Շատ կցանկանայի, որ փոխադարձ սերը հաղթեր, բայց, ավա՝ դ...»:

Կարապետյան Սյուլվաննա: «Այս պատմության մեջ գլխավոր մեղավորները Կարենի ծնողներն են, իսկ Անահիտը չպետք է ամուսնա-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

նար առանց սիրո: Մուշեղը գիտեր, որ Անահիտը չէր սիրում իրեն, բայց ամուսնացավ: Առանց սիրո չկա երջանկություն, Մուշեղին արդարացնում եմ, քանի որ նրա փոխարեն յուրաքանչյուրն էլ կպայքարեր իր սիրուն հասնելու համար: Ես կարծում եմ՝ Անահիտը ժամանակի ընթացքում կսիրի նրան»:

Արյո՞ք զիսավոր հերոսուիին կկարողանա սիրի իր ամուսուն, և հայացք սահում է վիպակի տողերով, որ բարձրածայն ընթերցում եմ՝ կարծես ցանկանալով ի լոր աշխարհի անցյալի հնորյունից դուրս քերել գոռղի կողմից վաղուց հաստատված մի մեծ ճշմարտություն, որտեղ հիշողությունը մարդկային երջանկությունն է իմաստավորում. «Կաղնավուն մի թռչուն կա, հանդերում է լինում, երջանկությունը նման է եղ թռչունին,- ասաց հայրն այն ժամանակ Անահիտին: - Նստում է աչքիդ առաջ, մի երկու քայլի վրա, ուզում ես բռնել, ցատկում, մի քիչ էն կողմ է կանգնում, ասում ես՝ մի քայլ էլ անեմ՝ կրոնեմ: Խարելով տանում է, է՝, աստված գիտի, թե որտեղ: Մարդու երջանկությունը նման է եղ փոքրիկ թռչունին, թվում է ահա մոտ է արդեն, հասնում ես երջանկությանդ, բայց, չէ, էն թռչունի պես նորից իր ետևից տանում է քեզ ու մինչև վերջ էլ եղավես գնում ես երջանկության ետևից ու երբեք չես հասնում»:

*Հայկական լրագրվական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-11-13
<http://usarmenianews.com/am-n-6524.html>*



Ա 12-րդ հումանիտար դասարանի միակ տղան է, ազնիվ ու արդար, պարզ ու մաքոր հոգով միակ աշակերտն այն մնացած տասներկու աղջիկների կողքին: Սենք սիրում ենք նրա համարձակ մտորումները, որ երբեմն բարձրաձայնում է. «Տանել չեմ կարողանում այդպիսի տղաներին, ովքեր միայն խոստումներ են տալիս աղջիկներին: Ես համարում եմ, որ այդպիսի տղաները քուլամորթ են: Տղանարդն արժե այնքան, որքան իր խոսքը, ես դրանով եմ առաջնորդվում: Չատ սիրող գույգեր կյանքում հրաժարվում են միմյանցից՝ միայն հասարակության կարծիքը հաշվի առնելով կամ ծնողների մեղքով: Պետք է անտեսել բոլոր կարծիքները, դու ես քո կյանքի տերը, քո կյանքի ուղին ընտրողն ես, այսպես ասած՝ դու ես «սցենարիստը», ուրեմն դու ել պիտի կառուցես այդ կյանքը»:

Այն օրը՝ Լևոն Աղյանի «Աշնանային ցրտեր» վիպակի քննարկման ժամանակ, նա բոլորի կողմից ծափահարության արժանացավ այս խոսքերի համար: Դասարանում նա միշտ հանգիստ է, շատ կազմակերպված, երբեմն լրակյաց ու ինքնամփոփ, բայց նա այդ օրը խոսում էր ոգևորված... Չատերի հոգուն հաճելի խոսքեր էր հնչեցնում՝ երբեմն

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

ըմբուտացած: Նրա և այն մյուս երեք աշակերտուհիների խոսքերում մեղադրանքի խոսքեր էին հնչում այն գրական կերպարների հանդեպ, որ կորցրին իրենց սերը:

Սեյրան Աղարեկյան: «Իմ կարծիքով, այս պատմության մեջ բոլոր հերոսների մեղքն ու բացասական ազդեցությունը կար, բայց մասսամբ: Ես առանձնացնում եմ Կարենի բացասական կերպարը վիպակում, քանի որ նա Անահիտին սեր խոստացավ, ասաց, որ կվերադառնա, բայց շատ ուշ վերադառնավ, ավա՞ն, Անահիտն արդեն ամուսնացած էր: Կարենը պետք է իր խոստումը պահեր և ժամանակին վերադառնար կամ էլ չգնար արտագնա աշխատանքի, եթե նա իսկապես սիրում էր աղջկան: Վերջինիս ես համարում եմ զոհ, ով հավատաց Կարենին: Եթե ես լինեի նրա փոխարեն, իսկապես սիրեի Անահիտին, հաստատ նրան բաց չէի թողնի, կսիրեի, կերպանկացնեի նրան՝ անկախ մնացածների դիրքորոշումից»:

Զավադյան Վարդուիի: «Չեմ կարողանում արդարացնել աղջկան, որ սկզբում ուզում էր իր համբույրներն այնքան «էժան ծախտեր» տղային: Դա երեսի նրանից էր, որ մինչև հոգու խորքը սիրահարված էր Կարենին, և նրան ամեննին չէր հետաքրքրում շրջապատի կարծիքը:

Կարենը միանգամից դեմ գնաց իր ծնողներին, նրան չէին հետաքրքրում քաղաքի հարուստ գեղեցկուհիները: Դա ապացուցում էր, թե որ-քան կարևոր էր իր համար Անահիտը: Բայց տղան էլ ուներ իր մեղքի բաժինը: Նրա անակնկալ հեռանալը կասկած է ծնում աղջկա հոգում, որ կամաց-կամաց փշրում են Անահիտի երազանքները»:

Լույսան Գեղեցիկ: «Անահիտի և Կարենի սերն ինձ շատ հետաքրքիր էր թվում և խորհրդավոր, մինչև որ հայտնվեց Մուշեղը, ու ամեն ինչ հիմնովին փոխվեց: Ես այդտեղ այդ սերը պահպանելու ձգտում չտեսա: Խղճում եմ Մուշեղին, որովհետև իր կողքին կար կին, ով նրան չէր սիրում, չէր նկատում նրա ներկայությունը: Չէի ցանկանա նրանց իրար հետ ամուսնացած տեսնել: Ինձ համար Կարենը թուլամորք երիտասարդ էր, ով իր սերը հեշտությամբ դարձրեց ուրիշինը: Մուշեղի կերպարը ինձ որոշ շափով դուր եկավ, քանի որ նրա մոտ սիրո հարցում համառություն և պայքար տեսա»:

Աքրահամյան Ռուզաննա: «Այս վիպակում ես իսկական սեր շտեսա, հիասթափություն ապրեցի, մեղադրում եմ և՛ Անահիտին, և՛ Կարենին,


Նայուշա Պողոսյան

որ իրենց խոստմանը տեր չկանգնեցին: Երևի նրանց ժամանակներում սովորական էր, որ աղջիկն առանց սիրելու էր ամուսնանում, իսկ մեր օրերում հակառակն է...»:

Բայց ինչո՞ւ ես ցանկացան հակադրվելով այս դեռահասներին, ընթերցում եմ տողեր վիպակից, որ զյուղից ոչ հեռու կամքջից վեր՝ ուղենիների տակ, մի փոքրիկ աղբյուր կար, այնտեղ էին նրանք ամեն օր հանդիպում: Եվ մամոռու քարերի մոտ կամացուկ երգող անանուն աղբյուրը նրանց գաղտնիքն էր պահում, ու այնտեղ մի գեղեցիկ սեր կար, մի անափ երջանկություն:

*Հայկական լրապալական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-11-20
<http://usarmenianews.com/am-n-6702.html>*

**ԶՈՎԱԾՈՒՆ ԹԱՎ ԱՆՏԱՌԻ
ՄԻ ՀԵՌԱՎԱՐ ՎԵՐՀՈՒԾ**



«Անձրեսից հետո» ժողովածուի մեջ նոր շուր են տալիս տաղանդավոր արձակագիր Լևոն Աղյանի ստեղծագործություններին: Այնպէս նուրբ են հյուաված այս պատմվածքները, կարծես երազներ են, սա այն է, ինչ որ ճշմարտացիորեն Խահակյանն է ասել Բակունիցի ստեղծագործությունների մասին, որ այստեղ «կախարդորեն հալվում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա և իրական ներկան դառնում է երազ»: Կարծես Բակունիցի մքնաձորյան բնաշխարհի իրական կյանքին զուգահեռվում է գյուղական մի նոր աշխարհ, որտեղ Աղյան գրողի գրիչը նրբորեն պատկերում է իր հայրենի բնաշխարհի կուսական բնության գեղեցկությունը, մարդկային հոգու անաղարտ մաքրության կողքին ստեղծում է կերպարներ, որ երբեմն իրենց ներկայությամբ դառնություն են բերում անրիծ հոգիներին:

«Զովածուն քավ անտառ էր, հովիս», մի գեղեցիկ վերիոշ, մարդկային հոգու անփոխարինելի զգացողության և երջանկության զրավական մի նոր սեր, որը, հանգամանքներից ելնելով, փլուզվում է:

Այստեղ Արտաշեսը տարիներ առաջ էր իր ծնողների հետ ընտանիքով գյուղից տեղափոխվել քաղաք, կարուղ հայրենի պապենական տան հանդեպ ծնվել էր տարիներ հետո, բայց գյուղական կյանքից կտրված երիտասարդը մոռացել էր իր խոստումները սիրած աղջկան: «Ու եք Արքինեն հանկարծակի լսեց, որ Արտաշեսը գյուղ է եկել, սիրտն ասես միանգամից կանգ առավ, շնչելը դարձավ դժվար, թվաց ինչ-որ բան կտրվեց ներսում, երեսը սկսեց վառվել»:

Արտաշեսի կերպարը տիպական դարձնելու, նրա էությունը մինչև վերջ բացահայտելու համար հեղինակը գործածել է շատ բնորոշ բառեր ու արտահայտություններ. «Թերև փոշի բարձրացնելով՝ եկավ ու անցավ Արտաշեսի մերենան...Արտաշեսը նստել էր հպարտ ու ինքնահավան, գլուխը բարձր, աջ ձեռքը դեկի վրա էր, ձախը պահել էր քամու

Նայուշա Պողոսյան

դեմ...»: Մերենայի թողած փոշու ամպն իր քերած մշուշով գալիս է լրացնելու Արփինեի հոգուն համակած վիշտը. «Փոշու ամպն այդ հանդարտորեն հալվեց, մեղմ ու հուշիկ նստեց ճամփեզրի կանաչներին ու ճամփին, և այլևս ոչինչ չմնաց քիչ առաջվա փոշուց, որ նման էր հեռավոր մշուշի...»:

Խոր զգացմունքով է վերարտադրվում Արփինեի հոգու տիվրությունը, նա հոգեբանական ծանր դրամա է ապրում, սիրո, երազի, կարոտի, դառնության, բաժանման հակադիր զգացմունքի արտահայտություն կա այստեղ. «Կար սերը՝ զորեղ ու քննուց, քաղցր ու կարոտամաշ, բայց այն կամաց-կամաց անցավ... Հետո սերը կար ու չկար, հետո այլևս չկար: Ինչո՞ւ անցավ, ինչո՞ւ ոչինչ չմնաց...»: Անեզր վիշտ է ծնվում նրա հոգում, վարանու հայացք, խոր զգացմունքների հակադրություն: Եվ այդ զգացմունքների տարերային արթնացումն զգացնել է տախու նրան, որ իսկական սերը երբեք չի մոռացվում, այն վերստին հանում է՝ հիշեցնելու մի նոր տառապանք. «Ուրեմն կար սերը, մոխրի մեջ անքեղված կրակի պես մնացել էր ու իմաս նորից մխում էր ...Ափսոս, հազար ափսոս, որ հնարավոր չէ կանգնեցնել ու ետ տալ ժամանակը, որպեսզի ուղղես սխալդ»:

Արփինեի մոտ հոգեբանական ճգնաժամն սկսվում է պատմվածքի սկզբում, երբ իմանում է, որ Արտաշեար զյուղ է եկել, այն շարունակում է ճաշի ժամանակ, ավելի սրանում անկողնում ամուսնու կողքին: Այդ զգացումն իր բարձրակետին է հասնում պատմվածքի վերջում, երբ Արտաշեաի կողմից անտարբերության է մատնվում: Իսկ այդ հոգու երկատվածությունը գրողի գրչով հրաշալիորեն պատկերվում է անգամ անցումային տարբեր իրավիճակներում. «...կարի շիրերը, հանց արևի շողեր, կաքավում, ոստոստում էին դույլի մեջ, կարը բարձրանում, փրփրում էր, փրփուրները պայրում էին»:

Տար տարուց ավելի Արտաշեար զյուղ չէր եկել, պարզվում է՝ նա ուզում է պապենական տունը վերանորոգել, որ ամեն տարի ամռանը ընտանիքով զյուղում հանգստանան: «Դույլի մեջ թշում էր կարը»-ամեն ինչ ասված է այստեղ, Արփինեի հոգու փոքրորիկը արտահայտվում է մի երկու բառով: Պատկերը շարունակվում է, հոգում տեղի ունեցած ալեկոծությունը ափերից դուրս է գալիս «Ասես հանցանքի մեջ՝ մեկը բռնեց Արփիկի ձեռքը, գրալը դողաց օդում, աննկատ նետեց ափսեի մեջ»: Անցյալի հուշը նրան հանգիստ չէր տախու. «Ինչո՞ւ ես եկել,- մտովի ասում էր նրան,-ինչո՞ւ փախար այն ժամանակ....»:

Մուրելի՝ Արփինեի ամուսնու խոսքերում մի անցած կենսագրություն

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

է բացահայտվում. «Նա Արտաշ էր, ես՝ Միքայել, իհմա նա Արտաշես է, ես՝ Մութել:... Դպրոցում ինձ հետ նույն նատարանին էր նստում, գրավորներն ինձնից էր արտագրում, զնաց մարդ դառավ, որովհետև հետևին տեր ուներ, իսկ ես մնացի տափարած ու սիլոսի փոս լցնող»:

Բայց ո՞վ կարող էր հասկանալ Արքինեի հոգու ցավը, երբ նա այդքան տարիներ ապրել էր չսիրած տղամարդու կողքին: «Ամուսնու բաժակը թեյ լցնելիս Արքինեն նկատեց, որ կանաչ սիլոսի հոտ էր փշում նրանից: Այդ հոտն ուղղակի խեղդում էր, երբ նրանք մարել էին լույսը, մտել անկողին»:

Գյուղական կյանքով ապրող այս մարդկանց միջև ծննդում է հակադրությունը, Արքինեի հոգեկան աշխարհում հակակրանքի զգացողությունն իր կյանքի անհրապույր կողմերն է բացահայտում, նա արդեն նկատում է, որ «Մութելն անքրաշ էր, մազերը՝ կոշտ, անդուր, ծակծկում էին Արքինեի դեմքը, իսկ սիլոսի սուր հոտն անտանելի էր, ծանր»:

Մի՞թե միայն Արտաշես մասին լսելոց հետո է առաջին անգամ նա զգում վանող տհաճությունն ամուսնու հանդեպ: Մի՞թե Արքինեի հոգեկան աշխարհում այդ զգացողությունն սկսվում է սիրո պակասից...

Գյուղական կյանքի դժվարություններով ապրող այդ մարդկանց մոտ առկա է ողբերգությունը, բայց տարբեր են նրանց գիտակցման աստիճանները. «Արքինեն գոցել էր աչքերը, և Մութելը չէր հասկանում, թե ինչո՞ւ կնշո՞ւ ամբողջ մարմինը կարծես թե ոտից գլուխ դողում էր»:

Սա իսկական աղետ է ամուսնական կյանքում, և այդպես էլ Մութելը ամեն անգամ անկողնում կնստի տեղաշորի մեջ, շփորված կնայի Արքինեին ու ոչինչ չի հասկանա, թե ինչո՞ւ ամեն անգամ, երբ փորձում է մոտենալ կնոջը, նա ավելի ուժեղ է գրկում բարձր և խոլ հեկեկում: Մի՞թե սա չէ ստեղծագործության հաջողվածությունը, երբ այսպես էլ Այյան գրողի հերոսները՝ սքողած իրենց հոգու գեղեցկությունն ու ապրումները, տառապելով լուր ու աննկատ, կշարունակեն ապրել իրենց կյանքով՝ կարողունակ ազդելու ընթերցողի տրամադրության և հուզաշխարհի վրա:

Նորից անցյալի հուշերում երևում է Արտաշեսը...Նա կողքի բաղամասից էր, մինչև ութերորդ դասարան գյուղում էր սովորել, բայց հետագայում տեղափոխվել են քաղաք ու հազվադեպ էին գյուղ գալիս: Գյուղեր նաև, որ նա համալսարանում էր սովորում: Հայրենի գյուղ եկած տղան հաճախակի էր զնում հանդ, որտեղ աղջիկներն էին աշխատում: Բայց Արտաշեսի նկատմամբ սերն իր հոգում՝ նա ամենին չէր մտածում հոգնելու մասին: Խոտն այդ դաշտում արդեն հավաքել էին, ուրիշ

Նալուշա Պողոսյան

տեղամաս պիտի գնային, երբ նա եկավ. «Վաղը երևի գնամ,- ասաց Արտաշեսը: -Դիպլոմայինս չեմ գրել դեռ, պիտի հասցնեմ»: Արփինեն ծնկներում բոլորյուն զգաց, սիրո քարտաց կրծքի տակ: Ինչպէ՞ս: Այդքան շո՞ւտ: «Բա ե՞ս», -անձսելի մրմնջաց նա: Հիմա ինքն ի՞նչ պիտի անի առանց Արտաշեսի: Ինչ-որ տեղ, հեռվում, կվացրեց լորք, և Արփինեի սիրտը ճնլվեց, նվազեց: Նրան թվում էր՝ Արտաշեսն ամեն օր պիտի գար, ու ինքը գողունի պիտի նայեր նրան ու գիշերները լաց լիներ երջանկորյունից»:

Դեպքերի զարգացման և զիսավոր կերպարի՝ Արփինեի հոգեվիճակի իրարամերժ փոփոխությունների պատկերման ընթացքում իրար են հաջորդում անցյալի ուրախ և պայծառ վերհուշն ու ներկայի տիտոր պատկերները: Չնայած աղբյուրի տեղը տղան շատ լավ գիտեր, բայց Արփինեն տանում էր նրան աղբյուրը ցույց տալու:

Գրողի գրիչը սիրո թրթիռներով լեցուն աղջկա գյուղական աշխարհի բանաստեղծական էուրյունն է մարմնավորում. «Եղնիկի պես թերև ու գեղանի՝ Արփինեն հեզանազ գնում էր առջևից: Մտան անտառ, ուր ծառերը վերձիգ ելնում էին մինչև երկինք, երկնքի կապույտին բավելով օրորվում: Զայն ձայնի՝ գեղ-գեղ դայլայլում էին ստիսակներն ու դեղձանիկները: Ինչ-որ տեղ՝ անտառի խորքում, ընդհատումներով կանչում էր կկուն: Անտառը խշշում էր տամուկ բույրերով, երկնահաս հաճարկենիներն ու զմրուխտյա մամուապատ հսկայական քարերը շրջանցելով, նրանք մի քիչ ևս առաջ անցան, ներքեսում երևում էր արդեն Առաքելանց աղբյուրը»:

Տարիներ անց Արփինեն նորից պիտի հիշեր, որ այդ օրը լցված էր բուրմունքով, տեսանելի էր սլացիկ ծառերի հանդարտ օրորը, լսում էր հավքերի ուրախ ճռվողյունը, զգում էր Արտաշեսի այրող բառերն իր հրաբորք շուրջերին. «Արփինեն, մեջքով սեղմված հաճարկենու բնին ու անկարող ընդդիմանալու զգացմունքների խելացնոր հորձանքին, դանդաղորեն սահեց ցած: Հետո ինչ էր կատարվում Արփինեն չէր ըմբռնում, նա մեջքով զգում էր գետինք, փափուկ պաղ խաշամը, Արտաշեսն իր գրկում սեղմում էր նրան, իսկ նա, բերանն ազատելով նրա անհագուրդ շուրքերից, երբեմն առ երբեմն շշնջում էր տեսնդավառ.

-Խսկ եթե չառնե՞ս, Արտաշես: Խսկ եթե հանկարծ ինձ չառնե՞ս...»:

Հեռավոր տապ ամռան օրերում մնաց մի հրաշալի օր, երազներով լեցուն մի վախվորած անհուսություն, որ այդ օրվանից փարարվեց նրան, և աղջկա տագնապալից օրերին ավելացավ մի լուր հառաջանք, որ մնաց բոլորից անտես՝ բավուտներում բողոքելով մի գեղեցիկ սիրո

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

հուշ: Իսկ որտե՞ղ մնացին Արտաշեսի այն սիրաառատ խոսքերը. «**Ես քեզ սիրում եմ, ես խենթորեն սիրում եմ քեզ, Արփինե՛: Ես քեզ կտանեմ քաղաք, կտվորես, ես քեզ այստեղ չեմ քողնի»:**

Տաս տարուց ավելի է՝ Արտաշեսը չէր եկել գյուղ, բայց ահա եկել էր՝ տակնուրա անելու նրա սիրությունը: Արփինեի խաղաղ հոգին վրդովվել էր, ինչո՞ւ տարիներ առաջ ազատություն տվեց իր զգացումներին առըստրը գնալու ճանապարհին: Գյուղական կյանքից հեռանալով՝ ինչո՞ւ Արտաշեսը մոռացավ իր խոստումները սիրած աղջկան, բայց արդյոք դա սե՞ր էր, երբ նա այդքան շուտ մոռացավ: «**Արփինեի սիրտն արագ խփում էր, իսկ շուրբերը չորացել ու դողում էին», երբ տեսավ իրենց մոտեցող Արտաշեսին: Նա կարծեն թե առաջվանն էր՝ «քարակիրան, պլացիկ, միայն քունքերն էին ճերմակել, և ալեխանն մազերն առաջվա պես անփութորեն թափված էին ճակատին»:**

Այո՛, ընթերցողն էլ սպասում է, որ նա կմոտենար Արփինեին, կսեղմեր նրա ձեռքը, և նա սեղուն կնայեր Արտաշեսի աշքերին ու կիիշեր անցյալի մի գեղեցիկ հոյշ: Աղջկա հոգում ծնված հարցումը տարիներ շարունակ նրան տանջել էր, նա ասես սպասել էր այսպիսի մի հանդիպման, զուցե կիարցներ նրան, թե ինչո՞ւ խարեց իրեն ու հետ չվերադարձավ: Նա նկատեց Արփինեի վախսորած աղջկան, որին կոնֆետ տվեց: «**Արտաշեսն իր վաղեմի լուսաշող ժպիտով ժպտաց Արփինեին: Այնպես, ինչպես ժպտաց այրի Հերսիկին, ինչպես ժպտաց Նանարին: «Մոռացե՞լ ես, -արտասուրները հազիվ զսպելով, ինքն իրեն դառնությամբ ասաց Արփինեն: -Ամեն ինչ մոռացե՞լ ես»»:**

Դեպքերի հետագա ընթացքը նոր խմորումներ պիտի ծնեին նրա հոգեկան աշխարհում: Նա լսում, տեսնում էր իր առաջին սիրո, տղամարդու մերձավորությունը կողքին, իսկ Արտաշեսի կողմից այդ օտարությունը պիտի փլուզեր նրա հոգին: «**Արփինեն մնացել էր կանգնած պոմիդորի արխի մեջ՝ ցեխոտ փայտը ձեռքին: Արցունքներն արդեն անարգել սահում էին այսերին ի վար, իսկ կանայք չէին տեսնում, որովհետև նրանք հմայված նայում էին Արտաշեսին, կարի նման սպիտակ «Վոլգային» ու երանի տալիս Արտաշեսի կնոջը...»:**

Կործանվում է երազների մի հիանալի աշխարհ, փլուզվում մաքուր սիրո բույլ պատրանքներ, սիրո հիշողության ու ներկայի մեջ կործանվում է Արփինեի հավատը: Անցած կյանքի սիրո տարերքը, ինչպես արթնացել, այնպես էլ մարում է նրա հոգում: Գուցե տարբե՞ր էր նրանց մոտ սիրո ըմբռնումը, հակադիր, ովքեր ժամանակին զգայական թրթիոներ են ունեցել միմյանց հանդեպ, բայց այն մոռացվել էր քաղաքում

Նալուշա Պողոսյան

ապրող երիտասարդի մոտ: Հոգեկան խռովը նրան հասցնում է զգայական ապրումների գագարնակետին. «...Կանայք վազելով մոտեցան խմբվեցին. «Բ՞նչ պատահեց, ախչի», ...իսկ Արփիմեն նստել էր արխերի մեջ՝ սածիլներն ու ցեխոս փայտը ձեռքին, թուլացած, ուժասպառ, և լախս էր»: Հայրենի տունը նորոգելու և ամռան տաք օրերին ընտանիքով գյուղում հանգստանալու մտադրությունը, հասկանալի է, որ Արտաշեսին հաճախակի կրերի գյուղ, որեմն խաթարվում է մի կյանք, որ այդ տարիներին հարմարվել էր իր ճակատագրին ու ապրում էր՝ հոգուն անթեղած սիրո մի փոքրիկ հոլշ:

Մարդասեր գրողի լավատեսությամբ գրված ոչ ծավալուն, բայց ասելիքով հարուստ այս գողտրիկ պատմվածքը՝ զիսավոր հերոսունու հոգեկան ծանր ապրումներով, նորից հիշեցնում է ընթերցողին, որ չնայած հոգեբանական ծանր դրամա է ապրում Արփիմեն, բայց նրա հոգու ներքին տառապանքն ատելություն չի ծնում երիտասարդի հանդեպ: Աղյան արձակագրի վարպետությունը նաև մի կերպարի շուրջը նոր կերպարներ ձևավորելու մեջ է, վերհուշը պատմվածքում ձեռք է բերում նաև կառուցվածքային տարրի արժեք, և այն դառնում է տրամադրությունների փոխանցման, ոիթմերի փոփոխության միջոց: Եվ զարմանալի չէ, որ Աղյանի՝ կարոտի, սպասման, հույսի ու հիասքափության նրբերանգներով հարուստ այս ոճի պատմվածքները սիրված են ընթերցողների կողմից:

*Հայկական լրապեսական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-04-17
<http://usarmenianews.com/am-n-2909.html>*

**ՀԻԱՅՄՈՒՆՔ ՊԱՐԳԵՎՈՂ ԱՅՍ ԳԻՐՔԸ
ՄԻՇՍ ՄՏՏՔԻՍ ՄԵԶ ԿՄՆԱ**



ցի: Ես հասկացա, որ ամեն ինչ փոխվում է, և երբեմն արծաթը ուկու տեղ է անցնում: Արտավում էի, հոգիս տակնուվրա եղավ, ամբողջ օրը զիրքը ձեռքիս շրջում էի: Հասկացա, որ սերը սահման չունի, այն ծնվում է ակամա, անսպասելի, և ոչ մեկը չախտի թերանա, պիտի սրտի զերմագին խոսքն ասի նրան, ով թանկ է իր համար: Եվ ինչպես ասում է գրողը՝ միգուցե այլևս չենք տեսնելու նրան: Պետք է ներել նաև մեղքերը, բայց ով դավաճանել է, բազում անգամ, նոյնը կանի նաև հետո, մոռանալ է պետք նրան: Ես շատ եմ ուզում, որ բոլորը կարդան և հասկանան իրական կյանքի արժեքը»:

Անուշ Գանիելյան, իմ սիրելի աշակերտուհի... Չատ հանդարտ, ազնիվ բնավորությամբ, նուրբ հոգու տեր աղջիկ: Նա հետո նստեց, ես ուշադիր նայում եմ նրան շատ իհացած, ինձ թվաց՝ ասելիք ունի դեռ, և նրան ասում եմ. «Երե ինչ որ բան կա, որ չես ասել, կարող ես բորբին հանձնել...»:

Որոշ ժամանակ անց նա ինձ տվեց մի սևացրած քուղթ. «Հիացմունք պարզենող այս զիրքը միշտ մտքիս մեջ կմնա... Այն ինձ հուզեց, կերպարներ կային, նրանց հետ էի ես, բայց ինչպե՞ս բացատրել այս գրքի հաջողությունը, որ այսպես տիսրեց-



11 -րդ դասարանում եմ, ձեռքիս միակ զիրքը իմ աշակերտուիկն վերցրեց, որ ընթերցի: Հաջորդ օրը, մի քիչ հուզված, ինձ հանձնեց զիրքը: Իմ հարցական հայացքը նկատելով՝ նա բացատրեց. «Կարդալով Լևոն Աղյանի «Անձրևից հետո» արձակ ստեղծագործությունների ժողովածում՝ շատ հուզվե-

Նալուշա Պողոսյան

թեց ինձ, այստեղ միայն դառը ճշմարտություն կա: Գրողից բացի, կարծում եմ, ոչ ոք ավելի լավ չէր կարող գրավել ընթերցողի ուշադրությունը, այս գրքում պատմվում է մարդկային տառապանքի, ցավի, սիրո, հավատի մասին: Նրան հաջողվում է մի քայլ անել և ոգեշունչ կոչ հղել բոլորին: Ես վստահ եմ, որ այս գիրքը ոչ մեկին անտարբեր չի բող-նի...»:

Նայում եմ թղթին հանձնված նրա տողերին, նորից նայում իմ աշակերտուհուն, զարմանում եմ նույնիսկ, հոգում ծանրացած ցավը տեսնես ինչի՝ հետևանք է՝ ապրած իր անձնական հուզական վիճակի՝, թե՞ գրքի որոշ հերոսների ծանր ճակատագրի... Ինչ էլ որ լինի, գիրքն ընթերցող ունի, այն էլ հուզառատ՝ հոգուն հարազատ, սրտի կսկիծով, արցունքն աչքերին...

*Հայկական լրագրական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի ամելյուն», 2016-03-23
<http://usarmenianews.com/am-n-2253.html...>*

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՍԻՐՈ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



«Եթե լինեփ Արփինեփ Փոխարեն, ես իմ ձեռքերով կսպանեփ Արտաշեսին»,՝ 12-րդ դասարանում իմ աշակերտուհու՝ Աննա Խաչատրյանի՝ զայրույթ արտահայտող այս խոսքն ինձ հանկարծակիի բերեց:

Արտաքուստ հանգիստ է միշտ, երգելու հմայիչ ձայն ունի նա: Եվ ահա տանը կարդացել

էր Լևոն Աղյանի պատմվածքներից մեկը՝ «Զովասուն քավ անտառ էր, հովիս», մի գեղեցիկ սիրո վերիուշ, որը, հանգամանքներից ելնելով, փլուզում է: Չուցե այս գեղեցկատես դեռահասի անձնական կյանքում սիրո անհանգիստ ապրումնե՞ր կային, որ մի պահ իրեն պատկերացրել էր Արփինեփի կերպարում, և այն պիտի արտահայտեր հոգու անհանգիստ պոռքկումով:

Պատմվածքի դիպաշարից զիտենք, որ Արտաշեսը տարիներ առաջ իր ծնողների հետ ընտանիքով զյուղից տեղափոխվել էր քաղաք, կարոտը հայրենի պապենական տաճ հանդեպ ծնվել էր տարիներ հետո, բայց զյուղական կյանքից կտրված երիտասարդը նոռացել էր իր խոստումները սիրած աղջկան: Անշափելի է Արփինեփի հոգու տիրությունը, նա հոգերանական ծանր դրամա է ապրում, երբ լսում է Արտաշեսի զյուղ գալու մասին: Նա ինքն էլ զյուղական հոգսաշատ կյանքով է ապրում և առաջին անգամ զգում է վանող տիաճություն այդ նույն կյանքով ապրող իր ամուսնու հանդեպ: Արփինեփի հոգում ծնված հարցումը տարիներ շարունակ նրան տանջել էր, նա կարծես սպասել էր այդպիսի մի հանդիպման, գուցե կհարցներ նրան, թե ինչո՞ւ խարեց իրեն, քաղաքում ընտանիք կազմեց ու հետ չերադարձավ: Եվ ահա նա լսում, տեսնում է իր առաջին սիրո, տղամարդու մերձավորությունը կողքին, բայց Արտաշեսի կողմից օտարությունն իր հանդեպ փլուզում է նրա հոգին:

Դասամիջոցին մի քանի հարցեր եմ ուղղում իմ աշակերտուհուն՝ փորձելով մեղմացնել նրա վրդովնունքը. «Մի՞թե պատմվածքի հերոսուհին մեղավոր չէր, որ դպրոցական լինելով, այդքան մտերմիկ հարաբերության մեջ է եղել սիրած տղայի հետ»:

Նալուշա Պողոսյան

Ավելի եմ զարմանում նրա հաստատական պատասխանից. «Ո՛չ աղջիկը սիրել է ու վստահել նրան, իսկ տղան նրան խարել է: Արփինեն արժանի չեր այդքան վիշտ ու տառապանքի: Միայն նա է զգում չսիրած տղամարդու հետ ապրելու ցավը: Արտաշեսն իրավունք չուներ խաղաղ Արփինեի մաքուր գգացումների հետ: Նա բույլ մարդ է, օգտվեց աղջկա միամստուքյունից...Այո՛, օգտվեց...Ես զգվում եմ Արտաշեսի նման տղաներից»:

Քարացած նրան լսում եմ, այդ պահին իմ աշակերտուհուն մի նոր կերպարով եմ տեսնում, մի բան, որ տարիների իմ դասավանդման ընթացքում երբեւ նրան այդպիսին չեի տեսել: Ու նորից եմ պնդում, որ դպրոցական աղջիկն իրավունք չուներ անձնատուր լինելու սիրո կրթերին: Իսկ նա ավելացնում է. «Երեւ անգամ սխալվել է, Արփինեն չեր կարող ետ տալ ժամանակը, որպեսզի ուղղեր սխալը: Նրան մնում էր համակերպվել բախտի հետ ու ապրեր իր վաղեմի սիրո գեղեցիկ հուշով, որ ներսից ջերմացնում էր հոգին, բայց այդ սերը հանգավ, երբ գյուղ եկած այդ լկտի, ոչ հավասարակշռված Արտաշեսը չնկատելու տվեց նրան»:

Օրերի իմ տարակուսալից մտորումներից հետո աշակերտուիս բացվեց. «Երբեք չէի պատկերացնում, որ կարող եմ սիրահարվել, բայց սիրահարվեցի...»:

Նա իր անձնական ապրումների մասին խոսեց, իմ համար մի նոր Աննա էր նա, մի նոր հրաշք գեղեցկուիի, ում մանկությունն անցել էր իմ աշքի առջև, և ես չեմ ուզում, որ նա իր հոգում անհանգստություն ունենա, բայց ուրախ եմ, որ հասկացանք իրար, և հուսով եմ, որ իմ սիրելի աշակերտուին հետ մտերմորեն գրուելու դեռ շատ առիթներ կունենամ:

Նրանց յուրաքանչյուրի տառապանքն իմ տառապանքն է, ապրումն՝ իմ ապրումը: Չափազանց զգույշ եմ, եզակի ու խիստ անհատական մոտեցումներով եմ նրանցից յուրաքանչյուրին օգնում այս կամ այն մտահոգությունը կիսելու ժամանակ:

Հայկական լրատվական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անլոյուն», 2016-10-18
<http://usarmenianews.com/am-n-6089.html>

ԵՎ ՍԻՐԵԼՆ ՈՒՆԻ ՍԱՀՄԱՆ, ԵՎ ՆԵՐԵԼԸ



12-րդ դասարանում իմ աշակերտուհին՝ Սյուզաննա Կարապետյանը, ինձ հանձնեց տեսրի թերթերի վրա ձեռագիր գրված տողեր: Նա հրաժարվեց բարձրաձայն ընթերցել: Աշակերտները հորդորում էին կարդալ, իսկ նա մերժեց, բայց հայացքս ընկավ նրա տողերին, ու մի պահ զարմացա. «**Ոչ մի անգամ չեմ ափսոսացել, որ ինչ-որ մեկը հեռացել է իմ կյանքից, եթե հեռացել է, ապա նա տեղ չուներ իմ կողքին...**»:

Ես ինքս էլ մտորումների մեջ եմ, նա շատ ազնիվ է, բարեհանրույր ու ճշմարտախոս, համեստ բնավորությամբ մի աղջնակ, մի՞թե նա չի ափսոսացել կորցրածի համար, ու հետաքրքրությունից դրդված՝ հայացքս հառում եմ մյուս տողերին. «**Ասում եմ՝ ընկերող կդավաճանի, թշնամիդ՝ ոչ: Ես ինքս էլ կատարել եմ և՝ վատ, և՝ լավ արարքներ, բայց նաև այդ ճանապարհին հասկացել եմ, որ պետք չէ վստահել ամեն մեկին: Նույնիսկ ափսոսում եմ, որ ոմանց նվիրել եմ իմ բանկ ժամանակը»:**

Երբ օրեր անց կարդացի մեր հայրենակից գրողի պատմվածքներից մեկի մասին իմ աշակերտուհու տպավորությունը, այնտեղ տեսա անցածի կորսատի համար ափսոսացող իմ աշակերտուհում: Ինձ թվաց՝ ես նրան նորից վերագտա այս տողերում. «**Երբ Լևոն Աղյանի «Անձրևից հետո» գրքի բովանդակությանը նայեցի, առաջինն աշքիս ընկավ «Ապախսարանը» վերնագրով պատմվածքը: Այս կյանքում ամեն մեկս մի այնպիսի արարք ենք կատարում երբեմն, որ միշտ էլ զղում ենք, ափսոսում, ապաշխարանքի կարիք ենք զգում: Այդ վերնագիրն իմ հոգու անհանգիստ տվյալտանքներին համահունչ էր երևի, որ մի շնչով կարդացի: Շատ դուր եկավ ինձ, մանավանդ, որ վերջաբանն անկախատեսելի էր: Անհամբեր սպասում էի, թե ինչ կլինի հետո, բայց այդ հետոն մտքերս իրար խառնեց, սկզբում չգիտեի՝ ում մեղադրել, ում արդարացնել:**

Նալուշա Պողոսյան

Դպրոցական օրերի սեր կա պատմվածքում՝ մաքուր ու անեղծ, որ հատուկ է մեր տարիքի անչափահասներին: Գեղեցիկ էր Էլենի և Գևորգի սերը, բայց աղջիկը սխալ թույլ տվեց, երբ վստահեց իր ընկերութուն: Մի կողմից խղճում եմ նրան, որ տասներորդն ավարտելուց մեկ ամիս անց ընկավ Արսենի ու Վարդուհու պատրաստած թակարդը: Ընդունեց ընկերութուն հրավերը՝ թեքի գնալ սառը աղբյուրի մոտ, նրա եղբոր երկու ընկերների հետ: Էլենը զգիտեր, որ այնտեղ կլիներ Արսենը, իսկ վերջինս անտարբեր չէր նրա նկատմամբ: Ի՞նչ անենք, որ Գևորգն այդ օրը գյուղում չէր, նա չպիտի գնար նրանց հետ: Նաև Էլենը մեղավոր էր, նա թույլ տվեց, որ Արսենն իրեն համբուրեր, և հաջորդ օրը արժանացավ Գևորգի զայրույթին: Արսենը մի քանի բոպեռվ երջանկանալու համար ոչնչացրեց մի գեղեցիկ սեր, նա օգտվեց Էլենի միամտությունից:

Գևորգն անսահման սիրով նվիրված էր Էլենին, իմ կարծիքով, պիտի ներեր նրան: Կսում են՝ եթե սիրում ես, պետք է ներես, բայց նա չներեց, միայն տարիներ հետո նա զղջաց ու եկավ Էլենի մոտ այն ժամանակ, երբ երկուսն էլ ընտանիք ունեին: Էլենի անհաջող ամուսնական կյանքը վաղուց նրան զգացնել էր տվել իր սխալը, նա զիտեր, որ բայց է բողել երջանիկ ապրելու իր հնարավորությունը, իսկ դրանում մեղավոր էր ինքը: Չեմ կարողանում բացատրել, թե ինչու, երբ Գևորգը զնաց Էլենի մոտ, վերջինս զանգեց նրա կնոջը, և շուտով նա եկավ իր ամուսնու հետևից: Էլենը երջանիկ կլիներ Գևորգի հետ, երևի ուրիշի դժբախտության վրա չցանկացավ կառուցել իր երջանկությունը: Երկուսն էլ դարձան պատահականության զոհ, ամուսնացան առանց սիրո, մի բան, որ մեր շրջապատում էլ հաճախաղեավ է:

Ես իիմա զիտեմ, թե ինչ է կարուղ սիրած էակի նկատմամբ: Միայն կորցնելուց հետո հասկանում ես, թե որքան բանկ է նա: Կարուսն է ստիպում մարդում՝ հասկանալ, թե ինչքան ես սիրում դիմացինին: Նայում ես աստղագարդ երկնքին, հասկանում, թե ինչքան ես կարուսում նրա աչքերի փայլը, հայացքը հառում ես մեկին, իշխում ես նրան, ուրեմն, զնահատենք այն, ինչ ունենք և բաց չքողնենք մեր երջանկությունը»:

Վերջերս Աղյան գրողի ստեղծած կերպարներն իրենց մտորումներով միահյուսվում են իմ աշակերտների անձնական ապրումներին: Այդ գրական հերոսները սովորեցնում են նրանց կյանքի արվեստը, ճշմա-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

րիտ ու ազնիվ ապրելու ճանապարհը, և ես ուրախ եմ, որ իմ աշակերտուին էլ ափսոսանք ունի կորցրածի համար, նոյնիսկ խորհուրդ է տալիս, որ կյանքում սովորենք գնահատել ու պահպանել այն, ինչ թանկ է մեզ համար: Արժեքների, մարդկային հարաբերությունների, զգացմունքների ու ապրումների վերագնահատում ու արժնորում: Թերևս այսպես կարելի է վերծանել նրա ապրումների ենթատեքստը:

*Հայկական լրագրվական՝ Լու Ալիջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-10-25
<http://usarmenianews.com/am-n-6211.html>*

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԹՈՒԽ ՃԱՅԻ, ԿԱՊՈՒՏԱԿ ԾՈՎԻ
ՈՒ ԵՐԻՑԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԻ ՄԱՍԻՆ**

Արձակագիր Լևոն Աղյանի «Անձրևից հետո» ժողովածուի մեջ է պետեղված «Թուխ ճայը» պատմվածքը, որի առանցքում մի նոր սիրո պատմություն է: Դարերի ընթացքում հայ կնոջ հայեցի կոչման և ընտանիքի ավանդապահության խնդիրը միշտ էլ ընդունված օրենք է համարվել հասարակության մեջ, որ այն պետք է լուծվի ավանդական ընտանիքի հիմքերի անխախտության սկզբունքով: Բայց երբեմն քնությունն այլ ընթացք է տալիս կնոջ և տղամարդու հարաբերություններին և ձևավորվում է կինը՝ իր արտաքին գեղեցկությամբ, որ կարող է հայել մեկ այլ տղամարդու: Սիրո զգացողության մի նոր արքնացում է նկատվում, և բվում է՝ շուտով պետք է խաթարվի այդ ընտանիքի խաղաղ կյանքը, բայց գրողը դեմ է այդ ընտանիքի փլուզմանը, այնուել կա սիրող ամուսին և երկու զավակ, որոնց երջանկությունը պայմանավորված է նրանց համատեղ խաղաղ կյանքով:

Հոգեկան ճգնաժամ են ապրում երկուսն էլ, որ զաղտնի հանդիպում են երբեմն: Տղան ամուսնացած չէ, համակվել է այդ կնոջ սիրով, բայց նա և ամիսանքիստ է. «Տղան անտրամադիր էր: Նա եկել էր վերջին հանդիպման: Քանից վճռել էին բաժանվել, բայց ամեն անգամ կրկին հանդիպում էին: Այդպես շարունակել անհնար էր այլևս, անհրաժեշտ էր բաժանվել»:

Հակառակ նրանց հոգում տեղի ունեցող տատանումներին՝ քնությունն ավելի հանգիստ է արձագանքում նրանց հոգու տեղատվությանը. «**Ծովը խաղաղ էր: Ալիքները մանր խշշողով լիզում էին ափի ավազն ու ետ էին սահում:** Տղային դուր էին զալիս ճայերը, երբ նրանք թևածում էին ջրերի վրա, ուղղահայաց իջնում ալիքներին ու կրկին թևում վեր: **Ինչ-որ տեղ կարդացել էր, որ ճայերից մեկի կորստի դեպում՝ մյուսը վերից ուղղահայաց սուրում, իրեն խփում է ժայռերին, զրիվում:**»

Վերջին տողերը կարծես ինչ-որ բան են հուշում, որ նրանք առանց մեկը մյուսի չեն կարող ապրել, բայց ի՞նչն է պատճառը, գուցե ընտանիքում կնոջ և ամուսնու միջև հոգևոր ու մարմնական ներդաշնակությունն է խախտվել, որ այդ կինը հայտնվել է ուրիշի գրկում: Անհատն ինքը բնական արարած է, կարող է նրա էությունը երկիրեղի գրկի, որտեղ նա առերևսպում է հասարակական կապի բարոյական օրենքներին և բնական էակի կենսաբանական զգացողություններին, բայց վերջինս

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

նրան տանում է մեկ այլ տղանարդու մոտ, ում սկսում է անկեղծորեն սիրել: «Տղան շսեց խճաքարերի ձայնը: ...Կինը ետևի կողմից մոտեցավ, կանգնեց քիչ հեռվում: Տղային էր նայում: Ի՞նչ է մտածում այդպես, ո՞ւմ մասին է մտածում, ոչ առանց խանդի, անցավ կնոջ մտքով: Հեռանալ, հեռանալ, մոռանալ նրան, մտածում էր նա սրտի նվազումով ու վշտամորմոք, բայց ինչ ինչտ է ասել՝ մոռացի՛ր, մոռացի՛ր ամեն ինչ՝ աչքերի փայլը, հայացքը նրա, ձայնն ու ժախտը, շունչը նրա ջերմ, քնիշնը նրա...»: Այդ հակասական իրավիճակում դիմակայում է սերը, այն տառապանքների միջով կարող էր նրանց տաներ երջանկության, բայց այստեղ իրար են հակադրվում անկեղծ զգացումն ու հասարակության մեջ արմատավորված բարոյականության խորհուրդը: Ինչպիսին էլ լինի այդ սերը, նրանց տանում է բնական մերձեցման, որը կարող է կնոջ համար դառնան ճակատագրական: Մինչ այդ կինն ամուսնու հետ իրեն երջանիկ է համարել, բայց ահա կանգնում է ընտանիքի քայրայման դրամայի առջև: «Տղան շփորվեց, երբ տեսավ նրան՝ միշտ նույն ամորիսած դուրեկան ժախտով ու սևան հրացայտ աչքերով: Նա լայն ժպտաց՝ կնոջ դյուրաքեն փխրուն մարմինն առնելով գրկի մեջ: ...Կինը զլուխը բարձրացրեց տղայի կրծքից: -Ինչո՞ւ այսպես ստացվեց,-ասես ինքն իրեն, երազկոտ ասաց նա: - Ես ինձ համար հանգիստ ապրում էի, ինչո՞ւ ամեն ինչ փոխվեց... «Վերջ, - մտքում ասաց նա:-Սա վերջին անգամն է, ել չենք հանդիպի»:

Ընդամենը անակնելա մի հանդիպում տղայի հետ, որը դառնում է ճակատագրական, սիրո այդ նոր զգացումների արթնացումը պղտորում է ամուսնացած կնոյ՝ Լուսինեի հոգեկան աշխարհի ներդաշնակությունը: «...Հանդիպեցին հաղորդավար ընկերոջ տանը: Ընկերոջ ծննդյան օրն էր: Կինն ամուսնու հետ էր: Ու տղան երբեմն անկարող էր լինում չնայել նրան: Ինչ-որ անհայտ ու գայթակղիշ բան կար կնոջ մեջ, որ շարունակ իրեն էր ձգում տղայի հայացքը: ...Հետագայում նա հաճախակի էր մտածում անծանոթ կնոջ մասին: Ժափոն էր հիշում հատկապես: Ամորիսած այդ ժախտի մեջ աննկարագրելի հմայք կար, որը զերում էր տղային»:

Տղան ազատ էր և անկախ, այնինչ կինը ընտանիք ուներ, նա կանացիորեն հմայիչ էր, որն էլ գերել էր տղային, բայց զգացմունքների աշխարհը փորորկվում է, նա կանգնում է ամուսնական պարտականության և սիրո երանության ու վայելքի միջև: Հոգեկան դրաման ծանր կացության մեջ է դնում նրան, աստիճանաբար այն սրվում է, նրա միտքը երկու հակադրի բնեղներում է, մի կողմում նոր սերն է, մյուս կողմում՝

Նալուշա Պողոսյան

ամուսինը, ում տարիներ շարունակ թվում է՝ սիրում էր: «Հետո հանդիպեցին փողոցում, պատահաբար: ...Նրանք մնացել էին կանգնած փողոցի մեջտեղը: Ասելիք շատ կար, թվում էր, բայց կանգնել էին առանց խոսքի ու կարծես ոչինչ չեն գտնում ասելու, բայց և չեն բաժանվում: ... Այն երեկոյից հետո կինը, իրավամբ, տղային չէր մոռացել: Շարունակ մտածում էր նրա մասին, և իիմա, պարզվում է՝ տղան նույնակես իշել է իրեն, բանաստեղծություններ ձնել...»:

Հետագայում հաճախակի հանդիպումները պիտի նորոգեին նրանց զգացումները, այստեղ պիտի իրար հակադրվեին սերն ու խիդը: Իհարկե, սկզբում կնոջ համար հաճելի էր, որ բանաստեղծությունների շարքը տղան նվիրել էր անձանոք գեղեցկուհուն և հույսով սպասել, որ մի օր կիանդիպեն, ու երիտասարդ բանաստեղծը կնոցը կնվիրի իր ձներգը: Բայց ինչո՞ւ կինը չկարողացավ ասել, որ «սիրում է ամուսնուն, որ երեխաներ ունի՝ մի տղա ու մի աղջիկ, և որ ինքը ոչ մի տեղ չի գնա օտար տղամարդու հետ...»:

Որքան էլ նա փորձեր ընդդիմադիր լինել իր զգացումներին, կինը կամաց-կամաց ներքաշվում է սիրո վայելքի մեջ, նա զգում է, որ ինքն էլ ուզում է անձնատուր լինել սրտի ձայնին, բայց որքան քաղցր է սերը, այնքան դաժան է խիդը, որ սկսում է տանջել նրան: «Մացաների ու քարերի արանքով իշնող արահետով նրանք քայեցին դեպի ծով: Լոռություն էր, և միայն ճերմակափրփուր ալիքներն էին, որ թեթև աղմուկով գալիս, խփում էին առափնյա սալ քարերին ու փշուր-փշուր ետ սահում: Նստեցին ամայի ծովափին: Կինը, ինչպես նախորդ հանդիպմանը տղայի ընկերող բնակարանում, մտովի նախատում էր ինքն իրեն, որ այստեղ եկավ, որ այսպես անկամ ու թույլ գտնվեց, եկավ: Նա հայցը հառել էր հեռու և մտամփոփ նայում էր մի կետի: Այնտեղ, ուր ծովն ու երկինքը միանում էին իրար»:

Կնոջ հոգեկան վիճակը ավելի ծանր է տվյալ իրադրության մեջ, նա մեղավո՞ր է, որ լսում է սրտի ձայնին, ապրում է երջանկության պատրանքով, իսկ գուցե դա կնոջ զգացմունքների բռնկո՞ւմ է, որ կարող է սիրահարվածությունից այն կողմ չանցնի, որի կողքին սկսում է գլուխ բարձրացնել անհատի բարյական նկարագիրը հասարակության մեջ, որտեղ կա պատվի ու արժանապատվության խնդիր: Հոգու երկիրեղկ-վածությունը նրան տառապանք է պատճառում, կովել զգացմունքի՝ դեմ՝ հավատարիմ մնալով ավելի մնայուն արժեքների, որտեղ իր ընտանիքն է, թե՝ ապրել խղճի խայրով, սիրո վայելքի մեջ: «Ես սիրում եմ քեզ, շշնջաց տղան՝ համբուրելով կնոջ կիսաբաց մեղուշ շուրթերը:

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

Տղայի շուրբերը պինդ էին, ձեռքերն ուժեղ էին, և գիրկը տաք էր, և կնոջ համար աստղերը երկնքում շաղ էին գալիս, թափվում ծովը... Եվ նա՝ հուզախոռվ ու արցունքացոլ աչքերով, նախատում էր ինքն իրեն, որ արժանապատվություն չունի, այնտեղ՝ ընկերող բնակարանում տրվեց նրան ու տրվում է այստեղ՝ ավագների ու այս լերկ քարերի վրա»:

Բայց ինչպես է ընկալում իրավիճակը երիտասարդը, որ ընտանիք չունի, գուցե նա՝ պետք է հարթի իրավիճակը... Հենց այստեղ է կայանում գրող Աղյանի վարպետությունը, որ իրավիճակից դուրս գալու նախաձեռնությունը բողնում է տղային, որպեսզի նա հոգեբանական ծանր կացությունից դուրս գալու ճանապարհը ցույց տա. «-Քո հետո ես կամուսնանամ, և դու կմոռանաս ինձ, -հայացքը ջրերին՝ անքոնազբոսիկ ասաց տղան...

-Պիտի ամուսնանամ,- կրկնեց նա, բայց ինձ թվում է, որ իմ և նրա միջև պիտի լինեն դու... Երբ դու իմ կողքին ես, շուրջն իմ այլևս ոչինչ չեմ նկատում, այլ պարզապես զմայվում, գերվում, հպարտանում եմ քեզանով ու քո սիրով: Աշխարհիս երեսին յոթ հրաշալիք կա, բայց կա մեկը ևս՝ ութերորդը, դու ես այդ ութերորդ հրաշալիքը՝ ամենից էկզոտիկն ու ամենից գեղեցիկը... Ես նրա մեջ պիտի որոնեմ քեզ ու չպիտի գտնեմ... Ես դա գիտեմ»:

Չաղաքակիրք աշխարհն այսօր կնոյ ազատության մասին է աղաղակում, բայց արդյո՞ք միշտ է կինը կարողանում կատարյալ ազատություն տալ իր սրտի ցանկություններին, մի ապօրինի «հանցագործ» սեր և ընտանեկան ու ամուսնական պարտականություններ իրար են հակադրվում, մի թեմա, որ այսօր էլ արդիական է: Տղայի հարցը, թե արդյո՞ք կինը սիրում էր իր ամուսնուն, կասկածի տակ է դրվում. «Զգիտեմ, -հանգիստ ասաց կինը:-Մինչև քեզ թվում էր՝ այս: Իսկ իհմա զգիտեմ: Ինքն ինձ սիրում է: Գա նրան կուրացնում է և մտքով անգամ չի անցնում, որ ես կարող եմ դավաճանել իրեն, սիրել ուրիշի»:

Պարտքի գգացողությո՞ւն, թե՞ անդու երջանկություն... Բայց այստեղ էլ երկընտրանք կա. «**Քաժանվի՞ր, -հենց այնպես ասաց տղան**»:

«Հենց այնպես», ամեն ինչ ասված է, ուրեմն «անդու երջանկությունն» էլ կասկածի տակ է, մնում է հակադարձել սրտի լուս արձագանքին և հոգեբանական ծանր կացությունից դուրս գալ: Բայց ո՞վ է այդ սիրող ամուսինը. «Նավքային ինժեներ է, ծովում է աշխատում: Երբեմն երկու շաբթով չի գալիս: Ու այդ ընթացքում տասը-տասնիհնգ նամակ է գրում: Դու դա պատկերացնո՞ւմ ես: Ընկերուիիներս երևի նախանձում են՝ չհասկանալով, որ ուրիշի կյանքը միշտ էլ գրավիչ է թվում ուրիշին,

Նապաշա Պողոսյան

բայց ոչ ոք չփափի, թե իրականում ինչ է տեղի ունենում այնտեղ: Իմ ծանրթերից մեկը ճիշտ է ասում, որ ուրիշի կյանքը ուրիշի պատուհանի է նման, որովհետև, եթե նույնիսկ այնտեղ՝ պատուհանագոգին, ծաղկներ են, դա դեռ չի նշանակում, թե ներսում դրախտ է...»:

Լինել երջանիկ, սա յուրաքանչյուր բանական էակի գերազույն ցանկությունն է, բայց ինչպե՞ս...Արդյո՞ք հասարակության մեջ ապրելով՝ կարողանում ես անտեսել այդ նույն միջավայրի կարծիքը, անսովոր մի մղում ստիպում է վայելել սերը, բայց կանացի բնագրով ետ ես վանում այն, որովհետև ազատ վարքի դրսնորումները հակադրվում են բարոյական օրենքներին: Սերը դա բոլորովին այլ զգացում է, սա ցանկասիրություն չէ, երբեմն այստեղ էլ սիրո առողջ բանականությունը զոհողություններ է պահանջում, որին մեր օրերում հակադրվում է կնոջ մի այլ ազատություն, որը նրան տանում է դեպի վարքի ապականում: Բայց ինչպե՞ս հաղթահարել կնոջ հոգու ներքին ճգնաժամը, որտեղ սեր կա, բայց պետք է պահպանել անհատի բարոյական նկարագիրը միջավայրում: Մոռացության փոշոց հանում ես կարծես մի նոր հայտնություն, որ նույն այդ սերը կար և հանկարծ կարող է չլինել. «Քիչ առաջ տղան ավազի վրա գրել էր. «Ես սիրում եմ քեզ, Լուսինե՛»: Մազերը կարգի բերելիս կինը տեսավ, որ ալիքը եկել, տարել է տղայի գրածը: -Ամեն ինչ այսպես է,- տիսուր ասաց կինը,-կար ու չկա: Հետո նայեց դեպի ծովը: Ծովը խաղաղ էր, հանդարտ:Վյատեղ ամեն ինչ հարազատ էր նրան, և հիմա ինքը բաժանվում էր այդ բոլորից: Կինը նայում էր տիսրամած, ասես այստեղ նրա ողջ կյանքն էր անցել, և հիմա ընդմիշտ բաժանվում էր դրանից»:

Իհարկե, յուրաքանչյուր ոք հոգու այս տագնապալից խոռվը վերապրում է յուրովի, բայց ճայերի սիրահար երիտասարդ բանաստեղծի հիշողության մեջ կմնա մի բուխ ճայ, ու այս անգամ էլ նրա մասին կզրի բանաստեղծություն: «Տղան ուշադիր նայեց կնոջը, մթության մեջ կնոջ մազերը սև էին, այսերը բուխ էին, ամբողջ դեմքը բուխ էր: -Պու նման ես գեղեցիկ ճայի,-ժպտաց նա: Պու իմ բուխ ճայն ես»:

Կարծես երկնային պարզի էր այդ սերը, եկավ ու գնաց: Եվ ահա կործանվում է երջանկության պատրանքը. «Տղան մատները քսեց կնոջ շուրթերին: -Մնաս բարով: Ես քեզ երբեք չեմ մոռանա: Երբեք-երբեք: -Ես նույնապես: Ես նույնապես չեմ մոռանա: Ես չեմ կարող մոռանալ, եթե նույնիսկ ուզենամ: Եթե նույնիսկ շատ ուզենամ: Ասովա՛ծ իմ, ամեն ոք կարող է տեսնե՛ ինչ տեսք ունես, բայց ամեն ոք չէ, որ կարող է իմանալ, թե ինչ է կատարվում քո հոգու խորքում: Հավատա՛, լինում են բո-

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

պեներ, որ ապրել չես ուզում, այլ ուզում ես թախծել, միայն թախծել ու լալ: Ինչո՞ւ ես սիրեցի քեզ, ասա՛, ինչո՞ւ եմ սիրում,-կնոջ ձայնը դողաց, աչքերը լցվեցին արցունքով: -Ասա ինձ, ո՞ւմ համար է անտանելի ծանր՝ նրա՞ն, ով հեռանում է, քեզ նրա՞ն, ումից հեռանում են: - Նրա, ով խենթորեն սիրում է: - Ես հեռանում եմ: Ինձ համար անշափ ծանր է, որովհետև խենթորեն սիրում եմ քեզ...Ապրի՞ր և իիշի՞ր: -Նա սեղմվեց տղային: Կինը չէր ուզում նրանից արկվել: -Ուրեմն վե՞րջ, ել չե՞նք հանդիպելու... -Նա այլևս չէր կարողանում պահել արցունքները: -Գիտե՞ս, ամենից սարսափելին ոչ քեզ անփոխադարձ սերն է, այլ երբ այն փոխադարձ է, բայց դուք միասին չեք»:

Ինքնահարկադրական բաժանում, որին չէր կարողանում հարմարվել կինը: Եվ ի՞նչ, հաղթո՞ւմ է սիրո օրենքը, երբ այս անգամ կինն է առաջարկում մի նոր հանդիպում: «Վատորուազ գնաց: Թուխ ճայը չկար: Սպիտակ ճայերը չկային: Տղան մենակ էր: Ներքեում՝ բլրի տակ, երևում էր ծովը: Ծովը համատարած սև ցեղ էր, և լուսինը բարակ կածան էր կապել սև ցեղերի վրայով...Ընկնես այդ կածանն ու գնաս, գնաս, գնաս...»:

Այսքանով հանդերձ՝ ասենք, որ Արյան գրողը մնում է հավատարիմ իր աշխարհայցքին, չնայած կինն այստեղ իր անկեղծ սիրով տղամարդու համար իրական երջանկության դրուն է բացում, բայց նա կողմնակից չէ ընտանիքի փլուզմանը: Եվ մի նոր հանդիպման ակնկալիքով կինը նորից կտեսնի երիտասարդ տղային, գուցե նաև կիշի Նար-Դոսի հերոսի վաղուց ասված հայտնի տողերը, որ կնոց հանդիպման արդարացումը կլինի. «Կինը մինչև այն ժամանակ է մի տղամարդու ամուսինը, երբ սիրում է նրան, բայց երբ դադարեց նրան սիրելուց և սիրեց մի ուրիշ տղամարդու, այլևս առաջինի ամուսինը չէ... Այսպես է պահանջում բնական, այսինքն՝ սիրո օրենքը...»:

Եվ այդ սիրո օրենքին կողմնակից Արյան գրողը կհաստատի մի նոր ճշմարտություն, որտեղ իսկական սեր կա, չկա այնտեղ դավաճանություն:

*Հայկական լրաբարձության՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-05-31
<http://www.usarmenianews.com/am-n-3711.html>*

**ԱԾՎԿԵՐՏՈՒՀՈՒՄ ԵՐԿՓԵՂԿՎԱԾ
ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ**



12-րդ դասարանում հայ գրականության դաս էր: Աշակերտության մեջը բարձրացած է: «Ինչո՞ւ չեմ հավատում, որ նրանց միջև իսկական սեր կար, չեմ ել կարողանում արդարացնել նրանցից ոչ մեկին»:

Խոսքը սփյուռքահայ գրող Շահան Շահնորիի «Նահանջը առանց երգի» վեպի գլխավոր հերոսների առեղծվածային սիրո նասին էր:

Զարմացած նայում եմ նրան, իսկ նա շարունակում է. «Վյո օրերին Լևոն Այյանի «Թուխ ճայը»» պատմվածքն եմ ընթերցել, ես չկարողացա մեղադրել նրա հերոսուհուն՝ Լուսինեին, ով, լինելով երկու երեխաների մայր, սիրահարվել էր մեկ ուրիշ տղամարդու, այն դեպքում, երբ նա իրեն սիրող ամուսին ուներ: Մեր օրերում էլ շատ կան այդպիսի դեպքեր, որ չենք արդարացնում: Ես կնոջ դավաճանությունը, ընդհանրապես, աներելի եմ համարում, բայց, զգիտեմ ինչու, այս պատմվածքում չկարողացա մեղադրել հերոսուհուն»:

Հույս ունեի, որ հաջորդ օրն իմ աշակերտուիկմ՝ Դիանա Սահյանը, դասին կներկայանար հոգին կեղեքող այդ երկընտրանքից ազատված, բայց իմ հարցումին, թե ազատվե՞լ է այդ տարակարծությունից, նա մեղմ ժպտաց և գլուխ անհավանական օրորենց: «Կինը ամուսին ունի, բայց սիրում է ուրիշի: Նրանք հանդիպում են ծովագին, որտեղ ճայերն են թևածում, այդ սևահեր կինն էլ մի քուի ճայ էր, որ թևածում էր սիրու և ամուսնական պարտականության միջև: Ես ինձ պատկերացնում եմ նման իրավիճակում: Գիտեմ, որ բոլորի կողմից կմեղադրվեի, այդ պահին ցանկալի կլիներ գոնեն մեկը հասկանար ու արդարացներ ինձ: Բայց համոզված եմ, որ այդ մեկը չէր լինի մեր միջավայրում ու ավելի մեծ ցավ կապրեի»:

Եվ իմ հարցին, թե ի՞նչ կար այդ պատմվածքում, որ ուսանելի էր իր հետազա անձնական կյանքի համար, նա մտքերի մեջ ընկավ, բայց նաև հետո ինձ հանձնեց թղթին հանձնած իր տողերը. «Վյո պատմվածքի հերոսներն ինձ սովորեցրին, որ բոլորիս կողմից դատապարտվող և

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

«դավաճանություն» համարվող բացասական երևույթի կողքին կարող է լինել նաև ազնիվ ու մաքուր սեր, որն անտեսվում է շատերի կողմից, բայց այն զոհաբերվում է հանուն ընտանիքի: Իսկ որքա՞ն գեղեցիկ էր այդ սերը՝ անկրկնելի, ջերմ ու հածելի, զգացմունքային, բայց նաև սխալ ու ժամանակավոր...Ափսոսում եմ, որ կյանքում սխալ սեր է լինում...»:

Իսկ ես իմ աշակերտուիոն երկփեղկված մտորումներին ուզում եմ ավելացնել մի նոր ափսոսան: Մի՞թե այդ դասաժամին սխալ եմ գործել, որ իմ դասանութին զուգահեռ, ընթացք տալով մեկ ուրիշ զրական ստեղծագործության կերպարների՝ թույլ եմ տվել, որ այս դեռահասները մի նոր կյանքի դաս ստվորեն: Եվ որքա՞ն իրաշալի կլիներ, որ դպրոցական ծանրաբեռնված ծրագրերով երբեմն կարողանայինք մեր աշակերտներին կյանքի նախապատրաստեինք, մի բան, որ շատ ուսանելի է ու նաև՝ հետաքրքիր:

*Հայկական լրապրական՝ Լու Անջելիսից,
«Մանկավարժի անկյուն», 2016-09-29
<http://usarmenianews.com/am-n-5791.html>*

**ԲՆՈՒԹՅՈՒՆԸ
ԼԵՎՈՆ ԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ**



Բնությունն առանձնահատուկ դեր ունի Լևոն Աղյանի ստեղծագործություններում, այն ամենուր է՝ թե նրա վիպական ժանրի ստեղծագործություններում, թե՛ պատմվածքներում և թե՛ մանրաքանդակներում։ Եվ այն գրչի մի հարվածով հնարավոր չէ նկարագրել, բայց խոսել գրողի վիպական արվեստի մասին, նշանակում է նաև առանձնահատուկ ուշադրության արժանացնել նրա բնության գեղագիտությանը։ Այն գեղարվեստական մեծ հաճույք է պատճառում ընթերցողին գեղանկարչորեն տեսանելի նկարագրություններով, երբեմն էլ դառնում է այն միջավայրը, որտեղ կատարվում են գործողությունները, իսկ առանցքում Հայրենական մեծ պատերազմին հաջորդող տարիների հայկական գյուղն է։

Գրողի նկարագրած բնությունը նարդկանց կյանքի մասնակիցն է դառնում, ձուլվում նրանց ապրումներին, որովհետև գյուղական կյանքով ապրող մարդիկ իրենց կենցաղով ու կյանքով բաժանված չեն այդ բնությունից։ Հատկանշական է, որ նրա հերոսները, ապրելով բնության գրկում, իրենց հոգեվիճակով կիսվում են նրա հետ, որն էլ ձայնակցում է նրանց վշտին կամ ուրախությանը՝ դրանով իսկ արտահայտելով այն մեծ խորհուրդը, որ բնությունը կենդանի է այսեղ ապրող նարդկանցով։ «Չորակների հետ իշխելով, վայրի ծաղիկներով ծածկված բրակների հետ բարձրանալով գնում էինք, չորս կողմ ափեափ ծփում էին արտերը, դադար տալով՝ արտորում էր արտույտը, օդում բրբռալով կախվում, անշարժանում էր տատրակը, տաքություն բուրող դեղնած արտերի վրայով, ուր ալիքած բափառում էր արծարյա քամին, շրջան կազմած՝ բռչում էին ծտերի երամները» /«Հեռացող եղերք»/։

Ասում են՝ ընթերցողը գրողին հավատում է այն դեպքում, եթե նրա ստեղծագործությունների մեջ իր կյանքն է, իր ապրած միջավայրը։ Այդ

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

առումով Այսան գրողին հաջողվել է իր ապրած բնաշխարհի խոսուն ու պարզ, շատ նրբին, աչքի համար տեսանելի, զգացմունքային պատկերներ ստեղծել: Հենց ինքն էլ այդ բնության հետ է, զգում է արքեցուցիչ ծաղիկների բուրմունքը, լսում բնության ծոցում ապրող արարածների ձայները, շարժուն պատկերներին միաձոյլ՝ նա ստեղծում է մի նոր հրաշալի երգ, որ բնությունն է հյուսում. «Արևը հասալ մեզ, և մենք իիմա ընթանում կինք վաղորդյան արևի միջով: Հովի հետ դանդաղ ալիք էր տախի ծաղիկների բուրմունքը, իսկ շուրջ բոլոր՝ ծայրեծայր ծղրիդների թափածալի զրնօց էր, երկարառուր ու կլոր աչքերով մորեխները աղեղնաձև կարճ ցատկումներով այս ու այն կողմ էին բռչում, արևի տակ տաքացող դեղնականաչ խլեզներն արագ թաքնվում էին ճամփեղրի ծաղկառատ փարթամ խոտերում: Բայց դա երկար չտևեց, ճանապարհը մտավ անտառ, և արևը իիմա ծառերի արանքներից էր մեկ-մեկ ծիկրակում» /«Հեռացող եզերը»/:

Գրողի արձակում դաշտերի ու լեռների, ծաղիկների ու հավքերի գունեղ ու բազմերանգ պատկերներում նկարագրվում է հայրենի բնաշխարհի գեղեցկությունը, հենց դրանով էլ արտահայտում է նաև իր վերաբերմունքը հարազատ ծննդավայրի հանդեա: Իսկ Արցախը գրողի համար երևակայությամբ ստեղծված մի երկիր չէ, այն հոգով զգում է իր մեջ, նրա ծառն ու քուֆը, լեռն ու քարը մի յուրահատուկ խորհուրդ են արտահայտում: Բնության նկարագրություններում մի առանձնահատուկ քննչություն կա ու սեր, անցած օրերի հիշողություն, և դրանք ինքնանպատակ չեն, գրողի հոգեվիճակն էլ երբեմն համահունչ է լինում իր ստեղծած բնապատկերին. «Քիչ ներքև, ինչպես իմ մանկութ օրերին, չի երգում այևս ինձ ծանոթ առուն... Իմ հեռու-հեռավոր հիշողության մեջ զնզում է այդ առուն, մեղմիկ խոխոցում՝ ողջունելով ինձ, թիթեռնիկներին, հավքերին պես-պես և ծաղիկներին՝ այուրից օրորվող... Դու իմ մանկության սիրելի՛ առու, որ զբնզալով, խնդուն խայտալով, վազում էիր ցած՝ քեզ եեն տանելով երազներն իմ ջինջ, ո՞ւր ես դու հիմի, որտե՞ղ է մարել ձայնդ երգեցիկ: Հեռու-հեռավոր հուշերի խորքից ետ եկ, իմ առու, անանմոռանալի սիրելի՛ ընկեր, ետ բեր օրերն իմ անհոգ ու ազատ ուրախ մանկության, ետ բեր օրերն իմ, իմ ընկերներին, բող կյանքը լցվի նրանց ձայներով՝ անհոգ, երջանիկ...»/«Իրիկնային աղջամուղ»/:

Այսան գեղագետը ամեն մի ստեղծագործության մեջ դրվագ առ դրվագ հղկում, կատարելագործում է բնությունը, ստեղծում է մի ամուր կառույց, որտեղ լեզու առած խոսում է բնաշխարհը, և այդ խոսուն բնու-

Նայուշա Պողոսյան

թյան մեջ, ունկնդիր բոչունների դայլայլին, նա նրբորեն հյուսում է իր հրաշալի բնուրյան գեղագիտությունը. «Անտառն օրվա բոլոր ժամերին բուրում էր անուշակ բույրերով, լույսը դեռ չբացված՝ բոչուններն այնտեղ սկսում էին վաղորդյան ջինջ արևով օծված իրենց համերզը: Իսկ գիշերները, երբ շուրջն ամեն ինչ սահում, ընկղմվում էր փափուկ ու ամեզր մքուրյան մեջ, Բախչուսի ձորի կողմերում սկսում էր հճչել գիշերահավի կարոտակեզ կանչը» /«Հարատևող վերադարձ»/:

Ինչքա՞ն գեղեցիկ է պատկերը, արձակ շարված տողերն էլ երբեմն բանաստեղծական են հնչում, մի ամբողջ բնություն շարժման մեջ ե... Բայց մա՞րդն է բնուրյան շարժի ուժը, թե՞ բնուրյունը, երբ այդ նույն հրաշագեղ բնուրյան մեջ անցյալում մնացած մի հեռավոր մանկություն կա՝ խոտին պառկած փոքրիկ տղայի տեսքով, և հոր ոտնաձայն, որի արձագանքը լսելի է դեռ այն ոլոր-մոլոր ճամփաներից: «Լիալուսնի կաթնալույսում սարից իշնող մտամոլոր ու քարքարոտ մի նեղ ճամփա, մի սայլ՝ բեռնված զմրուտ խոտով՝ երնջակի, յուղածաղկի, ուրցի հոտով, ծաղկաբուրմունք խոտին պառկած փոքրիկ տղա, որի հոգին պարուրվել է երազական քաղցր բմրով: Ոլոր-մոլոր մի նեղ ճամփա, հոր ոտնաձայն՝ թիշ առջևում, շուրջը անդորր ու մարման հով, այս ու այնտեղ ցրուն հաներ ու անտառներ՝ հնադարյան, լիալուսին՝ սարի ուսին, չարազուշակ բվի կոյինչ, առվի շշունջ, անձայրածիր, լուսաշող-շող երկինքն ի վար կարող աստղեր, ծղրիդի երգ՝ աստղահնչյուն գիշերվա մեջ, ու երազներ, նիրվանային երանելի ջինջ երազներ՝ իր ջինջ հոգում» /«Իրիկնային աղջամուղջ»/:

Բնապատկերները նաև երբեմն ծառայում են փիլիսոփայական խոհերի և ընդհանրացումների համար, կամ գրողը բնությունը նկարագրում է իր հերոսների, թեկուզ և իր տրամադրությունն արտահայտելու նպատակով: Լավատես գրողը խավարի մեջ էլ լույս է փնտրում, սովորեցնում մարդուն հույսով ապրել՝ զալիք լուսավոր օրերի ակնկալիքով:

«Արևը հանչում է սարերի վրա, և երարսոր հորիզոնն այնտեղ վառվում է ասես բազում գույներով՝ երկինք ու երկիր կապելով իրար... Եվ հետզհետև ձորերը լին խորասուզվում են իրիկնային լուրք աղջամուղջի մեջ. գետակը լոռում, հավքերը լոռում, մոտիկ արտերում արտույտներն արդեն էլ չեն արտորում... Զայները կամաց մարում են դրասում, և հետզհետև իշնում է մութը՝ իր սև շղարշով ներընդգրկելով ամեն մի շշուկ, ամեն մի շարժում, լոկ ծղրիդներն են երգում անձանձիր... Սարերի վրա, բարձր երկնքի անծիր կապույտում, աստղերի բույլը՝ երկնքից հեռու, և միլիոն պարսեկ իրարից հեռու, իր անհատնում

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

լույսերն է հղում հեռու երկրին... Աստղացող լույսը՝ խավարում նիրհող դաշտին, գետակին, հավքին ու մարդուն, և հեռվից հեռու համբ թարթումով կարծես ասելով յուրաքանչյուրին. «Դու մի՛ վհատվիր, խավարից հետո գալիս է լույսը, իսկ հույսը մեռնում է ամենավերջում, շուտով, շատ շուտով կրացվի նոր օր՝ արևը, լույսը և հույսը իր հետ»»/ «Իրիկ-նային աղջամուղ»/:

Ապրելով հայրենիքից հեռու՝ արձակագիր գրողը բնության նկարագրությամբ արտահայտում է իր կարուղը ծննդավայրի ու հայրենի հիշատակների հանդեպ, և միշտ էլ նա հազար թելերով կապված է մնում իր հայրենի երկրի ու հարազատ ժողովրդի հետ: «Այս երգն ու երաժշտությունը հիշում էր դեռ իմ հոգում, երբ մտամոլոր շրջում էի մեր տնամերձ այգում (տուն չէի ուզում մտնել): Ես ցանկանում էի պառկել կանաչ մարգերի մեջ, սեղմվել գետնին, գրկել խնձորենիների սառը բները, որոնց մետաքսանման կեղեւը կենդանի մարմին էր հիշեցնում...» /«Այն հեռավոր ամռանը»/:

Օտար ափերում ապրող գրողի համար գեղեցիկ, հմայիչ վայրեր չկայի՞ն, որ ընտրեց հայկական աշխարհը, մի գողտրիկ Արցախ, նրա ծոցում ծվարած ծառերն ու ծաղիկները, հողն ու ջուրը, սարերն ու ձորերը... Սա հենց այն է, որ կոչվում է հայկական, որտեղ հայրենիքի հանդեպ սեր կա, անսահման կարոտ, այստեղ հենց այդ հայկականն է, որ դառնում է ներշնչանքի աղբյուր, և ճգում մարդուն դեպի այդ հրաշք բնությունը, որտեղ այլ ձևով ես զգում արևի ջերմությունը, օդի բույրը, ջրի համը, ծաղիկների գույները... «Խաչենագետը Թարթառի պես թարնված չէր մշուշների մեջ, արծաթե գոտու պես շողում, պապղում էր արևի տակ: Այնտեղ, ոլործուն գետից այն կողմ, Քոլատակ գյուղի զլիքին, Սուրբ Հակոբա վանքի ուղղությամբ, լեռների պրնկին թառած Կաչալակաբերդի ծխապատ ու խոնավ հեռուներում ամպրոպներից ցնցվում, դղրդում էին երկինք ու երկիր, մերթընդմերք, զիգզազաձև ճեղվածքներ տալով, երկինքը պատռվում էր կայծակներից՝ մի կարծ ակնքարք պղնձագույն ցոլերով լուսավորելով շրջակայքը» /«Հեռացող եղերք»/:

Բայց արդյո՞ք մարդը միշտ կարողանում է վայելել հրաշագործ բնության հմայքը: Ազգային ցավերը երբեմն դառնում են բնության գեղեցկության մեջ ապրող մարդու հոգու ճիշ: Կյանքը հանդարտ հոսում է, մարդը բնության թովիչ ձայնն է հոգու խորքում հանգերգում, որ մեկ դառնում է սիրո կանչ ու մեղեղի, մեկ՝ թախծախսառն մի երգ, որ հավիտյան կարող է լրել ուսմբի պայրյունների տակ: Բնությունը երբեմն մաս-

Նալուշա Պողոսյան

նակիցն է դառնում մարդու ծանր ապրումներին՝ ինքն էլ իր վրա կրելով պատերազմի սարսափելի հետքերը, երբ խարարվում է կյանքը: Գեղագետ գրողը ցավով է բնության գեղեցկությանը հակադրում մարդկային իրական կյանքը, որ լի է կսկիծով. «Թերև հողմիկից ծառերն օրորվում էին, տերևները թրթռում, խշում էին, ինչ-որ տեղ, ոչ այնքան հեռու, փայտփորիկը անձանձիր տկտկացնում էր չոր ծառաբրունը, մի պահ կանգ էր առնում, ասես ականջ էր դնում արձագանքին ու դարձյալ վերսկսում էր իր համաշափ տկտկոցը: Կյանքը հանդարտ հոսում էր հավիտենական թվացող այդ խշում անդորրի մեջ, Թևիկի մտքում, ավելի շուտ, ոչ թե մտքում, այլ սրտում, հոգու ամենախորքում, այս ամենը փոխարկվում էր բանաստեղծության, հանգավորվում էր, կկվի ձայնը բախժական երգ էր դառնում, փայտփորիկի տկտկոցը՝ մորգեգիր, դեղանիկի գեղ-գեղ երգը՝ սիրո կան ու մեղեղի, և նրան անհմաստ ու ցավակի էր թվում այն, որ շուտով, գուցե և մի քանի բոպեից հետո, այս ամենը կմարի, կիսանառումքի ահարկու պայրյունից ու ավտոմատների կրակոցներից, և Թևիկն իր ջոկատը կտանի մարտի ու, ամենայն հավանականությամբ, տղաներից մեկը, որ հիմա գլուխը ձեռափին հակած խաղաղ լսում էր Վաղարշակ Գաբրիելյանի պատմությունը՝ հայրենի Ղարաբաղի մասին, պատահական գնդակից կզոհվի այնտեղ, ինչպես Խզոր Բաղունցը զոհվեց, և ինքը խեղդվում էր իր ներսում հորդանք տվող դառը արցուներից» /«Դեղանիկը գեղ-գեղ երգեց գետից այս կողմ»/:

Սիշտ էլ կենդանի ու շարժուն են նրա բնապատկերները, որոնք բազում ծներով սփոփանք ու հիացմունք են բերում գրողի՝ բնությանը ներդաշնակ հոգուն, միայն թե խաղաղ լինի կյանքը: Այստեղ ջուրը քշշում է, հավքը՝ դայլայլում, մեղուն զվարում է, կկուն՝ կանչում, իսկ հեռվից եկող ձայների մեջ գառների մայուն կա, ինչ-որ ծիծաղ, զանգի դրդանց... «Լեռան դարչնաշեկ կրծքից երկու արծիվ պոկվեցին և, կեռ կտուցներն անդնդի վրա կախ, դանդաղասահ աղեղվեցին, կորան ուղղաբերձ ապառաժի ստվերներում, հետո կրկին հայտնվեցին արեգակի կարմրավուն շողերի մեջ, լայն շրջանով եկան, եկան ճոճվեցին կողքից կողը ու դարձյալ զուգընթաց գնացին՝ սահուն, ազատ ու անկաշխանդ պացրով, հետո այդպես երկար, դանդաղորեն պտտվում էին անդնդի վրա թեքված թեղիների, ժայռախորշերում բուսած կարճիկ բոխիների, քարածերպերին կառչած մասրենիների ու Ղըրմա աղբյուրի դեղնականաչ անտառի վրայով...» /«Հեռացող եղերը»/:

Գրողի համար անցած-զնացած օրերը դառնում են մի երազելի ժա-

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

մանակ, անցյալի հուշ և հիշողություն, որ իր հետ բերում է նաև քախիծ, անցած օրերի հանդեպ մի անմոռաց կարոտ: Ականջալուր հավերի ձայներին՝ նա ամեն օր լսում է դեղձանիկների ցայգալույսի երգը, տեսնում այդ փոքրիկ երգիչներին, որ ոստոսուում են, ճախրում ծառերից վեր. «**Դեղձանիկները շարունակում են ցայգալույսի իրենց երգը: Ես հիմա տեսնում եմ նրանց՝ ոսկեկանաչ փոքրիկ երգիչներին, քենիների վրա, երբեմն բաքնվելով դեղնագորշագույն տերևների մեջ, երբեմն հանելով իրենց հետաքրքրասեր կտուցները, ուրախ ոստոսում, ճախրում են ծառերն ի վեր և անընդհատ հնչեղ ու սահուն ծորում է նրանց երգը...» /«Իրիկնային աղջամուղ»/:**

Գրողը, ասես, հասկանում է բնության լեզուն, նա ունկնդրում է ձայները, և որքա՞ն հոգուն հարազատ են կրունկները, որ հարազատ եզերքների կարոտով չվում են այլ երկրները: Թոշունների ձայներին համահունչ՝ նա պատկերը դարձնում է բրոռուն, խոսքը՝ հյութեղ՝ միահյուսված հոգու թախծախառն արձագանքին. «**Կոռւնկների երամը ամուշ կանչով անցավ անտառների վրայով: Ես բարձրացրի հայացքս, սակայն ոչինչ տեսնել չկարողացա: Ծառերը ծածկել էին երկինքը: Ինչոր տեղ վայրի աղավնիները դուղունում էին, փայտփորիկը, կրծքով չոր կեղևին կպած, տկտկացնում հա տկտկացնում էր: Չէր երևում և կկուն, որ հաճարկենու կատարին բազմած անդադրում կանչում էր, և նրա կանչը՝ նման սրտի զարկերի, թախծական էր կուսական անտառի համատարած անդրորի մեջ» /«Իրիկնային աղջամուղ»/:**

Հարազատ գյուղը Աղյան գրողի համար սուկ ծննդավայր չէ, այն հայրենին հողի ու հայրենիքի բնդիմանրական պատկերն է՝ անասաս ու հավերժական, որ դիմակայում է ժամանակի մրրիկներին:

Անգամ այս վայրերին անձանոթ մարդու համար այս բնապատկերները բացում են մի նոր աշխարհ, և այն ձեռք է բերում ճանաչողական արժեք. «**Մեր գյուղը՝ Հնձախուրը, հեռո՛ւ-հեռու է: Ասես բաքնված ճանապարհներից՝ տապր է կացել խոր ձորերի մեջ, և միայն Սառնատուն լեռան կատարից է պարզորոշ երևում այն՝ շրջապատված երկնքոտ սարերով, զով անտառներով, այդ անտառների մեջ կորսված անթիվ, անհամար դաշտերով ու մարգագետիններով» /«Մանկության կապտազինց երկինքը»/:**

Գրողն իր գեղանկարչական ձիբքի շնորհիվ վերարծարծում է ազգային բնությունը, որտեղ լուսաբացի ու մայրամուտի երիզներով պատված օրվա պահեր կան, անձրևներ ու ամպրոպներ, հողի զովասուն բուրմունք, մի ամբողջ հայրենին բնօրբան՝ ողողված բնության գույնե-

Նալուշա Պողոսյան

րով. «Երեկոյան երկինքը միանգամից մռայլվեց՝ պատվելով սև ամպերով: Նա բաց արեց լուսամուտները: Անձրև էր սկսվել, և սառը հովը եղինջի, կանաչ խոտի, բաց ծաղիկների ու թրչված հողի զովասուն բուրմուճք էր բերում: Անձրևը զնալով վարարեց՝ աղմկելով ջրհորդաներում, կռատուկի լայն տերևների ու թիթեղի տաճիքների վրա: Մերք ընդ մերք ցնցվում, ալեկոնձվում էր երկինքը՝ մեկ հանկարծ բացվելով սպիտակավուն հրով, մեկ սեղմկելով անթափանց խավարի մեջ» /«Աշնանային ցրտեր»/:

Տարվա տարբեր եղանակների նկարագրություններ բազմարիվ երանգներ են ստանում, գեղագետ արձակագրի գունային արվեստը բարձրակետին է հասնում, երբ բացում է մի երփներանգ ներկապնակ: Այստեղ այդ եղանակներն ել բնավորություններ ունեն՝ մեկը մյուսից զարմանահրաշ ու գեղեցիկ, բայց բնության այդ երևույթներն էլ հայկական են ու լեռնային, արցախական ու հարազատ. «Երկարատև է մեզ մոտ ձմեռը, երկարատև է, բայց գեղեցկահրաշ, գեղեցկահրաշ է նաև զարնանը, երբ համդ ու ձոր, սար ու լեռ զուգվում, զարդարվում են բազմերանգ գույներով՝ դեղին, սպիտակ, կարմիր, մանուշակագույն...Հետո զալիս է լեռնային զյուղի ոսկե ամառը, իսկ հետո լեռներում կորած մեր աստվածանիստ բարձր աշխարհում սկսվում են աշնան դանդաղասահ օրերը. զյուղի շուրջը՝ անտառներում, սար ու ձորերում ու զյուղական տնամերձ այգիներում դեղին շոր հազար ժառերը մեղմիվ օրորվում են աշնան թերև քամուց, տերևները ծառերից պոկվում, պտույտ են զալիս օդում և դանդաղ իջնում գետնին» /«Մանկության կապտացինց երկինքը»/:

Այյանական բնապաշտությունն իր մեջ նաև Արցախի աշխարհագրություն է ներառում, այնտեղ լեռներ կան, սարեր, գետեր, աղբյուրներ, վայրեր հարազատ, որ ազգային կնիք ունեն, հայկական շունչ՝ այնտեղ ապրող մարդկանցով ու նրանց սովորություններով. «Նրա հետ քափառել էինք մենք ձորերում, ճիշտ է, միասին հանդերն էինք զնացել, ես նրան ցույց էի տվել մեր զյուղի գեղեցիկ վայրերը, Սառնատան բարձունքից նայել էինք ձյունագագաք Մռավա սարին, լուսնյակ երեկոներին էլ նատել էինք ձորամերձ խնձորենու այգու խորքում... Ոչ այնքան հեռու ինչ-որ տեղ երգի անցած՝ գեղգեղում էր դեղձանիկը, ծիածանը հալվում էր հեռու բացատների վրա, իսկ արևն արդեն մայր էր մտնում: Քախչուտի աղբյուրին փոքրիկ աղջկներ կային՝ գլխներին ծաղկապակներ, նրանք իրար վրա ջուր էին ցայտում» /«Այն հեռավոր ամռնը»/:

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

Գրողի արձակում՝ Արցախի բնության ազգային խառնվածքում, առանձնանում է իր հարազատ գյուղը: Դա այն միջավայրն է, որտեղ անցել է նրա մանկությունը, ձևավորվել պատանեկան երազանքները, բայց հայրենիքը նրա համար այդ փոքր տարածքը չէ, այլ մի ամբողջ կենդանի լեռնաշխարհ է՝ իր մշակութային արժեքներով, անցած պատմությամբ, որտեղ կապույտ է երկինքն ու խաղաղ. «Փոքր է մեր գյուղը, փոքր, մի երկու հանդաշափ տարածություն է նաև նրա զիսավերեւում, բարձրաբերձ լեռնագագաթներին հենված երկինքը, որ ներքեւից, գյուղից անասելի բարձր է երևում՝ ներկված մոշահավի ձևի գույնի՝ մուգ կապույտ»: /«Սանկության կապտացինց երկինքը»:/

Աղյան գեղագետը կարողանում է իր բնապաշտությամբ հաստատել մարդու և բնության հոգեկան կապը, որով էլ ամրագրում է բնության հավերժությունը: Նա իր հազվագյուտ դիտողականության շնորհիվ խմաստավորում է հայրենի բնաշխարհը, այն դարձնում մարդկային քախիծն ու ուրախությունն արտահայտող տարր, իր արվեստը գեղեցկացնում հայրենի երկրի հյութեղ նկարագրություններով, որտեղ անսահման սեր կա ու կարոտ, հեռուներից եկած կանչ. «Հեռու և, հեռու, իմ հեռավոր հայրենի՝ տուն, մայրական սուրբ շիրիմ անտեր, ինչ կլիներ, որդեկորույս ու հուսաբեկ՝ կռւնկների երամի հետ դառնայի ես, մորս կողքին մարեի մունջ և իմ ավեր երազներից ալ կակաչներ վեր հառնեին, հուրիրային՝ սրտները սև իմ սրտի պես...»:

Նա զգում է բնության հավերժական շունչը, տեսնում այն գույների մեջ, լսում ձայներով, ամրող հոգով ներսուզվում նրա էությանը, մարդագործում մի աշխարհ, որը մարդկային հարատևող շնչառության տակ, տառապանքի կնիքն իր հոգում, հավերժ պիտի ապրի՝ իմաստավորելով Աղյան գեղագետի արվեստանոցը, որտեղ հեռավոր հայրենի տուն կա, մայրական սուրբ շիրիմ, որդեկորույս հայր, հուսաբեկ կռունկների երամ, ընթերցողի կսկացող սիրտ...

**ԱՍՔ ԷՆ ԼՈՌՈՒ ՉՈՐՎԱ
ՀԱՅՈՅ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՍԻՆ**

Արձակագիր Լևոն Աղյանի «Էն Լոռու ձորն է» էսեն իր գրակածություններից: Անկեղծ մի հիացմունք է պատում հոգուդ, երբ իմանում ես, որ այդ ճանապարհորդության մասին գրվել է ուղիղ քառասունինգ տարի առաջ, երբ երիտասարդ գրող Լևոն Աղյանը Բաքվից գնացել էր իր հայրենի Արցախ ու այնտեղից՝ Դսեղ, որ տեսնի այն վայրերը, որտեղ ծնվել ու մեծացել էր բոլորի համար պաշտելի Հանճարեղ լոռեցին:

«Քառասունինգ տարի է անցել այդ օրվանից,-պատմում է հեղինակը,-ինչքան բան է փոխվել, ինչքան լավ ու վատ օրեր են եղել, լավը՝ քիչ, վատը՝ շատ, ինչքան ջրեր են հոսել: Պարզ է, ավաղ, չկան այլևս բոլոր նրանք, ովքեր տեսել էին Թումանյանին, և որոնց հետ մենք բախտ ունեցանք ժանորանալու այն ժամանակ, լսելու նրանց սրտառուչ պատմությունները մեծ բանաստեղծի մասին: Այդ հին, անրջական օրերից այս գրառումներն են մնացել սոսկ՝ դեղնած, խունացած թղթերի վրա»:

Սահյանական տողերն են իշխում. «Ամեն տարիք ունի իր Թումանյանը, ամեն սերունդ ունի իր Թումանյանը, ամեն ժամանակ, ամեն օր ունի իր Թումանյանը»:

Այո՛, Թումանյանը նա է, ով բոլորին ձգում է, ինչպես այն կածանը, որ նրանց «քաշելով տանում է: Խսկ ամենուր սև մուր է, անտառները լուս են, ձորերը ամպերի տակ խոր քնած են ու էլի լուս են, արդեն հալվում, ցրտում է տաք գիշերը, և այս շուրջբոլոր լոռերյան, այս մուր խավարի մեջ Դերեղն է միայն վշշում»:

Մեծ բանաստեղծը սիրում էր իր կուսական Լոռին, տարված էր նրա գեղեցկությամբ, իսկ գուցե երիտասարդ արձակագրին լոռեցու երազների լո՞յսն էր ձգել այդտեղ, որը նմանվում էր Արցախի իր հարազատ քննաշխարհին. «Քայլում էինք մթան մեջ սպիտակին տվյղ կածանով և լավ էր, որ հատուկենան աստղեր կային դեռ, լավ էր, որ կիսալուսինը կողքի ընկած գնում էր երկնքով, թե չէ ճանապարհը չէր երևա, իսկ այդ ճանապարհը ժայռերի վրայով էր անցնում, ներքեւում ձորեր են՝ անդնդախոր, մթին: Մենք չգիտեինք ճանապարհը, կածանի տուտը բռնած գնում էինք, և մեզ ուղեկցողը աստղերն էին, կիսատ լուսինն էր, և Թումանյանը, որովհետև անհնարին է, որ լինես այս ձորերում ու հոգուդ շիշսի մեծ բանաստեղծը, քեզ հետ չինի նա, չցվես նրանով, չմտածես,

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

որ այս կածանով հազար անգամ անցել է նա»:

Իր ստեղծագործությունների հերոսների նման Թումանյանն էլ միշտ իր սփոփանքը վճռել է հարազար բնաշխարհում, որտեղ լսել է՝ ‘Դերենի միալար Վշշողը, դարավանդին նստած՝ երևի նայել է Լոռու ձորերին, իր սիրտն էլ ցավել է, երբ տեսել է՝ քանդում են ձորերը, որ երկարուղի կառուցեն. «Վյստեղ, այս աստվածանիստ բարձունքին նստած տեսել է, թե ինչպես են «ամպերը դանդաղ ուղտերի նման» ձորից ջուր խմած բարձրանում: Ամպերը անցել են, և երկնի կապույտի մեջ խրված երևացել են լեռները»:

Այդտեղ ապրող մարդիկ ել պարզ են, հասարակ, հայ մարդուն վայել ճշմարիտ նկարագրով, որի լավագույն օրինակն է ծերունին, բարոյական պահվածքով այն գյուղացին, որ սիրով պատմում է Օհաննես աղայի մասին: ««Օհաննեսն ասում էր՝ մարդ պիտի էնակես ապրի, որ մեռնելուց հետո անունը հիշեն: Ինքն էղակես ապրեց»: - Օհաննե՞ս աղա: Ամբողջ կյանքում մի լավ օր չտեսած, հազար ու մի պարտքերի մեջ խրված, ամբողջ կյանքը կողմնակի հոգսերով ծանրաբեռ, ժողովուրդների ճակատագրի ու ազգի տառապանքի ստրուկը,- եզրակացնում է Աղյանը»:

Իմաստուն այդ Հայի հետ հանդիպումը նրանց պիտի տաներ բանաստեղծի տուն-բանգարանը, որ այդ օրերին նորոգվում էր, որտեղ Թումանյանի Վահան Եղբոր աղջիկը՝ Արմենուիխն, «սիրալիր, թումանյանական ժպիտը դեմքին», նրանց դիմավորում է: Խոնարի մի երկյուղածությամբ շուտով նրանք մտնում են այն տունը, որտեղ անցել էր բանաստեղծի մանկությունը: «Սա այն տունն է, ուր ծնվել է Հովհաննես Թումանյանը, սա ձերի ճրագն է, սա շապիկն է, ահա թիկնոցը, ահա կոշիկները, ահա փողկապը, սա խնոցին, սա ամբարը, սա Թումանյանի մոր ճախարակն է: Տունը եղել է հողե կտուրով: ...Քանաստեղծի տուն... գետնափոր, հող» հատակ, լույսը ընկնում է երդիկից, թոնիրը՝ տան կենտրոնում, բերանը տախտակով ծածկած, խնոցին առաստաղից կախ, օրորոցը...»:

Մի՞թե զարմանալի չէ, որ այդ խոնավ ու փոքրիկ տան մեջ էր ծնվել մեծ բանաստեղծը՝ ընտանիքի անդրանիկ զավակը ուր երեխաների մեջ: Հիշենք նաև, որ Թումանյանի մայրը հարս է եղել նահապետական մեծ ընտանիքում՝ բառասուն-հիսուն հոգուց բաղկացած մեծ գերդաստանում: Ընտանիքն ավելի բազմանդամ է եղել նրա սկեսրոջ ժամանակ: Երբ Թումանյանի տատը հարս էր եկել այդ տուն, տանը վարսուն մարդ է եղել, ութը՝ ծեր, ու չի իմացել, թե որն է մեծը, որ առաջ նրան ծա-

Նալուշա Պողոսյան

ուայի: Այդ տաճնն էր ապրել գրողի Օհաննես պապը: Նրա ու իր նախնիների քաջագործությունների մասին Թումանյանը լսել էր տատից ու տաճն մեծերից: Եկվորներ են եղել Թումանյանի նախնիները, բայց նաև հզոր. «Նրանք պարսից Հասան Խանի ասպատակության ժամանակ ժողովրդի գլուխ են անցել, պաշտպանել շրջակա գյուղերի խաղաղ բնակիչներին: Անվանի զինվորական է եղել Թումանյանի Օհաննես պապը ու հայտնի գրուցասեր: Նա իր տաճն պատի տակ, ճանապարհի վրա, տաճներկու քար է տաշել տվել, դրել, որ գյուղացիները գան ու գրույց անեն: Այդ նա, Թումանյանի պապ Օհաննեսն էր, որ Հասան Խանի ժամանակ զնաց ուղտերով հաց բերեց, բաժանեց ժողովրդին, փրկեց նրանց: ...Եվ, վերջապես, նա էր, որ իր հետ առաջին անգամ այս ձորերը մոմ բերեց, հայելի բերեց, նկարներ բերեց ու մի ոռու ջրաղացպան»:

Բանաստեղծի նախնիների կերպարների մեջ մի պահ ընթերցողին երևում են «Հին օրինության» մեջ պատկերված գյուղի անբախտ հայրերն ու պապերը, որ օրինում են իրենց զավակներին և երազում նրանց համար մի ուրիշ լավ կյանք: Մեր ժողովրդի վշտի ու ձգտումների հարազատ խտացումը լինելով՝ այս ստեղծագործությունը վաղուց համարվում է աշխատավոր մարդու մշտական օրիներգը սերունդներին: Բայց այն որքան ափստանքի հնչերանգով է հնչում այս օրերին, երբ մենք էլ՝ պատերազմի բոհուրուսում գտնվողներս, չնայած տարիներ են անցել, նույն վիշտն ենք ապրում, որ մեր անբախտ պապերին տանջող ցավը մեզ էլ է պատել, նույնիսկ անցել մեր սերնդին: Իր նախնիներից եկած լույսն է երեխ բանաստեղծին տարել դեպի պայծառ երազներ, այդ հավատով էլ նա նայել է հայության գալիքին: «Ավելի անվանի ու հայտնի է եղել Օհաննեսի հայրը՝ Ավագին յուլքաշին՝ քաջ ու հաղթանակամ, Լոռու իգիրներից մեկը: Խաչատոր Աբովյանը «Վերը Հայաստանիում» այդ նրա մասին է գրում. «Էս Օվագիմը, էս Լոռվա ձորերի աստվածը, էս սարերի արծիվը... էն սևացած, արևի, անձրևի տակ մուր դառնած ուների տակից, որ աչքը չէր ընկնում մարդի երեսին, էնպես էր իմանում, թե կայծակն ա խիում, ու ասր ու ձոր սևանում էր գլխին, գետինը պտտում, ու ինքը քար դառած մնում առաջին կանգնած»»:

Մանկության օրերի ամենագեղեցիկ շրջանը Թումանյանի համար եղել է Դսեղը, այդ հանդ ու ձորերում է իր կյանքն անցկացրել նաև «Օվագիմի հայրը՝ Մեհրաբը, Լոռու ձորերի նահապետը: Նրանից սարսափում էր թշնամին: Մեհրաբը 108 տարեկանում վախճանվեց: Մեռնիւ ցավով բացականչել է. «Այ փուչ աշխարհ, արժե՞ր երկու օրվա հա-

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

մար ծնվել»»:

Այսան գրողի հիշողության մեջ պիտի մնար Դսեղի իր այդ այցելությունը, և զարմանալի չէ, թե ինչպիսի երկյուղածությամբ պիտի մոտենային Թումանյանի տան մոտ, եկեղեցու քակու գունվող մամռապատ հին քարերին, որոնց տակ հանգչում էին բանաստեղծի նախնիները։ Գյուղի մեծերի հիշողություններում ամբողջանում էր Թումանյան բանաստեղծի ու մարդու կերպարը, ով նոյնպես իր նախնիների նման անվախ էր ու համարձակ։

Կյանքի մայրամուտ ապրող մեկ ուրիշ ծերունու՝ Աքրամ բիծայի խոսքերում ափսոսանք կա կյանքից հեռացած մարդկանց մասին։ «...Հրեն էն քարը Օհաննեսի հոր քարն ա՛ Տեր-Թաղեսոսի։ Օհաննեսը հորը շատ էր սիրում։ «Ամենալավ ու ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ կյանքում, այդ եղել է իմ հայրը...»։ Լավ մարդ էր Օհաննեսի հերը, արինը ջուր անող մարդ էր, վեճ ու կոիվ վերացնող։ Պատվավոր մարդ էր։ Առաջին լամպը գեղումը նա է առել բերել։ Խսկական անունը Ապան է եղել։ Էն մեկն էլ Օվագիմ յուզբաշու քարն ա, էս էլ մեր Սողոնն աղայի քարն ա։ Ամա Օհաննեսը շուտ գնաց, ջահել ջիվան»։

Մինչ ծերունուն բացատրվում էր, որ տուն-թանգարանը շուտով պիտի նշի Թումանյանի ծննդյան 100 տարին, նա նորից ընկնում է հիշողությունների մեջ։ Պարզվում է՝ նա աշխատել է տարիներ առաջ Բարվի նավթահանքերում և «այնտեղ մի դարաբաղցու քատրոնում մեր Անուշին շանց տվին։ Որ տեհա, լաց եկավ։ Դե գեղացիս ա, բեմ ելած խալիսն հավասար լացացնում ա... գեղի կարոտը, հողի կարոտը առա... Օհաննեսը ասում էր, որ Թիֆլիսից Դսեղ եմ գալի, ամեն անգամ, գիշեր ըլի, թե ցերեկ, որ պոեզոյ մտնում ա Լոռվա ձորերը, ծմակներից փշող օդը խուտուտ ա տալի, լցնում թոքերս, զարթնեցնում։ Վեր թռչելով նա ասում էր. «Օրինվես, հող...»։ Էդպիսի բան ա հողը...»։

Գյուղի ծերերի հետ զրոյցը պետք է գրող Աղյանին պատկերանար Թումանյանի աշխարհը, և նրան թվում էր, թե նրանց տեսել էր ինչ-որ տեղ. «...ահա այս մեկը գյուղացի Համբոն է, մյուսը՝ «Հառաշանքի» ծերունին, երբորդը անպայման Սուտլիկ որսկանն է, չորրորդը՝ Գարո բիձան....»։

Ու այդ ծերունիների պատմություններում, նրանց յուրաքանչյուրի հիշողության մեջ երևում էր Թումանյան մարդու հրաշալի կերպարը. «Օհաննեսը, երբ մաքուր մարդկանց մասին էր խոսում, միշտ ասում էր. «Պախրան էն տեսակ զուզակ, անարատ կենդանի ա, որ երբ քարափներից իջնում է ձորը և ջրավազանը պղտորված ա տեսնում, պինչ չի կաց-

Նալուշա Պողոսյան

նում, ջրի մոտ նատում, էնքան սպասում ա, մինչև ջուրը գովալվում առ նոր խմում ա եղ ջրիցը: Մարուր մարդս,-կասեր Օհաննեսը,- միշտ էլ մարուր տեղից ջուր կխմի»: Պախրի պես մարուր մարդ էր Օհաննեսը...»:

Բոլորս էլ զիտենք, որ նա ամենաշատ կարդացվող և բարզմանվող հեղինակներից է, վստահորեն կարող ենք ասել նաև, որ ոչ ոք այնպես չի սիրվել իր ժողովորի կողմից, ինչպես Թումանյանը: Եվ այդ ծերունիների պատճության մեջ Օհաննեսը նրանց երևում էր որպես կենդանի մարդ: «Որ գեղ գար, կիետաքքրքրվեր մարդկանց ապրուտով, երեխաներին կամիետ կտար, հանար բան կաներ բոլորի հետ, ծերերին կնստեցներ, պատմություն անել կտար, ինքը կգրեր»:

Սենք զիտենք, որ նահապետական Լոռին՝ իր շքեղ բնությամբ, սովորույթներով, ինչպես նաև այնտեղ ապրող հիմափորց ժողովուրդը՝ իր ցավերով և ուրախություններով, միշտ էլ եղել է Թումանյանի ներշնչանքի աղբյուրը: Եվ այդ օրը Ամենայն հայոց բանաստեղծի ծննդավայր այցելած երիտասարդ գրողը պետք է արձանագրեր, որ «իր հայրենի սարերից, աղբյուրներից, լեռներից գնացել է Թումանյանը, բայց հոգով ու սրտով իր սարերում ու լեռներում է եղել, աղբյուրների մոտ: Ուր էլ եղել է, կարոտ-աչքի առաջ Դսեղն է եղել, Դսեղի հերանց գնացող արտերը»:

Ծեր գյուղացիները հիշում էին Թումանյանին և խորին հարգանքով էին վերաբերվում նրան, հենց այդ էր պատճառը, որ նրա մասին այդ օրը սիրով պատճում էին գյուղ այցելած հյուրերին. «Նստում-վեր են կենում՝ նրանից են խոտում, նրանից մեջքերումներ են անում, Թումանյանն այստեղ երեխանների հետ երեխա է, մեծի հետ՝ մեծ», և ցոյց են տալիս անտառի մեջ գտնվող լճակը, որին դսեղիները անվանում էին «Ծովեր», այդտեղ Թումանյանը շատ էր եղել, նույնիսկ ուզում էր, որ այդ տեղանատում գրողների հանգստյան տուն կառուցեին: Արմենուի Թումանյանը պետք է ուղեկցեր նրանց այդտեղ, և ահա ճանապարհին նրանք պետք է հանդիպեին այն «հարս» ու «փեսային», որոնց հարսնակի քավորն էր եղել Թումանյանը: Ու այս տարեց լուսեցիների հիշողություններում նորից երևում է Օհաննեսը՝ իր բարի, նուրբ հոգով, գրաւատ, շատ մեծ սրտով. «Օհաննեսը շատ լավ մարդ էր: Էջմիածնա որբերը բերել տանը պահում էր: Մի օր եղ որբերին շատ հերիաքներ ապատմել, ծիծաղացրել ա, հետո, որ որբերը քնել են, ինքը գնացել, պարտեզում նատած լաց ա եղել... ախպերն ա տեսել...»:

Ուսման հարգն իմացող բանաստեղծը երբեմն ուներ իր հիմնավոր պատճառը, թե ինչո՞ւ է դպրոցն անավարտ թողել, դա թերևս նյութական աննախանձելի վիճակն էր, բայց ահա Թումանյանի մասին հիշողու-

Գրողն ու ուսուցիչը.. Ժամանակի մեջ և անդին

թյունը լոռեցի ծերունուն՝ Արտեմ թհձային, տանում է անցյալի գիրկը: «Մի անգամ, եխ որ գեղ էր եկել, գնացինք զանգատ արինք: Առաջ դպրոց չկար, ասացինք, իման էլ դպրոց կա, ամա շատերը իրենց երեխերին դպրոց չեն տալի: Ասաց՝ օրինակ, ո՞վ: Ասացինք՝ Ալեքսին: Կանչել տվեց: Ալեքսին եկավ, թե՝ բարով ես եկել, Օհաննես ջան: Օհաննեսն էլ թե՝ բարիդ եմ եկել: Ես ոճա ա, թեզնից բողոքում են: Երեխերին խի՞ չես դպրոց տալիս, որ աշխարհքի լիսն ու մուրք ջոկեն, գրաճանաչ դառնան, խավարումը չմնան: Ալեքսին էլ թե՝ Օհաննես ջան, չկա, բա որ ըի, դարգիլ չե՞մ, ըրեխա որդի՞ան՝ կա ոչ: Երկուսին ոչխար եմ դարզում, երկուսին կովեր, մինք էշն ու ծին ա պահում, մինք դուռն ու կտուրն ա ավլում, երկուսն էլ՝ գեղ ենք, տուն ենք, պետք են զալիս: Ժողովուրդը տվագ ծիծաղեց, ամա Օհաննեսը ծիծաղեց ոչ: «...Ամեն ինչ անցողական ա, - ասաց Օհաննեսը, - ամա ուսումը չէ. ամեն ինչ կվերանա. տավարն էլ, ոչխարն էլ, ամա ուսումի տվածը՝ չէ: Լավ բան չես անում»:

Ծերունու մոռացված հիշողությանը պիտի ավելանար նրա ծեր կնոջ պատմությունը, թե ինչպես է Ծունանյանի Համլիկ տղան հոր պատվերով նկարել աղբյուրից տուն վերադարձող նորահարսին. «Հարսանիքի մյուս օրը գնացել եմ աղբյուրը՝ Կաթնաղբյուր, մոտիկ ա, կուժն ուսիս գալիս եմ, մեկ էլ տեսնեմ Թումանյանը: Ծանդր մարդ էր, խելոք: Մեծ տղի հետ կանգնած էր: Կուժն ուսիս գալիս եմ, մեկ էլ Թումանյանը տղին ասում ա. «Համլիկ, մեր էս բազա հարսին նկարի՛ր»: Մանչում եմ, ոնց եմ մանչում, երես էրվում ա: Կարացի ոչ փախչեմ, մնացի շշկլած, կանգնած: Թումանյանի տղեն նկարեց, ամա ես տանը ասեցի ոչ. սկեսուրս ձերիցս կրոներ, դուրս կանեք: Էդպես էլ ոչ մեկին ասացի ոչ: Էդպես էլ անցավ գնաց ու շատ բաների հետ էլ էլ եմ հիշում»:

Ծեր ամուսնու հիշողության մեջ երևում են նահապետական սովորություններին զոհ գնացած հերոսների կենդանի կերպարները. «Անուշի մասին գրածն էլ ծիշտ ա: Անուշը Գոգնաց Աքնի աղջիկն ա, շատ սիրուն ա եկել: Սարոն էլ Չոփոնի տղեն ա: Իրար սիրել են, ամա ոչ ախալերն ա ուզել ոչ էլ հերը»:

Ասա նրա պատմած զրոյցում երևում է նորից Օհաննեսը, նա այն-տեղ էր, որտեղ իր կարիքը կար, միշտ էլ աղետի մատնված իր ժողովրդի հետ էր. «Օհաննեսը տղերքի հետ ձի նստած սարում ման գալիս ա ըլել, որ ժողովուրդը կոխվ չանի: Դրա համար էլ Նիկոլը բռնեց Օհաննեսին, տարագ Թիֆլիսա բանտումը նստացրավ, ասավ՝ բո ի՞նչ զործն ա, որ խառնվում ես: Օհաննեսի իինգերտինքը գնացին և բանտից դուրս բերեցին Օհաննեսին: Մի բանի անգամ էլ իմ ծիով ա գնացել սարերը...

Նապաշա Պողոսյան

Են էլ եմ իիշում, որ Օհաննեսը ավլուկ էր ուզում, փիփերտ էր ուզում... Ուղարկում էինք... Են ժամանակ մաշինա չկար, երեք օրումը մինչև Թիֆլիս գնում էինք... Մեզ համար Թիֆլիսիցը յուղա ուղարկել»:

Եվ այսպես ամբողջանում էր Թումանյան մեծության դիմանկարը... Իր էությամբ նա միշտ էլ մնաց հայկական, եղավ իր ժողովրդի տառապանքին կարեկից, դարձավ իր հայրենիքի նվիրյալ զավակը և իր կարծատն կյանքում կարողացավ ապրել բոլորի հոգսերով, և բոլորի համար էլ դարձավ հանուր ու նարդկային. «Մի անգամ էլ գնացի Թիֆլիս, մի տեղով անցնելիս, տեսա մեր գեղացի երկու մարդ գինի են խմում: Ասացին Օհաննեսը հիվանդ ա, գնանք մոտք: Գնացինք: Ծանդր հիվանդ էր: Դուք բաց արինք, տեսանք սեղանը մոտեցրել ա, որ բռնի վեր կենա. Բռնել ա սեղանից, մի քիչ բարձրացել ա ու չի կարողանում շարժվել: Մեզ որ տեսավ, շատ ուրախացավ: «Էդ ոնց ա եղել, որ Ռուսումի խոտը էրվել ա», - տխուր ասաց նա: Միշտ եղաւ կիետաքրքրվեր գեղացիների դարձով»:

Այյան գրողի հիշողություններում այսին մնային Ծովերը, որտեղ նատեցին ստվերախիտ ծառերի տակ, այն ծառերի, որտեղ նստել էր Թումանյանը, նրա հետ նաև՝ մեր մյուս մեծերը: Հետո գնացին նայելու Դիդը, որի մեջ մի ժամանակ Թումանյանն էր լողացել, ապա բարձրացան նրա բարձունքը, որի մասին ծանր հիվանդ բանաստեղծը կարոտով հիշել էր դեռ Մոսկվայում: Բայց չկատարվեց Թումանյանի երազանքը. «Չկարողացավ վերջին անգամ տեսնել Դիդը... Նա Լարաբաղն անգամ չկարողացավ տեսնել: Լեռյին խոստացել էր, իր բժիշկը դարձաղի էր՝ «մի շատ լավ, ազիզ տղա»՝ Գրիգոր Սուլյան, նրան էլ էր խոստացել ու չկարողացավ կատարել խոստումը, չկարողացավ անգամ Ալեքսանդրապոլ մեկնել «Անուշ» օպերայի առաջին ներկայացմանը... Ժամանակ չուներ»:

Վերջում մի քանի խոսքով ուզում եմ ասել, որ «Են Լոռու ձորը» էսեն հեղինակի խորհրդածություններով հագեցած մոտ կես դար առաջվա իրական փաստագրություն է: Թումանյանական ընթերցումներն առայսօր էլ լրացվում են հետաքրքրական նյութերով ու դիտարկումներով, այս նույն տուն-քանչօքարանը, կարծում եմ, ամեն տարի կազմակերպում է հայ մեծ բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությանը նվիրված գիտաժողովներ, միշտ էլ ուշագրավ տեղեկությունները Թումանյանի մասին լրսարանվում են, հետևաբար Լևոն Աղյանի այս ստեղծագործությունն իր արժանվույն տեղը պետք է ունենա քումանյանագիտության հարստացման գործում:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ԽՈՍՔ...

ՈՐՊԵՍ ՄԵՆԱՌԱՋՈՒԹՅՈՒՆ

Բավականին խնամքով եմ պատրաստվում և երկար մտմտում՝ աշակերտների հետ բոլոր այն գեղարվեստական ստեղծագործությունները հրամցնելիս, որոնցից նրանք պետք է նյութ քաղեն: Ինձ թերևս հուզում է նրանց բարոյական ու հոգևոր դաստիարակության, ներքին արժեքների ձևավորման հարցը: Բոլոր դարերում էլ գրականությունը եղել է հասարակության զարգացման առաջատարը, հոգևոր հասունության նշանողը: Զգիտեմ, թե ուսումնավարական նշանակության ինչ ծրագրեր են նշակում մեր պետական բարձր այրերը, բայց զգիտեմ մի բան, մենք՝ ուսուցիչներս, զաղափարախոսություն իրականացնելու գործում շատ ավելի շահեկան դիրքում ենք, որովհետև ամեն օր շփվում ենք մատադ սերնդի հետ, ովքեր հոգևոր սննդի քաղց ունեն:

Ես գեղարվեստական գրականության նյութի մատուցումը վաղուց արդեն դարձրել եմ աշակերտությանը ոչ միայն դեպի գիրքը թերելու, այլև նրանց բարոյական դաստիարակության իրականացման հիմնական մեխանիզմը: Ըստ որում, մատուցվող նյութերը կարող են դուրս լինել նաև ծրագրային նյութերի շրջանակներից: Այս առումով անմասն չեն նաև արցախահայ գրողների ստեղծագործությունները:

Փաստեմ, որ Լևոն Աղյանի ստեղծագործությունների անդրադարձը լայն արձագանք ունեցավ իմ աշակերտության շրջանում: Եվ նրանից շատերը հուզագացմունքային բուռն տպավորվածությամբ արտահայտեցին նրա ստեղծագործությունների այս կամ այն հերոսի կամ իրադարձությունների մասին: Ըստ իս, այդ անդրադարձները յուրատիպ ինքնախսուտվանություններ են, ինչպես իմ՝ ուսուցչիս, այնպես էլ նրա ստեղծագործություններն ընթերցած աշակերտների համար...

Մանկավարժի ոգևորությունից ծնված ներքին մեծ հրճվանք եմ զգում, եթե համոզվում եմ, որ հերթական անգամ հաջողվել է ինձ գրքին մոտեցնել իմ աշակերտներին, ու լավատեսությունս քառապատկվում է: Պատմականություն, ժողովրդայնություն, ազգային ավանդույթներ, կարոսով ու կրակով լեցուն հայրենի եզերը, որի առանցքում Արցախ աշխարհի հայ մարդն է՝ իր անձնական ու անանձնական ցախով, ուրախությամբ, հույզերով ու խոհերով... Արցախ աշխարհի հրաշք բնություն, մաքառումով, բայց նաև ներդաշնակությամբ լցված հայրենի

Նախաշա Պողոսյան

եզերք... այսպիսինն է այդանական խոհը, ապրումն ու ասելիքը:

Ակամայից շատ երկար ճգփող երկխոսություն ստացվեց իմ ու գրող Լևոն Աղյանի հետ: Իրականում չկայացած, բայց իմ խոհերում ու ներքին խոսքում վաղուց խմորված ու հունցված երկխոսություն, որով նոր մտքեր ու մտահղացումներ ունեցա, ապրումների նոր փորձ եփվեց իմ մեջ, կենսադիրքի ու հանողմունքների նոր բարձունք նվաճեցի: Այդտեղ ինձ օգտակար եղան նաև աշակերտներիս «հայտնագործությունները»՝ նրանց մտքի փայլատակումները: Ու եղավ այնպես, որ «Իրիկնային արջամուղ» վիպակի Ծահում տասի հետ դիմավորեցի այգը, նրա հոգսերով միջօրե ապրեցի, ապա անցած կյանքի վերհուշով հասա մայրամուտի գիրկը: Իրականում գեղագիտական կարևոր դերեր կատարեցին Լևոն Աղյանի ստեղծագործությունների գրեթե բոլոր հերոսները, որոնք հորինված չեն, շատ իրական են ու հարազատ, ինչպես մաքւոսյանական արձակում է. «Յուրաքանչյուր իրական մարդ դարերի աշխատանք է, հազար տարվա գրյուրյուն, ծմակուցի ցանկացած մարդու մեջ շեքսպիրյան ողբերգություն կա, շիլերյան ճախրանք, տոլստոյական մաքրություն, էլ ինչո՞ւ պիտի մարդ հորինեմ, կյանք հորինեմ» (Հրանտ Մաքւոսյան, «Ես ես եմ», Եր., 2005, էջ 371):

Ինձ համար կենսունակ ու ապրեցնող եղան բոլոր հերոսները, դիպաններն ու դեպքերը, որոնք կյանքի խորքերում բաքնված հարցադրումներով լինելիության նոր խոհեր ծննեցին իմ մեջ. մերժել թուլությունն ու խեղճությունն, կոփել միտքն ու կամքը, ունենալ աստվածաշնչյան Հորի իմաստնությունն ու համբերությունը...Ու այսպես, այնկողմնային ու անդին, գիտակցական ու անգիտակցական աշխարհում հայ մարդու տառապալից ուղին, արցախահայ գյուղի ու գյուղացու անվերջ մաքառումի պատմությունը, որից ածանցվում է գոյի իմաստնության գաղափարը, ակամայից դարձան իմը, մտան իմ տարածք և երկար ժամանակ դարձան իմ մանկավարժական խոհերի ու գաղափարների ուղեկիցը:

Այյան գրողի բոլոր ստեղծագործություններում էլ ոիքմերն ապրեցնում են: Կյանքի կորուստներն անարցունք մնացած մարդու ճակատը դարձնում են արժանապատիվ ու վեհ, և բնավ անժամանակ ծերացումից կյանքը չի իմաստազրկվում...նա չի ընտելանում խավարին, այլ դառնում է իր ապրած ժամանակների ու դառը իրականության փրկարինը: Այսպես, հենց այսպես են կոփվում ճշշտ մարդու միտքը, հոգին ու վարքը...

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

Ինձ վաղուց հարազատ դարձած, Ալյան, շնորհակալության խոսքեր եմ հղում Ձեզ, որ մեր՝ իրականում չկայացած երկխոսությամբ ես՝ մանկավարժս, յուրօրինակ ձևով պեղեցի իմ ճշնարտությունը, իմ ու արցախցու ինքնությունը, որով կշարունակեմ ճիշտ սնունդ նատուցել աշակերտներիս: Ձեր «Հեռացող եզերք» վեպն ու մյուս բոլոր ստեղծագործություններն ապրիլյան քառորյա պատերազմի դառն ու դժնդակ օրերին հայրենի եզերքս նորովի արժևորելու ու պաշտելու գաղափարախոսության գրական մանիֆեստ դարձան: Ու ես այլևս խենթորեն զգայուն եմ իմ հայրենի ամեն մի թիզ հողի նկատմամբ: Ես իմ քանզ աշակերտության հզր քանակով Ձեր կերտած հայրենի եզերքի վավերական հերոսներն ենք՝ ժամանակի ցնցումներին ականջալուր...իսկ եզերքը սոսկ տարածության մետքոր չէ, այն մեր արժանապատվությունն ու ես-ն է...Շարունակե՛ք ստեղծագործել: Ու թող անսպառ լինի Ձեր տաղանդը....

Հարգանքներով՝ ՆԱՏԱԾԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայկական լրակրական՝ Լու Անջելիսից,

«Մանկավարժի անկյուն», 2017-07-24

http://www.usarmenianews.com/am-n-9325.html

Ուսուցիչն ու գրողը՝ անտեսանելի գրուցակիցներ	3
Լևոն Աղյան հայ տարագիր՝ հեռավոր եզերքից	5
Հայ տարագիր Լևոն Աղյանի հուշարձան դարձած «Հեռացող եզերքը»	7
Մի տխուր «Հեռացող եզերք»	8
Դարավերջի ոճրագործության դատապարտում «Հեռացող եզերք» գրքի վերլուծության շրջանակներում	12
Ուսուցչուհի՝ ես սիրում եմ ձեզ	14
Այդ օրերի միակ փրկությունս այդ գիրքն էր	16
«Հեռացող եզերքի» դաժան գեհենի վկան	18
Տարագիր հայուհու տարեղարձ, որ իմաստավորվել, դարձել էր հայրենիք	28
Ծննդյան օրվա անակնկալ	30
Գիրք, որ պիտի կարդան բոլորը	33
Այն կապույտ, շքեղ կազմով գիրքը	35
Այդ գիրքն ընթերցելիս տաք արցունքները գլորվում էին այտերիս	37
Անցյալում մնացած մի անհոգ մանկություն	39
Կանչում է նրան արցախական մի եղենական բույր	41
Անցած դարավերջի ոճրագործության անխոս վկան	43
Կարդանք ականատեսի այս գիրքը	45
Գիրքի քննարկման հուշ-ցերեկույթ նահատակների հիշատակին	47
Քացում ենք սիրով, ընթերցում՝ հափշտակված, փակում՝ ափսոսանքով	50
«Իրիկնային աղջամուղջի» մի հոյակերտ քանդակ	53
Իրիկնային աղջամուղջի տիբության գույնը	58
Անսահման տիբության մանրաքանդակյա խոհեր	60
Այն հեռավոր ամռան կրակոտ հեռուները	66
Կյանքի մի գիրք և կորցրած մի սեր	71
Նվիրում	73

Գրողն ու ուսուցիչը... Ժամանակի մեջ և անդին

Հեռուներում տարագիր հայերի կարոտի երգն է հնչում	75
Հեռու լեռներում խնկարկվող մի սեր	77
Աշնանային ցրտերում դեզերող սերը	82
Քննարկման թեման՝ դպրոցական սեր	88
Գրքի քննարկում, որ մի նոր կյանքի դպրոց էր ուսուցանում	90
«Աշնանային ցրտերի» մեղադրվող կերպարը	92
Խոհերս հանձնում եմ թղթին	95
Ես նորից դպրոցականների հետ եմ... ուրեմն շուրջս խաղաղ է	97
Տղանարդն արժե այնքան, որքան իր խոսքը	100
Չովասուն թավ անտառի մի հեռավոր վերհուշ	103
Հիացմոնք պարզենող այս գիրքը միշտ մտքիս մեջ կմնա	109
Դպրոցական սիրո մի պատմություն	111
Ե՞վ սիրելն ունի սահման, և՛ ներելը	113
Պատմություն բուխ ճայի, կապուտակ ծովի ու երիտասարդ բանաստեղծի մասին	116
Աշակերտուհու երկիֆեղլկված մտորումները	122
Բնությունը Լոռն Աղյանի արձակում	124
Ասք էն Լոռու ձորվա հայոց մեծ բանաստեղծի մասին	132
Վերջաբանի խոսք... Որպես մենախոսություն	139

ՆԱՏԱՃԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳՐՈՂՆ ՈՒ ՈՒՍՈՒՑԻՉԸ...

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵԶ ԵՎ ԱՆԴԻՆ

Խմբագիր՝	Լուսինե Ղարախանյան
Սլրագրիչ՝	Մարինա Ավամեսյան
Համակարգչային	
շարվածքը՝	Գայանե Խաչատրյանի
Էջադրումը՝	Թանար Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝	Մարինե Սայհյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84¹/₁₆:
Ծավալը՝ 9 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25
Ստեփանակերտ 2017